



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

14678

Handwritten title or header in cursive script, possibly starting with "Königliche" and "Bibliothek".

Königliche
Bibliothek
München

Manuscript



Handwritten text line, possibly a subtitle or a specific reference number.

- 1) "Luz"
- 2) "Luz"
- 3) "Luz"
- 4) "Luz"
- 5) "Luz"

укупителъ

Купителъ

Купителъ

~~Купителъ~~

Купителъ

175

Հ. Մարտի 1883

ՅԱՅՏԱՐԱՐ

ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ

ԸՆԴԴԷՍ

ՀԱԿԱՍ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆՅ

Գ. Ն. ՇԻՄԱՆԵԱՆԻ



Ի ՍԱՄՈՒԷԼԷ Գ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

14678



معارف و نظارت چاپخانه سنک و مصفاة مطبع اوغوشدین

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1883



«Կերպ կերպ և օտարաձայն ուսմունքներով
մի տարուբերիք» :

Եբր. ԺԳ. 9 :

«Զգուշացեք՝ չըլլայ որ մէկը ձեզ գերի վարէ» :

Կող. Բ. 8 :

«Ունեցածդ [ամուր] բռնէ, որ մէկը չառնէ քու
պսակդ» :

Յայտ. Գ. 11:

«Իմ ժողովուրդս գիտութիւն չունենալուն հա-
մար բնաջինջ եղաւ» :

Ովս. Դ. 6 :

«Իուք մոլորած էք, որ ոչ գիրքերը գիտէք և
ոչ Աստուծոյ զօրութիւնը» :

Մասք. ԻԲ. 29 :

«Ասոր համար աշխարհ եկած [եմ,] որ ճշմար-
տութեան համար վկայեմ. ան ամէնը որ
ճշմարտութենէն է՝ իմ ձայնիս ականջ կը
ղնէ» :

Յովհ. ԺԸ. 37:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր

Ճ Շ Մ Ա Ր Տ ՈՒ Թ Ե Ա Ն



Ծանօթ. (Այս գրութեան մէջ Սուրբ Գրոց բնա-
բաններուն մէջի նօսր գրով բառերը այս []
նշանով ցուցուած են, սրոյնեկու համար անոնց-
մէ՛ որ մեր կողմանէ յատկապէս նօսր գրով դըր-
ուած են, որպէս զի այն բառերուն յատուկ ու-
շաղբութիւն արուի, թէեւ Սուրբ Գրոց մէջ նօսր
գրով չեն գրուած: Ա. Գ. Վ.)

Իրաւ է որ ճշմարտութիւնը քաջ ճանչողն ու
Սուրբ Գրոց վարդապետութեանց ոգւոյն խելամուտ
եւ վերահասու լինողն, կամ այնպիսի մէկը որ գի-
տէ թէ ինչ են Գրիստոնէական կրօնին հիմնական
եւ էական վարդապետութիւնքն, հաւանական չէ՛
որ վրդովի երբ այլ ընդ այլոյ ձայներ կը լսէ աս-
տի եւ անտի, այլ՝ անշարժ եւ անդրդուելի կը
մնայ իւր դաւանութեան եւ Յիսուս Քրիստոսի,
յաւիտենական վէմին վրայ, զի « գիտէ թէ որն
է հաւատացեր »: Սակայն այնպիսիք որ ճշմարտու-
թեան վրայ քաջ ծանօթութիւն ստացած չեն, եւ
իրենց Գրիստոնէութիւնը կամ անոր վրայ ունեցած
համոզումը ըստ զիսկաց եւ ծանծաղ է, եւ խոր
արմատ չէ՛ արձակած մտաց, սրտի, եւ զգացմանց
մէջ, երբ իրենց արդէն գիտցած եւ ընդունածէն
տարբեր վարդապետութիւնք կը լսեն՝ կը չիտթին,
կը վրդովին եւ ճշմարտութենէ խախտելու վտան-
գի մէջ կ'իյնան: Այսպէս եղաւ մօտ օրերս Հայ-Ա-
ւետարանական ժողովրդեան ոմանց անհատից մէջ,

յորմէ հետէ Մկրտութեան քարոզիչ մը յերեւան ե-
լած է՝ ի կոստանդնուպօլիս եւ շրջակայքը, որ Սուրբ
Գրոց մի քանի բնաբանները իւր ձեռքին մէջ գոր-
ծիք ընելով, եւ անոնց քմահաճ մեկնութիւններ
տալով, դայթակղութիւնք կը յարուցանէ աստ եւ
անդ, եւ սարգամիտ քրիստոնեայքը հոգեւոր
կրօնքէն եւ ճշմարտութենէն կը խտորացունէ, որք
կրնան ըսել իրաւամբ՝ իրենց հոգեւորական եւ մա-
քուր կրօնին համար այն եղանակաւ, որ Հռովմա-
յեցի հարիւրապետը պատասխանեց Պօղոս առա-
քելոյն, թէ «Ես շատ ստակով ձեռք բերի այս քա-
ղաքացիութեան իրաւունքը»: Գործ. ԻԲ. 28:

Պ. Աւետարանիչ (ինչպէս կը կոչէ ինքզինք Պատ.
Գ. Ն. Շիշմանեան) կը պարծի թէ ինք չընդունիր
մարդկային դրութիւնք, մեկնութիւնք, Սատուա-
ծաբանութիւնք, եւայլն. բայց իւր նորօրինակ վար-
դապետութիւնքն հաստատելու համար կը մեկնէ
Սուրբ Գրոց խօսքերը ըստ քմաց, եւ բռնազբօսե-
լով դայնա, մեկնելու իրաւունքը միայն իւր անձին
կը վերապահէ, եւ իրմէ զատ ուրիշներէն կը զլս-
նայ այդ արտօնութիւն, չգիտեմք որով իրաւամբ:

Յայտնի յայտնի Պօղոս առաքեալին ոգիէն տար-
բեր ոգւով վարմունք մը կը տեսնուի իւր ընթաց-
քին մէջ, քանզի մինչ Առաքեալը կ'ըսէ, «Քրիս-
տոս զիս մկրտելու չզրկեց, այլ Աւետարան քա-
րողելու», (Ս. Կորնթ. Ա. 17), սա այնպէս
կը վարի որ իբր թէ կ'ըսէ ընդհակառակն «Քրիս-
տոս զիս մկրտելու չզրկեց յաւէտ, քան թէ Աւե-
տարան քարողելու»: Չի իւր գլխաւոր խօսելու
նիւթը, բանը գործը՝ մկրտութիւն քարողել է: Եւ

այնպիսի ծայրայեղ եւ Աւետարանական ոգւոյն եւ
ուղիղ բանի հակառակ մեկնութեամբ եւ վարդա-
պետութեամբ, որ ուշի ուշով գննող մը չկրնար
չհորձուիլ ըսելու թէ՝ այս Աւետարանիչ կամ ան-
տեղեակ է ճշմարտութեան, կամ իւր դատողու-
թիւնը թիւր եւ փաստեալ, եւ կամ՝ մասնաւոր
դիտմամբ կը խօսի ընդդէմ ճշմարտութեան:

Դիտողութեան արժանի է սա պարագան, որ
մինչ այս անձը այնչափ իւր մտադրութեան մասնա-
ւոր նիւթ ըրած է մկրտութեան մատակարարուելու
ժամանակն ու կերպը, նոր կտակարանին հեղի-
նակները այնպէս կը վարին այս մասին, որ իբր թէ
այնչափ կարեւոր եղած չըլլար այն, զի լռելէ այն
կ'անցնին այն բաներուն վրայ՝ զորս մեր այս բա-
րեկամը Քրիստոսի Եկեղեցւոյն մէջ այս աստիճանի
յուզմունք յարուցանելու առիթ ընել ուզած է: Եւ
մեզի շատ դարմանք կը պատճառէ իւր այս անպա-
տեհ եւ անտեղի ընթացք, խորհելով որ եթէ
այդչափ մեծ կարեւորութիւն ունին իւր ըրած
բժանիչութիւնք, ինչո՞ւ ուրեմն Պօղոս առաքեալ
կ'ըսէ, «Քրիստոս զիս մկրտելու չզրկեց, այլ Ա-
ւետարան քարողելու»: Որ եթէ այս Աւետարան-
չին ըսածին կամ ներկայացուցածին պէս ըլլային ի-
րերը, բնաւ այսպէս պիտի չխօսէր, այլ իւր մեծ
ուշադրութիւնը մկրտութիւն քարողելու եւ մկրտե-
լու պիտի տար եւ այդ պիտի կազմէր իւր գործին
մեծագոյն մասը: Ինչո՞ւ ուրեմն կ'ըսէ Պօղոս ա-
ռաքեալ. «Կը գոհանամ Սատուծմէ, որ ձեզմէ մէ-
կը չմկրտեցի», (Ս. Կորնթ. Ա. 14) եւայլն. որ
եթէ այս քարոզչին մկրտութեան վրայ ունեցած

տեսութիւնը շիտակ եղած ըլլար, այս առթիւ ոչ թէ գոհութիւն պիտի տար Աստուծոյ, որ կորըն- թացուց եկեղեցիէն մէկը չմիտեց բաց 'ի մի քանի անձերէ, այլ ընդհակառակն պիտի ցաւէր յոյժ որ այդ պարտաւորութիւն զանց էր ըրեր, եւ կամ առիթ չէր ունեցեր զայն կատարելու, եւ որ թե- րի գտնուեր էր այսպէս՝ իւր պաշտօնը հաւատար- մութեամբ կատարելու մասին: Եւ ահա իրեն ժա- մանակ եւ պատեհութիւն էր, քանի որ մկրտու- թեան նիւթը բացուեր էր, խօսիլ անոր մատակա- րարելու ժամանակին, եղանակին եւ անոր ազդեցու- թեան եւ սրբարար ներգործութեանց ու արդեանցը վրայ 'ի վերայ մարդկային հոգւոյն եւ սրտի, եւ ա- տով «Աստուծոյ որդեգրութեանն ընդունուելու», եւ այլն, վրայ: Բայց ինչ զարմանք, որ բողոքովին լռելեայն կ'անցնի այդ բաներուն վրայ, եւ այնպէս մը կը խօսի մկրտութեան վրայ՝ որ իբր թէ այն մի քանի անձինքն ալ մկրտելուն զղջացեր է, եւ իւր գո- հութիւնը կը յայտնէ որ անոնցմէ մէկը չէր մկրտած: Ինչո՞ւ համար ուրեմն Պօղոս առաքեալ՝ որ երկու աւետարանի պաշտօնէից ու եկեղեցեաց վրայ ձեռ- նադրեալ եպիսկոպոսաց կամ հովուաց՝ Տիմոթէոսի եւ Տիտոսի երեք թուղթ ուղղած է, եւ որոց մէջ այնչափ հրահանգներ ու խրատներ կու տայ նոցա կարեւոր եւ ծանր պատասխանատուութեան են- թակայ եղող պաշտօնին վրայ, որ երբեմն ըսած է նաեւ «Աւետարանիչ քորժ քորժ» (Բ Տիմ. Դ. 5), ինչո՞ւ համար, կ'ըսեմ, մկրտութեան վրայ, զայն որո՞ց, երբ եւ ինչ եղանակաւ մատակարարելու վրայ երբէք բան մը չխօսիր, մինչ խրատներ եւ

հրահանգ կուտայ անոնց, մանրամասնաբար նկա- րագրելով թէ որպիսի յատկութիւնք կը պահան- ջուի եպիսկոպոսէն եւ Տէրոջ ծառայէն, թէ ինչ- պէս պտըտելու է Աստուծոյ տանը՝ այսինքն եկե- ղեցւոյն մէջ, թէ ինչպէս վարուելու է ծերոց հետ, որբեւարիներու հետ, դեռահասակ կանանց հետ, եւ մինչ կը խրատէ զՏիմոթէոս, ըսելով, «Խօսքը քարոզէ, մտադրութեամբ քորժի՞ր պարսպէ, ատե- նին ու ատենէ դուրս յանդիմանէ՛, սաստէ՛, յոր- դորէ՛ ամեն երկայնատուութեամբ ու վարդապետու- թեամբ...: Բայց դուն ամեն բանի մէջ արթուն կեցիր, նեղութիւններու համբերէ, աւետարանիչի գործ գործէ, քու պաշտօնդ կատարէ», եւ այլն. (Բ Տիմ. Դ. 2. 5), ինչո՞ւ համար այս մեր Աւե- տարանչին սեպհական պաշտօնին, այսինքն մկրտու- թեան վրայ բնաւ բան մը եւ ոչ իսկ մէկ բառ մը անդամ չխօսիր: Այս խիստ զարմանալի չէ՞ Պօղոս առաքելոյն նման նախանձաւոր հաւատարիմ, պեր- ճախօս եւ փաստաբան պաշտօնէի մը համար:

Բայց Պօղոս առաքեալին այս մասին լռութիւն պահելուն վրայ խօսելով, ըսել չենք ուզեր թէ նա անկարեւոր բան կը համարէր զմկրտութիւն. քաւ լիցի: Եւ մեք եւս կը համարինք զայն սուրբ խոր- հուրդ մը՝ որ իւր տակ կը պարունակէ հոգեւոր նշանակութիւն, իմաստ, որ նոյն ինքն Յիսուս Քրիստոս ուսոցց եւ պատուիրեց մկրտել զամենայն հաւատացեալս 'ի Քրիստոս. այլ իմաստ բանիս այս է թէ մկրտութիւնը պէտք է իւր արժանաւոր տեղը գրաւէ Քրիստոնէական եկեղեցւոյ վարդա- պետութեանց եւ արարողութեանց կարգին մէջ,

ոչ առաւել բարձր, եւ ոչ առաւել ցած, եթէ ոչ՝
փրկութեան մեծ գործին կարգադրութիւնը վեր
'ի վայր կը յուզուի, տակն 'ի վերայ կ'ըլլայ, եւ
այսպէս հաւասարակչութիւնը կորսուելով՝ այս
միջոց շնորհացն՝ կ'ըլլայ փնասարբեր եւ կորուսիչ
հոգւոց:

Պ. Աւետարանիչ չափահաս անձանց մկրտու-
թիւնը միայն վաւերական լինել կը վճռէ, եւ իս-
պառ կը մերժէ մանկամկրտութիւնը: Եւ կարծես
թէ նորութիւններ ներմուծելու լոկ տենչով, ման-
կանց մկրտութիւնը մերժելու հետ միասին՝ ինչ ինչ
վարդապետութիւնք եւս կցած է անոր հետ,
գորս եւս վճռական ոճով կը ճգնի հաստատել,
այնպիսի վարդապետութիւնք եւ խնդիրք, որ
Քրիստոնէութեան սկզբնաւորութենէն հետէ ի-
մաստուն եւ բարեպաշտ մարդիկ զանոնք լուծելու
կամ իրենց ձեւացուցած գաղափարը անոնց վրայ
արտայայտելու մասին մեծ գգուշաւորութեամբ
վարուած են: Բայց նա կը դնէ՝ այս վարդապե-
տութեանց մեկնութիւնն. ու խնդիրը այսպէս իւր
մկրտութեան քարոզութեանն հետ, որպէս զի,
գոգքես, արդարացունէ իւր նորօրինակ դրութիւն,
ներկայացնելով զայն իբրեւ բոլորովին տարբեր
բան մը, որպէս թէ այն նպատակաւ որ Աւետա-
րանական մանուկ եւ տկար եկեղեցեացս մէջ բա-
ժանում ու պառակտում ձգէ, եւ հերձուածք յա-
րուցանէ:

Բայց յայտնի է որ Հայաստանեայց Աւետարա-
նական եկեղեցին՝ չայնդեր թէ անշուշտ մարդ մը
մանկութեան մէջ մկրտուելու է, եւ թէ մանկու-

*այլ ո՛ր համայնքը եւ կրօնական մեզ անտեսելու աւել
ապագայի յազարմարման աւելց կրօնական զգոյշ
համայնքներէն:*

թեան մէջ չմկրտուողի մը չափահաս եղած ժամա-
նակի մկրտութիւնը վաւերական չէ՛, եւայլն, ին-
չու որ հոգեւոր մաքրութեան, մեղաց թողութեան
եւ կամ Աստուծոյ որդեգիր ըլլալու, եւայլն, մա-
սին, մկրտութեամբ եւ ջրով լուացմամբ այդպիսի
բան մը չիրնալ լինելուն քաջ համոզուած է, եւ
զայն կը նկատէ իբրեւ լոկ արտաքին նշան եւ կնիք
ուխտին ընդ Աստուծոյ, սոսկ դաւանութեան ա-
րարողութիւն մը՝ որով մկրտեալը Քրիստոսի կը
նուիրուի « Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն
Սրբոյ » մկրտուելով: Եւ ըսածիս ուղիղ լինելուն
ապացոյց կը բերեմ բազում Քրիստոնեայ եւ բարե-
պաշտ անձինք, որ իրենց զաւակները չեն մկրտեր
'ի մանկութեան նոցա, ըսելով թէ անոնք երբ չա-
փահաս ըլլան թող անձամբ իրենք զիրենք նուի-
րեն Քրիստոսի: Դարձեալ նկատելի բան մ'ալ այս
է որ, այս մանկանց մկրտութիւնը յետաձգողք ոչ
մոլորեալ կը համարուին իրենց հաւատակիցներէն՝
եւ ոչ ալ ստիպում մը կ'ըլլայ իրենց՝ որ զաւակին
մկրտել տան 'ի մանկութեան, այլ իրենց ազատ
ընտրութեանն թողուած է այդ: Թէ ինչո՞ւ համար
ազատ կրնան թողուիլ Քրիստոնեայք եւ հերետի-
կոս չհամարուիլ երկուստեք, իրենց զաւակունքն
'ի մանկութեան մկրտելով կամ թողով որ նոքա 'ի
չափ հասակի ժամանեն եւ բուն իրենք իրենց հա-
մար ուխտեն Քրիստոսի նուիրուիլ եւ մկրտուիլ,
ճշմարտապէս « ազատամիտ » անձի մը վայել ըն-
թացք է: Զի ո՞վ կարող է համարձակիլ որոշել վրձ-
ուել այնպիսի խնդրոց վերաբերեալ բաներ, որք 'ի
Սուրբ գիրս պարզ եւ որոշակի յայտնուած չեն, եւ

*Յայտնի է իմ օրագրումս որ ես իմ կրօնական համայնքս
մեզ անտեսելու աւելց կրօնական զգոյշ համայնքներէն
մեզ անտեսելու աւելց կրօնական զգոյշ համայնքներէն*

ոչ ալ բացարձակ հրաման մը կամ հրահանգ տրուած է անոնց նկատմամբ: Իրաւ, մկրտութեան վրայ Սուրբ Գրոց մէջ այսպէս կը կարդանք.

« Ուրեմն գացէք բոլոր ազգերը աշակերտեցէք, մկրտեցէք զանոնք յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ »: Մատ. ԻԸ. 19:

« Գացէք բոլոր աշխարհ, ու աւետարանը քարոզեցէք բոլոր ստեղծուածներուն: Ան որ հաւատայ ու մկրտուի, պիտի փրկուի, եւ ան որ չհաւատայ, պիտի դատապարտուի »: Մարկ. Ժ. 9. 13, 16:

Եւ հոս մկրտուելու պայման կը դրուի հաւատաւը, եւ կրօնքը նոր քարոզուած ժամանակը հաւատացեալք 'ի չափ հասակի պիտի մկրտուէին բնականապէս, զի նոքա Հրէութենէ կամ Հեթանոսութենէ դարձող եւ խելքերնին գլուխնին եղող անձինք կ'ըլլային հարկաւ եւ հաւատալու ալ կարող, այնպէս որ հաւատացողին պայման դրաւ Փրկիչն մեր՝ մկրտուիլ ալ, եւ մկրտուողին նախապէս հաւատացած լինել: Բայց ո՞վ կրնայ պատշաճապէս ըսել թէ հաւատալու այս պայման վասն մկրտութեան, մանկանց ալ կը վերաբերի, զի նոքա հաւատալու կարող չեն:

Բայց մանկունքը հաւատալու կարող չըլլալուն համար կրնայ վճռուիլ թէ նոքա մկրտուելու չեն, զի հաւատալու պայմանը միայն չափահաս անձանց կը պատկանի:

Փրկուելու համար միակ պայման է դրուած 'ի Սուրբ Գիրս՝ հաւատալ: Բայց մանկունք որ կարող չեն հաւատալու, ինչ պիտի ըլլայ, պիտի կորսուին վասն զի չեն կրնար հաւատալ: Բոլոր լուսամիտ

Քրիստոնեայք կ'ընդունին թէ մանկունք եթէ մեռնին մանկական հասակի մէջ՝ կը փրկուին: Ինչպէս որ Պ. Աւետարանիչ եւս կ'ընդունի զայս. ըսելով « Քանզի արդէն ատանկներուն է երկնից թագաւորութիւնը »: (Չայն, երես 5. Նաեւ Մկրտութեան երես 30):

Եւ արդ՝ մինչ փրկուելու համար հաւատը կը պահանջուի 'ի Սուրբ Գիրս, իբրեւ էական պայման, բայց մանկունք առանց հաւատալու կը փրկուին, ինչո՞ւ համար մանկունք չմկրտուին առանց հաւատալու:

Քիչ մը վերը ըսածնուն իմաստն այս էր թէ 'ի Սուրբ Գիրս պարզ եւ բացայայտ եղանակաւ չը յայտնուած խնդիրները քրիստոնեայք այս կամայն կերպով կրնան հասկընալ, ըստ բանի Առաքելոյն թէ « Թող ամեն մարդ իր միտքը հաճեցունէ »: Հռովմ. Ժ. 9. 5: Եւ թէ՛ այսպիսի խնդրոց կարգէն է նաեւ մանկանց մկրտութիւնը եւս: Եւ ըսինք ալ թէ ստիպում չկայ մեր եկեղեցեաց մէջ որ եւ իցէ քրիստոնէի իւր զաւակը 'ի մանկութեան կամ չափահաս եղած ատեն մկրտելու մասին: Եւ ըստ որում բանը այս վիճակին մէջ է, չենք կրնար ուրանալ թէ պատճառն այն է որ երկու դաղափարին ալ 'ի նպատտ բաւական փաստեր կրնան յառաջ բերուիլ, այսինքն թէ մարդ մը 'ի մանկութեան մկրտուելու է թէ չափահաս եւ հաւատալու կարող վիճակին մէջ: Ասոր հետ մէկտեղ ուրիշ ծանրակիւ պարագայ մ'ալ կայ որ պէտք է 'ի նկատի առնումք այն եւս, եւ է քրիստոնեայ այլ եկեղեցեաց մեծամասնութեան սովորութիւնքն այս մա-

սին, մանաւանդ մեր ազգային Լուսաւորչական եկեղեցւոյնը: Պապական, Յունական եւ Լուսաւորչական եկեղեցիք հանդերձ մկրտութեան կարեւորութիւն ընծայող համայն Աւետարանական եկեղեցեօք, բաց 'ի Մկրտիչեանց եւ այս «Աշխիբոտ» կամ «Քիճիկեան» կոչուած նոր յարանուանութեանէն, ամենն ալ մանկանց մկրտութիւնը կ'ընդունին: Նաեւ այս եւս չպարտի մեր տեսութենէն վրիպիլ որ մանկամկրտութեան 'ի նպաստ փաստերը աւելի զօրաւոր են՝ քան որչափ հակառակ կողմանը:

Եւ ահա հոս թարգմանելով կը դնենք զիտնական գրուածք մը սոյն նիւթոյս վրայ, իրրեւ փաստք մանկանց մկրտութեան օրինաւոր եւ վաւերական լինելուն:

« ԹԷ ՈՐՈ՞ՆՔ ՄԿՐՏՈՒԵԼՈՒ ԵՆ ՔՐԻՍՏՈՆԷՍԿԱՆ ՄԿՐՏՈՒԹԵԱՄԲ: »

« Հաւատացեալ եւ ուխտին նուիրեալ ծնողաց մանուկներուն մկրտութեանն 'ի նպաստ՝ սս հետեւեալ փաստերը կրնան յառաջ բերուիլ:

1. Այս պարտաւորութիւն (զմանկունս մկրտելու,) ինքնին բանաւոր է եւ համաձայն մարդկային զգացմանց: Մասնաւոր համակրութիւն կը դրանք այն անձանց զաւակներուն, զորս կը սիրենք: Եւ կրնանք ենթադրել թէ Աստուած՝ ուխտիւք իրենն նուիրեալ իւր ծառայից զաւակացը վրայ մասնաւոր սէր չզգայ:

2. Անցեալ դարուց մէջ Աստուծոյ մարդոց հետ

ըրած ուխտին վերարանութիւնը 'ի նպաստ մանկանց մկրտութեան վարդապետութեան է: Բոլոր այն ուխտերուն մէջ որ Աստուած ըրած է ցարդ, մանկունք եւս կապակցեալ են իրենց ծնողաց հետ: Զոր օրինակ, Աղամայ, Նոյի, Աբրահամու եւ Դաւթի հետ ըրած ուխտին մէջ: Աստուած Դովտայ զաւակաց բարիք ըրաւ իրենց հօրը համար, եւ կ'ըսէ թէ ուխտ կը պահէ զինք սիրողներուն հետ « մինչեւ հազար ազգը »: Ուրեմն սրչափ հակառակ է հաւանականութեան, որ Քրիստոնէական եկեղեցւոյ ուխտին մէջ Աստուած շեղած ըլլայ իւր ուխտին անայլայլակ ընթացքէն, եւ խզէ հաւատացեալ ծնողաց ու անոնց մանկանց մէջ սեղն եղած յարաբերութիւնը:

5. Եթէ Աւետարանին Տեսեսութեան տակ մանկունք դժուրս ձգուած ըլլային նախնի եկեղեցւոյն մէջ, եւ մասնակցութիւն չունենային ուխտին մէջ, հաւատացեալ Հրէայ ծնողք պիտի տրտնջէին անտարակոյս: Առաքելոց օրերը հազարաւոր Հրէայք հաւատացին, եւ « Օրէնքին նախանձաւոր էին ամենն ալ »: Նոքա որ մինչեւ իսկ իրենց նախնի բնունց այնպէս սրտանց յարեալ էին, լռիկ եւ հաճութեամբ եւ առանց տրտնջելոյ պիտի թողուին իւրեանց սովոր եղած արտօնութիւնը: Այսու ամենայնիւ դանդաւորանաց մէկ բառ մը իսկ լսած չենք այս բանիս նկատմամբ: Եւ ո՞չ իսկ մէկ առարկութիւն մը կայ ոչ բարեկամէ եւ ոչ թշնամիէ այս մասին՝ ընդդէմ Աւետարանի: Վասն որոյ բարոյապէս ստոյգ է թէ նկատմամբ ուխտի յարաբերութեանց եւ արտօնութեանց, « անոնց զաւա-

կուները առաջուան պէս էին» դարձեալ: Երեմ. 1. 20:

4. Հետեւական ձեռնարկութիւն մի է 'ի նպաստ մանկավարտութեան սա բանս, թէ հիմա Արարութեանը լիփսութեան պէրը որոտած է:

'ի պաշտպանութիւն այս նախադասութեան՝ կըրնայ նկատուիլ թէ՛


(1) Տեսանելի եկեղեցին էականապէս նոյն է երկու տնտեսութեանց մէջ ալ: Երկուքին էականապէս ունեցած են նոյն վարդապետութիւններն, վայելած են նոյն հոգեւոր խոստմունքներն, եւ նոյն կրօնը դաւանած են, այն է Աստուածաշունչ գրոց կրօնը: Հին կտակարանի կրօնքը նոր կտակարանի կրօնքէն տարբեր չէ՛, ինչպիսի են Պրահմայի կամ հեթանոսաց կրօնքները: Բոլոր էական մասնաւորութեանց մէջ, նոյն են, եւ եկեղեցին յամենայն դարս այնպէս դաւանած է:

Եկեղեցին երկու տնտեսութեանց մէջ ալ իբրեւ միեւնոյնն ըլլալ ներկայացուած է, Սուրբ գրոց մէջ այլեւայլ տեղեր: Հին կանխաձայնութիւնք՝ նկատմամբ Հեթանոսաց ժողովուրդուն, եւ եկեղեցւոյ ապագայ յաջողութեանն ու փառաց, եղած են ոչ թէ Աւետարանի տակ հաստատուելիք նոր եկեղեցւոյ մը վրայ, այլ նոր կոտորանի Սիւնի վրայ, որ այն ժամանակը իսրայէլի մէջ եղած եկեղեցին էր: Տես Եսայ. 4. եւ Խթ. 20, 22: Փրկիչն մեր նախաձայնեց թէ շատերը «պիտի գան արեւելքէն ու արեւմուտքէն, եւ պիտի նստին Արրահամու, իսահակայ եւ Յակոբայ հետ», նոյն «Երկնից թագաւորութեան մէջ», նոյն «տեսանելի եկեղեցւոյն մէջ», ուստից «թագաւորութեան

որդիքը,» Հրէայք «դուրս պիտի ձգուին». եւ թէ նոյն «Աստուծոյ թագաւորութիւնը,» որուն անհաւատարիմ եղան Հրէայք, «պիտի առնուի անոնցմէ, եւ տրուի ազգի մը՝ որ անոր պտուղները բերէ»: Մատթ. Ը. 11, 12: ԻՍ. 43: Այս կանխաձայնութեանց կատարեալ համաձայնութեամբ, Պողոս առաքեալ կը ներկայացնէ զհեթանոս հաւատացեալս իբրեւ պատուաստեալ Ֆեւոնի ձիթեւոյն վրայ, ուստից Հրէայք կտրուեցան իրենց անհաւատութեանն համար, եւ որոյ վերայ հաւատացեալ Հրէայք դարձեալ պիտի պատուաստուին: Հռովմ. ԺԱ. 17: 'ի նկատի առնելով այս պարագայները, ոչ ինչ առաւել ստոյգ է քան զայս, թէ տեսանելի եկեղեցին, երկու տնտեսութեանց մէջ ալ էականապէս մի եւ նոյն մարմինն է: Սակայն մկրտութիւնը հիմա տեսանելի եկեղեցւոյն այն է, ինչպէս յառաջագոյն թլիսատութիւնն էր, այսինքն՝ հաստատեալ անհրաժեշտ պարտաւորութիւն մը: Հետեւապէս մկրտութիւնը թլիսատութեան տեղը փոխանակեալ է:

8
14678

(2) Եկեղեցւոյ «Խորք երկու տնտեսութեանց մէջ ալ էականապէս նոյնն եղած է: Այս՝ քաջայայտ է եկեղեցւոյ նոյնութեան: Եկեղեցին հաստատուած է նոյն ուխտիւ, այնպէս որ, եթէ առաջինը անփոփոխ է, վերջինն ալ այնպէս ըլլալու է: Եկեղեցւոյ ուխտը նախկին տնտեսութեան տակ՝ Արրահամու հետ եղած սխտան էր: Հետեւապէս, այս՝ իւր կոտորեալ եւ հոգեւոր նշանակութեամբ պարտի նկատուիլ իբրեւ այժմեան եկեղեցւոյ ուխտը: Արրահամու հետ եղած ուխտը բնաւ չջնջուե-



ցան : Հին կտակարանին մէջ կը կոչուի այն՝ իբրեւ « Յաւիտեանական », եւ նորին մէջ՝ իբրեւ « Յաւիտեան տեւող » : Ծննդ. Ժ. 7 : Դուկ. Ա. 55 : Պօղոս կը ներկայացունէ զայն իբրեւ « ուխտ խոստման », եւ իբրեւ « հաստատեալ Աստուծոմէ՝ Քրիստոսով : » Եւ մեզի վստահութիւն կը տրուի թէ « Օրէնքը որ չորս հարիւր երեսուն տարի ետքը դժուրեցաւ, չկրնար խափանել զայն » եւ ապարդիւն ընել : Գաղ. Գ. 17 : Հաւատացեալք ընդ Աւետարանաւ, կը ներկայացուին իբրեւ որդիք ուխտին ընդ Աբրահամու : Գործ. Գ. 25 : Այս ուխտին մէջ մասն ու բաժին ունենալնուն համար է, որ նոքա կը կոչուին « Աբրահամու սերունդ : » (Գաղ. Գ. 29 :) եւ որ Աբրահամ այնչափ յաճախ կը ներկայացուի իբրեւ « Հայր ամենայն հաւատացելոց : » « Նա թլիստութեան նշանն առաւ, էֆրէ- կնիք անթլիստութեան ատենէն անեցած հաւատքին արդարութեանը, որ ինքը հայր ըլլաց այն բոլոր հաւատացողներուն : » Հռովմ. Գ. 11 :

Յայտնի է ի Սուրբ Գրոց, ինչպէս հոս կը տեսնուի, թէ եկեղեցոյ ուխտը, նման նոյն իսկ եկեղեցոյ, էականապէս նոյն եղած է երկոքին տընտեսութեանց մէջ, եւ թէ՛ այս ուխտը Աբրահամու հետ եղած ուխտն է : Բայց ինչպէս որ թլիստութիւնը ՚ի նախնու մն տեսանելի նշան էր հին ուխտին, մկրտութիւնն ալ նշան է նոր ուխտին : Ապա ուրեմն մկրտութիւնը թլիստութեան տեղ դրուեցաւ :

(3) Մկրտութիւնն ու թլիստութիւնը ճիշդ թէ և նոյն նշանակութեանն ասին : Թլիստութիւնը թէ՛ նշան

էր, եւ թէ՛ կնիք : Իբրեւ նշան՝ կը ցուցնէր սրտին թլիստութիւնը կամ վերածնութիւնն, « թլիստութիւն արքիւն հոգեով եւ ոչ գրով, » Հռովմ. Բ. 29 : Իբրեւ կնիք՝ կը հաստատէր « հաւատքին արդարութիւնը » կամ շնորհաց ուխտը. Հռովմ. Գ. 2 : Մկրտութիւնն ալ թէ՛ նշան է եւ թէ՛ կնիք : Իբրեւ նշան՝ օրինակ է վերածնութեան լաւացմանը, կամ Հոգւոյն Սրբոյ մկրտութեանը : Իբրեւ կնիք՝ զայն ընդունողներն՝ որոց բնութիւնը անոր սրբազան նշանակութեանը համաձայն է, կը վստահացունէ թէ հաւատքին իրենց արդարութիւն պիտի սեպուի : Այսպէս կը տեսնուի, թէ երբ ուխտին հին նշանը խափանեցաւ, կարգադրութիւն մը սահմանուեցաւ, նոյն եկեղեցոյն մէջ եւ նոյն ուխտին ճիշդ նման իմաստով եւ նպատակաւ : Ուրեմն ինչպէս հնար է ընդդիմանալ սա եզրակացութեան, թէ վերջինը առաջնոյն տեղը ըռնած է :

(4) Սուրբ Գիրք մեզի մակարերել կ'ըտայ սա գաղափարը թէ մկրտութիւնը թլիստութեան տեղը դրուած է : « Զգուշացէք » կ'ըսէ Առաքեալը « կրօնաբանութեան » կամ այն անձինքներէն որք արտաքոյ կարգի բեռ կը դնեն թլիստութեան արարողութեան վրայ, « ինչու որ թլիստութիւնը մենք եմք, » (մենք որ մկրտուած եմք,) « որ հոգեով զվստուած կը պաշտենք : » Փիլիպ. Գ. 2, 3 : Դարձեալ առ կողոսացիս կը գրէ, « որ անով դուք անձեռագործ թլիստութիւնով թլիստուեցաք՝ մեղաց մարմինը մերկանալով, Քրիստոսի թլիստութիւնովը, թաղուելով անոր հետ մկրտութիւնով : » Կող. Բ. 11, 12 : Այլով բանիւն դո՛ւ իւր

Քրիստոսի եւ Վերածնալի: Ընդունուած է թէ հոս խօսուած՝ թէ՛ թլիատուութիւնը եւ թէ՛ մկրտութիւնը, երկուքին հոգեւոր մտքով են: Բայց եթէ այս երկու սահմանադրութիւնն ալ հոգեւորապէս նոյն են, եւ մին դրուեցաւ եկեղեցւոյ մէջ, երբ միւսը խափանեցաւ, մէկը միւսին տեղը դնել չէ՞ այս:

(5) Նախնի Քրիստոնէայ Հարք մկրտութիւնը կը համարէին իբրեւ թլիատութեան տեղն եկած:

Սահմաննիս չներեր որ մասնաւոր հատուածներ յառաջ բերենք հոս: Ո՛վ որ յանձն կ'առնու կարգալ Wall's History of Infant Baptism կոչուած գիրքը, Հատոր Ա. Գլ. Ա.-ԺԵ. պիտի գտնէ թէ նախնի հարց շատը, որպիսի են, Յուստիանոս, Կիպրիանոս, Բարսեղ, Ամբրոսիոս, Օգոստինոս եւ Ոսկերեան, պարզ կը խօսին սոյն կէտին վրայ: Նոքա կը համարէին թէ մկրտութիւնը իբրեւ Քրիստոնէական թլիատութիւն՝ թլիատութեան տեղը կեցած է:

Բայց եթէ այս ճշմարիտ է, եւ եթէ եկեղեցւոյ հասկացողութիւնը այսպէս էր Առաքելոց մերձաւորագոյն ժամանակաց մէջ, ապա ուրեմն, մանկուծք մկրտելու խնդիրը վախճանին հասած է: Ստոյգ է որ մանկուծք թլիատելու հրաման կար, եւ եթէ մկրտութիւնը թլիատութեան տեղը դրուած է, այն նոյն հրամանը անոնց մկրտութեանն ալ կը վերաբերի:

Յ. Հրէից նորահաւատները մկրտելը հետեւական փաստ մը կ'ընծայէ մանկանց մկրտութեան՝ ի նպաստ: Փրկչին մերոյ աշխարհի մէջ երեւցած ժամանակը եւ անկից ալ շատ առաջ, Հրէայք սովոր էին ոչ

միայն թլիատել իրենց նորահաւատները (այսինքն հեթանոսութենէ հրէութեան դարձողները), այլ նաեւ մկրտել զանոնք: Եւ սովորութիւն ունէին ճանաչելն ալ իրենց ծնողացը հետ մկրտել: 'ի հաստատութիւն ասոր, ասեալ Wall's Introduction to the History of Infant Baptism: Բայց երբ Փրկչն մեր տուաւ այս հրամանը, « Գացէք աշակերտեցէք ազգերը Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, մկրտելով զանոնք, » ո՛չ ապաքէն իւր աշակերտք հասկըցած պիտի ըլլան այն տեսակ մկրտութիւն, որում թէ՛ ինք եւ թէ՛ իւր աշակերտները ընտելացած էին, քաջածանօթ էր իրենց այն, այսինքն՝ ճանկանց Վերածնալի երեսնէ քաջաց հետ: Եւ ինչպէս կարելի էր անոնց ուրիշ կերպով հասկընալ: Այս պարագաներուն տակը, փոխանակ տղայոց մկրտութեան մասին բացորոշ հրամանի մը պէտք ունենալու, աշակերտք բացորոշ հրամանի մը պէտք ունէին զմանկուծս մկրտելն արգելող: Բայց այսպիսի արգելք մը չդրուեցաւ: »

Հեթանոսութենէ Հրէութեան դարձող նորահաւատից թլիատութեան հետ մէկտեղ մկրտուելուն վրայ դրուած սա հնոտալից ծանօթութիւնք պատշաճ կը համարինք թարգմանելով դնել հոս, իբրեւ միջանկեալ ծանօթութիւն:

ՆՈՐԱՀԱՒԱՏԻՅ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

« Ունիմք բաւական ապացոյց թէ մկրտութիւնը իբրեւ նախաշաւիղ մի արարողութիւն, կը մատակարարուէր թլիատութեան հետ նորահաւատի մը

Հրէական եկեղեցին մտած առեւը նախ քան զՔրիստոս բաւական երկար ժամանակ յառաջ: Ըստ որում այս իրողութիւն վիճաբանութեանց առարկայ եղած է, հարկ է ցուցնել ազայոյցներէն մի քանին որոյ վրայ հիմնեալ է:

(1) Նորահաւատից մկրտութիւնը արդէն բոլորովին քնական եւ հասանալիս կը թուի լինել, 'ի նկատի առնելով Մովսիսական սահմանադրութեանց ոգին, եւ այն տեսութիւնը զորս իսրայելացիք սովոր էին տածել նկատմամբ հեթանոս ազգաց: Այս ժողովուրդին մէջ ոչ ինչ առաւել ընդհանուր էր քան որչափ լուացմունք ու մաքրութիւնը, լուալով կամ մկրտութեամբ: Այս բանիս մէջ մեծաւ մասամբ կը բաղկանար նոցա կրօնին արտաքին մասը: Եւ ըստ որում նոքա բոլոր հեթանոսները անսորք եւ անձաւոր կը համարէին, որչափ բնական էր նոցա համար՝ պահանջել, երբ հեթանոս մը իրենց կրօնքին յարէր, որ հանդիսաւոր կերպով մաքրուի ջրով:

(2) Թէ Հրէայք Քրիստոսի աշխարհ գալէն առաջ մկրտութեան արարողութեան ծանօթութիւն ունէին, կը մակարեւորուի այն հարցումէն զոր ըրին Յովհաննէս Մկրտչին, այն անձինք որ երուսաղեմէն առ նս զրկուեցան. Յովհ. Ա. 28: « Հապա ինչո՞ւ Պրոֆետան էլ չէ, » թէ որ դուռն Քրիստոսը չես ու ոչ Եղիան եւ ոչ մարգարէն: » Հարցումը « Ինչ նոր արարողութիւն է այդ, » չէր, այլ « Ինչո՞ւ մկրտութիւն կ'ընես ո՞րն » էր: Հրէայք ի վաղուց սովոր էին մկրտութեան արարողութեան, բայց եթէ Յովհաննէս ոչ Քրիստոսն էր, ոչ Եղիան եւ ոչ մարգարէն, » անոնք չէին հասկընար թէ ինչ իչ-

խանութեամբ կամ ինչ պատճառաւ իւր վրայ մկրտուելու պաշտօն առեր էր:

(3) Հրէից Ռաբբինները հին եւ նոր՝ կը վկայեն թէ նորահաւատները մկրտուելու այն սովորութիւնը միշտ կ'ար: Այս արարողութիւնը կը յիշուի երկու թալմուտաներուն մէջն ալ: Մէյմօնայտս (Maimonides) այսպէս կը խօսի, որ երկոտասաներորդ դարուն ծաղկեալ գիտուն Հրէայ մ'էր. « Այն դարումէջ, երբ հեթանոս մը կ'ուզէր իսրայելի ուխտին մէջ մտնել եւ ինքզինք Աստուածային մեծավայելութեան թեւոց հովանաւորութեան տակ դնել, եւ վրան աւնտւլ օրինաց լուծը, սէտք էր Բրոֆետան եւ Պրոֆետան եւ ընծայ մը բերել, կամ եթէ կի՞ն էր Պրոֆետան, եւ ընծայ մը բերել: »

(4) Այլ մատենագիրք բաց 'ի Հրէից, նախնի եւ արդի, որք շատ ուշադրութիւն տուած են այս նիւթին, եւ ամենէն աւելի նպատաւոր պարագաներու մէջ գտնուած են գաղափար մը ձեւացնելու, ընդհանրապէս միաբան կը հաստատեն թէ Հրէայք կը մկրտէին իրենց նորահաւատները: Այսպէս Արիմանոս, Հեթանոս փիլիսոփայ մը 'ի Հռովմ, յամին 140, կը նախատէ Հրէութեան դարձողները, կոչով զայն՝ Պրոֆետ: Եւ կիպրիանոս, Քրիստոնեայ Հայրապետ մը երրորդ դարու, կ'ըսէ, « Առաքեալներէն մկրտուելիք Հրէաներուն պարագան Հեթանոսներէն տարբեր էր, զի Հրէայք արդէն եւ 'ի վաղուց անտի՝ ունէին Օբնայ եւ Մովսիսի Պրոֆետան, եւ հիմա մկրտուելու էին յանուն Յիսուսի Քրիստոսի: » Կան այլ մատենագիրք եւս որ բացորոշ կը խօսին այս մկրտութեան արարողութեան՝ Հրէից մէջ կատարուելուն վրայ:

(5) Թէ Հրէից մէջ զնորահաւատա մկրտելու արարողութեան ծագումը՝ Քրիստոնէական թուականէն բաւական երկար ժամանակ առաջ էր, դիւրին չէ ժխտել: Գիտենք մենք որ Հրէայք իրենց նորահաւատները կը մկրտէին երկրորդ դարուն մէջ, եւ շարունակած են զայդ ընել մինչեւ ցայսօր:

Բայց այդ արարողութիւն ինչպէս մուտ գտաւ նոցա մէջ: Քրիստոնէաներէն ընդօրինակեցին զայն: Մէթէ հասանալն է, որ այսպիսի կանոն ժամանակի մը մէջ կամ ո՞ր եւ իցէ ատեն Հրէայք՝ Քրիստոսի խիստ անշաշտ թշնամիք, ընդօրինակէին նորա խորհուրդներէն մին, եւ խառնէին զայն իրենց մեծարոյ Օրէնագրին (Մովսիսի) կանոնադրութեան մէջ: Հրէից նախապաշարմանց վրայ որ եւ իցէ ծանօթութիւն ունեցողներու, այս ենթադրութիւն անհաւատալի պիտի թուի: Վասն որոյ կը հետեւի թէ Հրէայք իրենց նորահաւատները մկրտելու սովորութիւնը իրենց ազգին նախահայրերէն ընդունած ըլլալու են, (ինչպէս նոքա իսկ կ'ըսեն), եւ թէ նա առհասարակ կը գործադրուէր Փրկչին զալտեան ատենը: »

6. Քրիստոս եւ իւր առաքեալք սովրեցուցին ու գործադրեցին ճիշդ ինչ որ մենք կրնայինք ակնկալել ենթադրութեամբ թէ անոնց միտքն այն եղած ըլլայ որ մանկունք մկրտուելու են, եւ կա՞մ ճիշդ այն ինչ որ մենք չպիտի կրնայինք ակն ունել, հետեւական ենթադրութեամբ: Որոշուելու համար թէ՛ ո՞րն է հաւանականը որ կրնայինք սպասել Քրիստոսէ եւ իւր Առաքեալներէն, հարկ է ի մտի ածել հաստատեալ սովորութիւնքը այն ժամանա-

կին, յորում կ'ապրէին նոքա: Հրէական եկեղեցւոյ մէջ մանկունք միշտ իրենց ծնողաց հետ կապակցեալ էին: Նոքա կանոն իսկ ընդունէին յաւիտեանական ուխտին նշանը: Նաեւ նորահաւատոց մանկունքը եւս կը կապուէին իրենց ծնողաց հետ ուխտիւ, եւ կ'ընդունէին յինքեանս թլիպտութեան եւ մկրտութեան նախնական արարողութիւնները: Եւ արդ՝ ինչ կրնար ակնկալուիլ Քրիստոսէ եւ իւր Առաքեալներէն, ենթադրելով թէ նոքա կ'ուզէին որ իրաց այս վիճակին վախճան մը տրուի: Անշուշտ լուռ պիտի չկենային: Լուռութիւնը տիրապէս անոր հաւանութիւն տալ պիտի ըլլար: Այսու ենթադրութեամբ նոքա պատեհութիւն պիտի չկորնցունէին պնդելու թէ մանկանց եւ ծնողաց միջեւ եղած հին ուխտիւք կապակցութիւնը ջնջուած էր. եւ թէ այլ եւս պէտք չէ՛ ճանչցուիլ եկեղեցւոյ արարողութեանց մէջ: Բայց այսպիսի բան մը ըրլին: Ո՛չ երբէք, մինչեւ իսկ մէկ անգամ մը:

Ուրեմն ինչ կրնայ ակնկալուիլ Քրիստոսէ եւ իւր առաքեալներէն, ենթադրելով թէ անոնց միտքն այն էր որ մանկանց՝ իւրեանց ծնողաց հետ ունեցած ուխտիւ կապակցութիւնը շարունակուի: Արդարեւ ո՛չ թէ այդ բանին հաստատ մնալուն համար քաջորդ հրաման մը պիտի տային, ինչու որ այս՝ արդէն ամենուն հաւանականաբար հասկցած եւ գործադրած բանը հրամայել պիտի ըլլար: Բայց հաւանականագոյնն այն է որ նոքա յաճախ ակնարկեն այս բանը, իրենց հաւանութիւնն յայտնելով, ու զանց առնուն զայն պարունակող խօսքեր: Հաւանականն այն է նաեւ որ երբ առիթ պատահէր,

ամբողջ տուններ մկրտելին, երբ տանը մեծերը իրենց հաւատքին դաւանութիւնը տային: Եւ դրեթէ հարկ չէ ըսել թէ Փրկիչն մեր եւ իւր առաքեալները արդեամբք այդպէս ըրին: Քրիստոս գովեց մանուկներն իրեն բերեւելին իւր օրհնութիւնն ընդունելու համար. եւ ըսաւ թէ « Աստուծոյ թաղաորութիւնը տանկներունն է: » Դուգ. ԺԲ. 16: Փոքրիկ մանկանց համար խօսեցաւ իբրեւ իւր անուամբն ընդունուած կամ իրեն վերաբերեալ: Մարի. Թ. 57, 41: Պետրոս սովրեցուց հաւատացեալ ծնողաց թէ խոստումնքը իրենց եւ իրենց զաւակներունն է: Գործ. Բ. 59: Պօղոս կը հաստատէ թէ Աբրահամու օրհնութիւնը, որոյ մէկ կարեւոր մասը կը բաղկանար նորա զաւակաց ուխտիւ կապակցութեան մէջ, « Հեթանոսներուն եկած է Յիսուս Քրիստոսի ձեռքովը: » եւ հաւատացեալ ծնողաց զաւակունքը կը կոչէ « Գաղ. Գ. 14: Ա. Կոր. Է. 14: Նա կրկին եւ կրկին տուններ մկրտեց ծնողաց կամ խնամակալուաց դաւանութեամբք: Լիդիա հաւատաց եւ ինք ու իր տունը մկրտուեցան: Բանտապետը հաւատաց, եւ թէ ինք ու թէ՛ բոլոր իրենները մկրտուեցան անմիջապէս: Պօղոս մկրտեց նաեւ Ստեփանեսին տունը: Ա. Կոր. Ա. 16:

7. Պատմական վկայութեամբ ալ կը հաստատուի մանկանց մկրտութիւնը: Արդէն Քրիստոնեայ հայրապետք մկրտութիւնը թլրատութեան տեղը դրուած կը համարէին: Յուսարինոս, որ Յովհաննէս առաքեալին մահուանէն միայն քառասուն տարի վերջը գրեց, կ'ըսէ. « Մենք չընդունեցինք այն մարմնաւոր թլրատութիւնը, այլ հոգեւոր թլրա-

տութիւնը, եւ ընդունեցինք զայն՝ մկրտութեամբ: » Այս հատուածէն ո՛չ ապաքէն յայտնի է թէ ինչեղած ըլլալու է Յուսարինոսի գաղափարը նկատմամբ մեր առջեւն եղած կարեւոր խնդրոյն:

Երանոս, որ Յուսարինոսէ քանի մը տարի վերջը գրեց, կ'ըսէ, « Քրիստոս եկաւ փրկել բոլոր մարդիկ որ իրմով մկրտեալ են յԱստուած, ճանկուած եւ փոքրեցեաց եւ տղայք, եւ երիտասարդք ու երիցագոյն անձինք: Այս վկայութեան դէմ մի միայն աւարիութիւնն այս է որ Երանոս այս տեղ մկրտութեան համար կը գործածէ բառ մը, որ կը նշանակէ վերատին ծնունդ, հասարակ ձեւով մը՝ նշանակեալ իրը փոխանակ նշանին: Թէ նա իրապէս այն բառով մկրտութիւնն ըսել կ'ուզէ, այնպէս քաջայայտ է զայն ուրիշ տեղեր ալ գործածելէն, եւ հայրապետաց ընդհանրութեան գործածութենէն, որ Տօքթըր Ուօլ չվարանիր ըսել վերի հատուածին համար թէ « Բացայայտ յեշտարակութեան մ'է մկրտեալ մանկանց: » Եւ Հուլիսթըն գլխանական Միլարիչեանը, նոյնը կ'ընդունի: « Այս, » կ'ըսէ, « անուրանալի բան մ'է, եւ, ո՛չ մէկ համեստ առարկու մը կրնայ ժխտել զայն: »

Տերտուղիանոս, որ Երանոսի ժամանակակից էր, թէեւ կը խրատէ յապաղեցուներէ մանկանց եւ ամուրի կամ չամուսնացած անձանց մկրտութիւնը, այսու ամենայնիւ խիստ բացորոշ կերպով կը խօսի մանկանց մկրտութեան վրայով իբրեւ ընդհանրացած եւ հաստատուած սովորութիւն մը:

Որդիկնէս, որ Յովհաննէսու մահուանէն վերջի ութսուն տարուան միջոցին ծնաւ, եւ սերեալ էր քրիս-

տոննայ նախնիքներէ, որք առաքելական դարուն մէջ ապրած պիտի ըլլան, կրկին եւ կրկին եւ բացայայտ ոճով կը խօսի մանկանց մկրտութեան վրայ, եւ կ'ըսէ թէ առաքելներէն իջած է այդ սովորութիւն:

Այս ժամանակէս վերջը մանկանց մկրտութիւնը յաճախ կը յիշեն եւ խիստ դրական եղանակաւ, բոլոր քրիստոնեայ Հայրապետք, որպիսի են Կիսարիանոս, Օրգադոս, Բարսեղ, Գրիգոր, Ամբրոսիոս, Ոսկեբերան, Հերոնիմոս եւ Օգոստինոս: Ճանչցուած է ժողովոց արարքներուն ու անհատ անձանց գրուածոց մէջ: Կը ներկայացուի այն՝ իրբեւ հիմնեալ Առաքելոց օրինակին եւ պատուէրին վրայ: Յիրաւի մանկանց մկրտութիւնը ո՛չ ոք կը մերժէր նախնական եկեղեցեաց մէջ, բաց յայնցանէ՝ որք ջրով մկրտութիւնը խապա կը մերժէին: Պեղադիոս՝ Օգոստինոսի հետ ունեցած իւր վիճարանութեան մէջ, համարուեցաւ թէ կը մերժէ մանկանց մկրտութիւնը, սակայն ինք կը հերքէ այդ ամբաստանութիւնը, ըսելով. «Մարդիկ կը զրպարտեն զիս իրբեւ մերժող մանկանց մկրտութեան: Ես բնաւ մէկէն լսած չեմ, եւ ո՛չ իսկ ամենէն ամբարշտ հերետիկոսէն, որ մանկանց մկրտութիւնն ուրանայ:»

Տօքթըր Ուօլ՝ որ կատարելապէս հետախուզած է մանկանց մկրտութեան պատմութիւնը, այնպէս որ քիչ բան կը թողու իրմէ վերջն եկողներուն ընելիք, կը վստահացունէ զմեզ թէ ամենէն առաջ մանկանց մկրտութիւնն ուրացողք էին Փետրոպրուզեանք (Petrobrusians) որ Ալպիժուաններուն մէկ աղանդն է, երկոտասաներորդ դարուն առա-

ջին մասին մէջ: Եւ Մի'նէր կ'ըսէ. « Ի բաց առեալ մի քանի օրինակներ, մանկանց մկրտութեան ուրացութիւնը կը թուի թէ հազիւ ուրեմն տեղի ունեցած է Քրիստոսի Եկեղեցւոյն մէջ մինչեւ բարեկարգութեան սկզբնաւորութենէն քիչ վերջը:

Այսպիսի է ուրեմն, մանկանց մկրտութեան պատմութիւնը: Եւ այս աղբիւրէն յառաջ եկած ձեռնարկութիւնն ու փաստը ՚ի նպատակն որ Աստուածային ծագման եւ հեղինակութեան՝ հետեւական կը համարուի: Եթէ մանկանց մկրտութիւնը առաքելոց օրինակին վրայ հաստատուած չէ՝, ի՞նչ պատճառ կրնայ տրուիլ այնչափ կանուխ եկեղեցւոյ մէջ մտած ըլլալուն, եւ այնչափ ընդհանուր կերպով ընդունելութիւն գտած ըլլալուն, եւ այն ալ առանց ինչ հակառակութեան կամ վրդովմանց մէկ շուռնջի մը: Ունինք ցանկեր առաջին չորս դարուց քրիստոնէից բոլոր այլ եւ այլ աղանդներուն — նոյն իսկ այն ժամանակամիջոցին, յորում մանկանց մկրտութիւնը մուտ գտած պիտի ըլլայ՝ եթէ Աստուածային չէ՛ անոր ծագումը, — որոց մէջ այն ժամանակները մկրտութեան վրայով կեցած զաղափարներուն տարբերութիւնքը մասնաւոր կերպով պատմուած, եւ մանրամասնարար նկարագրուած են: Սակայն անոնց մէջ բնաւ յիշատակութիւն չկայ բաց ՚ի ջրով մկրտութեան դէմ խօսողներուն վրայ ըսուածէն, որք մանկանց մկրտութիւնը աստուածային չէ՛ ին համարեր: Ուրեմն ստոյգ չէ՞ որ մանկանց մկրտութիւնը աստուածային սահմանադրութիւն է, թէ այն՝ նոր բան չէ, բայց որ նոյն իսկ առաքելներէն գործադրուած է: Այս՝ եւ միայն այս պատ-

ճառաւ բոլոր սրբազան եւ արտաքին պատմութիւնք որ այս նիւթին կը վերաբերին, պարզ եւ համաձայն կ'երեւին Արրահամէն մինչեւ 'ի Քրիստոս եւ Քրիստոսէ մինչեւ ցայսօր:»

Ընթերցողին ազատ դատողութեանը կը յանձնեմ այս փաստերուն ինչ աստիճանի զօրութիւն ունենալը որոշել: Բայց ինչպէս որ ըսինք, թէ եւ ըստ մեզ զօրաւոր փաստեր են ասոնք 'ի նպատտ մանկավարժութեան վաւերական եւ աստուածային ծագմամբ լինելուն, այսու ամենայնիւ դարձեալ պ'որտիմք կրկնել թէ Սուրբ Գրոց մէջ որոշ ու դրական պատուէր մը չկայ ֆիշի մանուկ կամ չափահաս մկրտուելու մասին, եւ ըստ որում անորոշ կրնայ համարուիլ այս խնդր՝ սոյն տեսակէտով նկատելով գայն, 'ի նկատի ունելով դարձեալ թէ սոսկ մկրտութեան լուացումը կամ արարողութիւնը բռնաւ գործ մը չկրնար ունենալ նորոգութիւն սրտի, թողութիւն մեղաց, եւ այլն, յառաջ բերելու մասին, ճահաւորագոյն չէ՞ որ մեք չզարտուղինք քրիստոնեայ եկեղեցեաց մեծագոյն մասէն, այն է՝ Պապականաց, Յունաղաւանաց, եւ Անգղիական, Մեթոսիսթ, Երիցական, Ժողովական, եւ այլն, Աւետարանական եկեղեցեաց, եւ մանաւանդ մեր ազգային Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ սովորութենէն, որուն, որչափ որ կարելի է մտէն քալել վայելուչ եւ օգտակար է, մինչեւ այն տեղը՝ որ Աստուծոյ օրէնքը կ'տրելու վտանգ չկայ:

Արդ՝ յառաջ ընթանանք տեսնելու թէ Պ. Աւետարանչի պարծենցածին պէս է իւր դրութիւն, ճիշդ Սուրբ Գրոց վրայ հիմնեալ, եւ մարդկային

սխալմունքէ ազատ: Նա կը պարծի թէ ինք եւ իւր գաղափարակիցը հաւատոյ դաւանութիւն, եւ այլն, չունին, ցուցնելով թէ բուն իսկ, Սուրբ Գրքն է իրենց դաւանութեան դիրքը, եւ թէ՛ « Սուրբ Գրոց ճշմարտութիւնքը Սուրբ Գրոց բաւերով ու սճերով կը խօսին: Եւ մինչեւ իսկ իրենց խումբին անունն Սուրբ Գրոց մէջ հաւատացելոց տրուած անունն է, « Քրիստոսի աշակերտները կամ Քրիստոնեայք: » Մենք հարկ չենք համարիր քննել թէ իւր միւս պաշտօնակիցը ինչ կը քարոզեն, կը խօսին եւ կը վարդապետեն:

Պ. Աւետարանչի դրուածոց եւ բերանացի խօսից մէջ ըրած յարձակումները համայն քրիստոնէից դէմ են անխտիր, եւ հետեւապէս նաեւ մեզի Աւետարանական Հայ եկեղեցւոյս ալ կը վերաբերին: Վասն որոյ նախ եւ առաջ կը հարցունենք իրեն, թէ մեր Աւետարանական եկեղեցւոյ դաւանութեան մէջ կայ ի՞նչ « մարդկային խառնուրդ » եւ « մարդկային խոստովանութիւն կամ հաւատոյ դաւանութիւն գործածել », զոր իւր գաղափարակիցը կը մերժեն եղեր այդպիսի բաներ: Թող լաւ քննէ նայի եւ յետոյ դատապարտէ: Միթէ ապօրինաւոր բան ըրած կ'ըլլանք մեր յոյսին պատճառը յայտնելնուս կամ գրով հրատարակելնուս համար: Զէ՞ որ Պ. Աւետարանիչ ինքզինք ալ դատապարտած կ'ըլլայ այդ կերպով: Զի ինչ տարբերութիւն կայ իր եւ մեր ըրածին մէջ տեղը: Միթէ դաւանութիւն չէ՞ ' Զայն՝ անուն իւր տեսարակին մէջ գրուածները (երեսք 5, 6): Մենք դաւանութիւնն հաւատոյ գործածած կ'ըլլանք անոր համար որ « կը հաստատուի, »

կամ « Կրօնագրոս » ընելով կ'սկսինք մեր դաւանութիւնը յայտնել: Եւ ինք դաւանութիւն հաւատոյ գործածելէ զերծ եղած կ'ըլլայ իրենց համար ըսելով թէ « Անստի կրօնագրոս » եւ վրան ալ « Կրօնագրոս » բառը աւելցունելով: Ինչ է այս երկու ձեւոց մէջ տեղն եղած տարբերութիւնը: Չէ՞ որ երկուքն ալ՝ սոսկ պատմէ են մարդու մը դաւանութիւնը, միայն թէ մէկը առաջին եւ երկրորդ դէմքով կը խօսի, եւ միւսը՝ երրորդ դէմքով:

Բայց մի քանի դիտողութիւնք կամ հարցմունք ունիմ ես հոս ընելիք, առիթ առնելով: Չայ՝ կոչուած տետրակին պարունակութեան ինչ ինչ մասերէն, որ կրնայ դաւանագիր ալ անուանիլ այս հաւատոյ դաւանութիւն բառէն սոսկմամբ խորշոզ նոր յարանուանութեանն:

1. Հեղինակը կը մերթէ՞ նաեւ այնպիսի դաւանութիւնք եւս, որք ուրիշ բան չեն, բայց միայն Սուրբ Գրոց յայտնեալ ճշմարտութիւնք 'ի ձեւ խոստովանութեան, բանիւ կամ գրով: — Բայց ինչպէս որ տեսանք, նոյնն ինք կ'ընէ:

2. ' Չայն ' ին հեղինակը Քրիստոնէից մէջ գըտնուած բաժանմանց վերայ իւր ցաւն յայտնած միջոցին կըսէ (Եբե՞ 2). « ' Ես Պօղոսեան եմ, ու մէկալը Ապօղոսեան եմ ' ըսելը ' մարմնաւոր ' է ' եւ թշնամի Աստուծոյ ժողովուրդին միութեանը: » Ո՞վ են այդ Աստուծոյ ժողովուրդը, կամ այն անձինք, զորոնք եւս հետ առնելով « Ինչ որ քրիստոնէս » կը կոչէ թէ՛ զիրենք եւ թէ՛ այլ յարանուանութենէ եղող քրիստոնէաները (Եբե՞ 4.): Արդեօք այդ « Քրիստոնէայ ազգաց եւ ժողովրդոց մէջ զանա-

զան յարանուանութեամբ գտնուած բազմաթիւ բաժանումներն » ունեցող ժողովուրդներն են սնոնք: (Եբե՞ 2): Ինք կ'ընդունի՞ թէ առանց չափահասութեան մէջ եւ ընկղմամբ մկրտուած լինելու գոհ եղող եւ մանկամկրտութիւն ջատագովող այդ Քրիստոնէական եկեղեցւոյ յարանուանութիւնք Աստուծոյ ժողովուրդը կրնան համարուիլ: Չորս այս անուամբ կը կոչէ՛ ալ (' Չայն ' երեսք 2, 3, 6):

3. Միթէ մարմնաւոր լինելէ ազատ կըլլան Քրիստոնէայք, թէ որ « ճիշդ Ս. Գրոց լեզուն գործածելով, անոր մէջ հաւատացելոց տրուած տիտղոսներն կրեն, « Քրիստոսի եկեղեցին », « Աստուծոյ եկեղեցին », « Քրիստոնէայ եկեղեցին » եւ « Քրիստոսի Աշակերտները կամ Քրիստոնէայք » կոչուելով: Անունը ինչ գործ ունի հոգեւոր կամ մարմնաւոր լինելուն մէջ: Ո՞չ ասաքէն, ինչպէս « վերջը պիտի տեսնենք », բառերու վրայ սյուշափ բժարանդրութիւն ընելով հանդերձ՝ առաւելագէս մարմնաւոր եւ նիւթական լինելու վիճակին մէջ դրած է զիւր կրօն, այս նոր յարանուանութեան քարոզիչն ինք:

5. Մինչ իբր ցաւով կըսէ թէ « Քրիստոնէից մէջ գտնուած բաժանումները Յիսուս Քրիստոս մեր Տէրովը հոգւոյն համաձայն չէ, » ինք ինչու համար այդ բաժանմանց վրայ բաժանում մի եւս կ'աւելցունէ, մոռնելով Աւետարանին ողջամիտ վարդապետութեանց վրայ հիմնեալ Քրիստոնէայ եկեղեցեաց մէջ: Միթէ արդէն եղած բաժանմանց թիւը չը բաւեր:

5. Կրնայ վճռաբար ըսել թէ այս յարանուանու-

թիւնք չեն սիրեր միութիւն, եւ մի՛թէ անոնց իւրաքանչիւրն չե՞ն ուզեր որ բոլոր միւս յարանուանութիւնք իրենց հետ միանան ու մէկ ըլլան եւ ուրիշ բաժանմունք չըլլան, այլ միայն իրենցը մնայ: Եւ որո՞ւնն է իրաւունքը:

6. Թող հաճի՛ մեզի « հաւատոյ էական մասերը » (Եբե՞ 3) որոշել: Որո՞նք են անոնք: Մկրտութեան ընկղմամբ եւ միայն չափահասութեան մէջ լինելը, եւ մկրտութեամբ վերստին ծնունդ ըլլալը, եւայլն, հաւատալն ալ՝ այդ հաւատոյ էական մասն են: Եթէ էական են՝ թող հաճի ցուցնել. եթէ հաւատոյ էական մասն չեն՝ թող բաժանու՛մ մ'ալ ինք գոյացնելու առիթ եւ պատրուակ չընէ՛ գայն:

7. « Աչակերտները ուղղափառ » են ըսելով (Եբե՞ 4) իւր իրենց վրայ տուած վկայութիւնը ինչ աստիճանի արժէք կրնայ ունենալ: Ո՞ր անկեղծ կրօնասէր ՚ի սրտէ չընդունիր եւ ըսեր իրեն կրօնքին համար թէ ուղղափառ է: Ո՞չ խօսքը՝ այլ արդիւնքը կրնայ վճռել կրօնքի մը ուղղափառ կամ չարափառ լինելն: Դարձեալ, ո՞չք են այդ հակառակորդք, որք ընդունած են եղեր այդ իրենց ուղղափառ լինելուն իրողութիւնք: Ատոնք անձնական իրաց վերաբերեալ բաներու համար հակառակորդ են եղեր, թէ կրօնական խտրութեանց պատճառաւ: Եթէ անձնական իրաց համար հակառակորդ են՝ հոս բնաւ չզօրեր այդ փաստ, զի կրօնք եւ անձնական մասնաւոր ինդիրք իրարմէ իսպառ անջատեալ են եւ անհուն անջրպետ մի կայ երկոցունց միջեւ: Իսկ եթէ ատոնք կրօնական սկզբանց հակառակորդ են, հակասութիւն կայ այդ ըսուածքին մէջ, եւ

նոցա ընթացքին. զի եթէ իրենց կրօնական սկզբանցն հակառակորդ են անոնք, ի՞նչպէս հնար է որ զիրենք ուղղափառ ալ լինել ընդունին մի եւ նոյն ժամանակը:

8. Որով հեղինակութեամբ զանազանութիւն եւ խտիր կը դնէ « հաւատոյ եւ ապաշխարութեան, Քրիստոսի մահուանը եւ մարմնոյն մկրտութեան » արդեանց մէջ: Ո՞չ ապաքէն ճշմարիտ հաւատոյ մէջ, « որ սիրով ՚ի գործ կը դրուի, » (Գաղ. Ե. 6,) կը բովանդակի « սրտի փոփոխութիւն, » « վարուց փոփոխութիւն » եւ « վիճակաց փոփոխութիւն »: (Եբե՞ 4:)

9. Ի՞նչ ըսել կ'ուզէ սա խօսքով՝ թէ « Քրիստոնէական մկրտութիւնը մեղաց թողութեան համար է, իէ որ Հասարակ և Ապաշխարութեան արդեանք է, » (' Զոյն ' Եբե՞ 5:) Եթէ մկրտութիւնը « հաւատքի եւ ապաշխարութեան արդիւնք » չլինի, այսինքն եթէ մարդ մը չհաւատացած եւ չապաշխարած մկրտուելու ըլլայ, ի՞նչ կը համարի ' Զոյն ' ին հեղինակը այդ մկրտութիւն, վաւերակամ թէ անվաւեր: Եթէ վաւերական կը համարի՝ չէ՞ որ այդ ըսածին հակառակ կըլլայ՝ որ պայման դրած է « Հաւատքի եւ Ապաշխարութեան արդիւնք » լինել, եթէ անվաւեր՝ ի՞նչ այդչափ բան գործ է ըրեր իրեն մկրտուելով որ լինի, միայն թէ փափաք ցուցնէ մկրտուելու ուզողը՝ եւ սոսկ չըթուներով դաւանութիւն տայ առանց հաւատոյ եւ ապաշխարութեան գործնական ապացուցից:

Բայց առ այժմ՝ այս մասին այսչափ խօսիլ բուսական համարելով դառնանք վերստին մեր նախըն-

Թաց խօսքին շարունակութեանը, որոյ իմաստն այս էր, Թէ Պ. Աւետարանիչ աւերորդ բծախնդրութիւններ կ'ընէ ուրիշ յարանուանութենէ եղող Բրիստոնէից, ընդ որս եւ մեր, դաւանութեանց, կրած անուան, խօսից ոճերուն, եւայլն, վրայ, եւ զանոնք այլ ընդ այլոյ մեկնելով ու ներկայացունելով, հակառակ Սո՛ւրբ Գրոց, խորթ եւ անընդունելի ցուցնելու կը ճգնի: Յայտնի՛ է Թէ այն ձեւ խօսքերը ընթերցողին կամ լսողին աչքերը չլացունելու միայն կը ծառայեն, եւ խօսողն իրրեւ խրատ զգուշաւոր եւ երկիւղած ցուցնելու: Բայց մի՛ գուցէ այդ նման ըլլայ այն անձանց ընթացքին, որուն համար Բրիստոս յանդիմանական լեզուով կ'ըսէ. « Մժղուկը կը քամէք եւ ուղար կը կլէք », Մատթ. ԻԳ. 24, զի, աւա՛ղ, մինչ այս աւետարանիչ արտաքին ձեւերու այսչափ բծախնդիր եւ նախանձաւոր կը ցուցնէ ինքզինք, միւս կողմէն Աւետարանին պարզ ճշմարտութիւնքն ու էական վարդապետութիւնքն հիմն 'ի վեր կը տապալէ, եւ քրիստոնէական սուրբ եւ հոգեւոր կրօնին ոգին՝ խպտու 'ի չիք դարձունելու, գողցես, յատուկ նըպատակաւ՝ խորթ ու օտար գաղափարներ կ'արտայայտէ, « զոր ետքը պիտի տեսնենք: »

Մեկնելու արտօնութիւնը միայն իւր անձին սեպհականող այս աւետարանիչ 'ի լոյս կը հանէ հակաւետարանական գաղափարներ եւ վարդապետութիւնք, որք « Միբարձեան » անուն իւր ստուար տեսարակին ճոխ բանահիւստութեան մէջ աստ եւ անդ ցան եւ ցիր ըլլալով աչքէ վրիպելու երկիւղէն, ջանացած է հեղինակը անոր մէկ համառօ-

տութիւնը պատրաստել երկու երեսի մէջ միայն ամփոփեալ, իրրեւ ինչպէս առջի ընդարձակագունին, « Աստուծոյ որդեգրութեանը ընդունուելու անսխալ Օրինակներ, Պատուէր եւ Խոստում » անունով, որպէս զի ընթերցողը միահաղոյն տեսնէ եւ մէկ նայուածքով պարզ եւ գիւրաւ ըմբռնէ հեղինակին ըսածները: Եւ արդարեւ ուղղագատ եւ ողջամիտ Բրիստոնէայ մը չիրնար առանց ստակալու եւ միանգամայն պժգալու նայլլ այդ բանից վրայ, զի յայտ յանդիման կ'երեւի հոն բռնազրօսութիւն եւ չարաչար կիրառութիւն Սուրբ Գրոց կենարար բանից իմաստիցը: Եւ չենք վարանիր ըսել Թէ այնու տեսութեամբ նկատելով այն կենարար խօսքերը, կ'ըլլան « մահուան հոտ դէպ 'ի մահ », եւ ո՛չ Թէ « կենդանութեան հոտ դէպ 'ի կեանք »: (Բ. Կոր. Բ. 16):

« Աւետարանիչ Գիտորդ Ն. Շիշմանեան » ստորագրութեամբ հրատարակեալ այն երկու երեսն բողկացեալ տեսարակին վերջին մասը հոս բառ առ բառ կ'ընդօրինակենք.

« Սիրելի՛ ընթերցող, « մի՛ խարուիր, Աստուած ծաղր չըլլար », Գալ. Ա. 7: Եթէ Աստուծոյ Որդւոյն անսխալ օրինակին չես հետեւած, եւ Անոր պատուէրը չես կատարած սուտքելոց քարոզութեանց համաձայն, ինչպէս կրնաս աղօթք ընել (5) եւ յուսալ Թէ

Նախ՝ խոստմունքը քեզի համար է (15, 16, 21)

Բ. Քու մեղքերդ ներուած են քեզի, (20)

Գ. Սուրբ Հոգւոյն պարգեւն ընդունած ես, (5, 6, 21)

Գ. Ջուրէն ու Հոգիէն ծնած ես, (1, 2, 5, 5, 6, 10, 11, 14, 15, 17, 18, 19)

Ե. Եւ վերջապէս, թէ Քրիստոս Յիսուսի սորվեցուցած եւ պատուիրած ճամբովը Աստուծոյ որդեգրութեանը ընդունուած ես, (4, 7, 16, 20, 21) :»

Այս թիւերը որ կցեալ են իւրաքանչիւր հարցման, կ'առաջնորդեն ընթերցողը լաւ տեսնելու թէ Սրբազան խօսքերէն որոնք, եւ ի՞նչ քմահաճ նշանակութիւնք տալով նոցա, չարաչար ժեխած են :

Անշուշտ կան այս համառօտութեանս մէջ բաներ, որ կրնայ ըլլալ թէ այնչափ պարզ չհասկցուի թէ գրողին մտքը ո՞ւր կը նայի, ի՞նչ ըսել կ'ուզէ, բայց « Միքոմ-իան » անուն տետրակին հետ բաղդատելով կը պարզուի բանը, եւ պարունակութեանն իմաստը,

Նախ՝ ան հասկըցունել կ'ուզէ Պատ. Գ. Ն. Շիշմանեան իւր ընթերցողաց, թէ

Ա. Միայն զաճահա՛ս անշանց Միքոմ-իանը վաւերական է :

Արդէն փոքր ինչ խօսուեցաւ թէ Սուրբ Գրոց մէջ բացորոշ եւ գրական պատուէր մը չկայ մեզ տրուած՝ ՚ի մանկութեան կամ ՚ի չափ հասեալ տիոց մէջ միայն մկրտուելու մասին : Թէ՛ երկու կողման ալ ՚ի նպաստ փաստեր կրնան յառաջ բերուիլ, եւ թէ՛ ըստ մեզ աւելի՛ զօրաւոր փաստեր կան մանկամկրտութեան նպատաւոր, ինչպէս այն փաստերէն ոմանք դրինք ալ գրուածոյս մէջ, եւ թէ՛ մեր Ազգային Լուսաւորչական Հայոց եկեղեցին, հանդերձ այլ Քրիստոնեայ եկեղեցեաց ամբողջութեամբ, ՚ի բաց առեալ միայն Մկրտիչեանք եւ աշակերտք կամ Քէմիպէլեան կոչեցեալք, մանկա-

մկրտութիւն ընդունելուն համար անոնց հետեւիլ եւ նմանիլ այս մասին՝ ճահաւորագոյն է, պատճառն որ ըստ մեր տեսութեան եւ համոզման, Սուրբ Գիրք զմկրտութիւն չեն ներկայացուներ լինել ուրիշ բան, այլ միայն նուիրումն, եւ նշան ու կնիք ուխտին ընդ Աստուծոյ, որպիսի էր թլիսատութիւնն ՚ի հնումն՝ Մովսիսական դրութեան տակ :

Բայց մեր Աւետարանիչ բոլորովին տարբեր կը նկատէ մկրտութեան այս խնդիրը, եւ կը պնդէ թէ մանկութեան ժամանակի մկրտութիւնը վաւերական չէ, մկրտութիւն չէ, վասն որոյ ՚ի մանկութեան մկրտեալներուն մէջ սւմպէտ խղճահարութիւն ծնուցանելով կը ճգնի համոզել ամենայն աշխուժիւ, եւ թախանձագին կ'ստիպէ զանոնք որ կրկին մկրտուին եր Երեսնայր :

Եթէ հարցունես, Պ. Աւետարանիչ, արդեօք Առաքեալք բնաւ չմկրտեցին մանուկներ ալ նոցա հաւատացեալ ծնողաց հետ : Բանտապետը, որ ինքքը ու բոլոր իրենները մկրտուեցան, տանը մէջ պղտիկներ չունէր բնաւ : Պօղոս՝ որ Ստեփաննեսին ընտանիքն ալ մկրտեց, այն ընտանիքին մէջ մանուկներ ալ չկային եւ զանոնք ալ չմկրտեց, Լիդիա, ծիրանավաճառ կինը, որ միայն զինք Տէրօջը հաւատացեալը լինել կը սեպէ, որ ըսաւ. « Թէ որ ըն » (ո՛չ զմեզ) Տէրօջը հաւատացեալը կը սեպէք », եւ այլն, բայց որ « մկրտուեցաւ ինքք եւ իր տունը », անոր տանը մէջ պղտիկներ ալ չկային : — Ո՛չ, կըսէ Պ. Աւետարանիչ, վճռաբար, եւ բացարձակապէս կը համարձակի հերքել այն երեք ընտանեաց մէջ ալ մանուկներ կենալը, որ եթէ այդ-

պէս է, շատ հազուադէպ բան եղած պիտի ըլլայ: Եթէ « Լիդիայի տիրոջ Տէրը բացաւ Պողոսի ըսածներուն ուշադրութիւն ընելու », եւ ատոր վրայ մկրտուեցաւ, կրնէ սրբազան պատմիչը, ինքը ու իւր տունը, բնապէս չը հասկցուիր թէ միւսները իւր զաւակներն ըլլալու են, զի միայն զինք հաւատացեալ կը ներկայացունէ:

Բայց Պ. Աւետարանիչ հոս զուարճարանական ուժով մը կը ջանայ այս բաւական զօրաւոր փաստին ուժը կտորել, ըսելով. « Եթէ 'ինչ է- իր աստուծոյ' խօսքերէն միայն, անշուշտ հասկնալու ենք թէ բարին եւ չարը չի ճանաչող մանկութիւն ալ կային Լիդիային 'աստուծոյ' եւ առաքեալները անոնք ալ մկրտուեցին, ուրեմն ինչո՞ւ անոր կահ կարասիքն եւ տանը չէնքն ալ միատեղ հասկընալու չենք այդ մկրտութեանը մէջ »: Այս պարզ քաջքըչուք չէ՞: Եւ Լիդիայի վրայ խօսած ժամանակը այսպէս կ'ըսէր « Երկուքն ալ (բանդապետի եւ Լիդիայի տանը մէջ մանուկներ ալ կենալու դադարաւրը,) բոլորովին մտացի ենթադրութեանց վրայ հիմնեալ են: Քանզի նախ՝ չենք գիտեր թէ Լիդիա ամուսնացած էր, երկրորդ՝ թէ որ ամուսնացած էր, չենք գիտեր թէ զաւակներ ունէր, երրորդ՝ թէ որ ամուսնացած էր եւ զաւակներ ունէր, չենք գիտեր թէ մանուկներ ալ կային անոնց մէջ, չորրորդ՝ թէ որ ամուսնացած էր եւ զաւակներ ունէր, եւ մանուկներ ալ կային անոնց մէջ, չենք գիտեր թէ թիւատիր քաղաքէն դանոնք իւր հետ Փիլիպպոս բերած էր, իւր ծիրանավաճառութեամբը հոն դաշած ժամանակը », (Մկրտ. երես 28:)

Բայց ինչ կ'ենէն այդ « չէ՞ քեր » ներէն, ուրիշ մէկն ալ կրնայ պատասխանել ատոր դէմ իրեն. « կրնայ ըլլալ որ Լիդիա ամուսնացած լինի, եւ զաւակներ ունեցած, որոց մէջ կային մանկունք եւս, կամ ամենն ալ մանուկ էին, եւ թէ՛ ինք իր բնակութիւնը բազում տարիներէ հետէ Փիլիպպոս հաստատած էր »: Եւ Պ. Աւետարանիչ կը համարձակի ըսել վճռաբար թէ այդպէս չէ՛: Եթէ իւր ընդգիտմանսին ըսածները « բոլորովին մտացի ենթադրութեանց վրայ հիմնեալ են », իրեն՝ հակառակը հաստատելու ճգնիլը ինչ հիման վրայ կը կայանայ:

Միանգամ 'ի մանկութեան մկրտեալներուն մկրտութիւնն անվաւեր համարելով դանոնք կրկին մկրտել ուղղներուն, եւ կամ՝ միայն չափահաս անձանց մկրտութիւնը վաւերական սեպողներուն առարկութեանց չափին պատասխանները արդէն գրուածոյս նախընթաց մասերուն մէջ կը սարունակին, նաեւ ասկից առաջ ուրիշ գրութեանց մէջ եւս, որ տղադրութեամբ հրատարակուած են: Բայց հոս մի քանի հատ առարկութիւնք գնենք իրենց պատասխաններովը:

1. Կ'առարկեն թէ, եթէ մանուկները մկրտութեամբ կը նուիրուին, ինչ օգուտ կ'ընէ այդ անոնց, զի բան մը չեն գիտեր, չեն զգար, եւայլն: Կը պատասխանեմք. Միթէ հին տնտեսութեան մէջ անդրանիկ զաւակունք որ Տէրովը կը նուիրուէին աստուածային պատուէրին համեմատ, կ'ըզգային բան մը: Անասնոց առջինեկները բան մը կ'ըզգային, որ կը նուիրուէին Տէրովը: Պատոց երա-

խայրիք, զենեալ կենդանիք, ալիւր, նաշիհ, աղ, լւղ, ոսկի, արծաթ, եւ այլ անշունչ նիւթք, որ կը նուիրուէին Տէրօջը, ու հիմա ալ կը նուիրուին, միթէ բնաւ կ'զգային եւ կ'զգան բան մը: Ո՛չ երբէք: Այդ նուէրները՝ նուիրողին օգտին եւ շինութեանն համար էին եւ են, եւ ո՛չ նուիրելոյն: Բայց մանկանց նուիրման գալով, ՚ի ձեռն մկրտութեան, թէեւ մանկունք ալ չգիտնան եւ չզգան իրենց մկրտուելը կամ նուիրուելը, այսու ամենայնիւ, այս անուրանալի բան մ'է որ անոր օգուտը կրկնակի՛ կրնայ լինել, ծնողաց եւ զաւակաց: Ծնողաց՝ որ մկրտութեան առթիւ եւ միջոցաւ իրենց վրայ ուխտիւք պարտաւորութիւն կ'անուն Տէրօջը երկիւղին եւ օրինաց մէջ եւ Տէրօջը համար մեծցունել իրենց զաւակունքը: Ումպէտ եւ ապարդիւն բան սեպուելու է մկրտութիւնը նկատմամբ մանկանց իրենց անձին: Ո՛չ ազաքէն մանկունք իրենց փոքր հասակէն Տէր Յիսուսի նուիրուած ըլլալին գիտնալով, եւ ժամանակ ժամանակ յարմարագոյն առթիւ իրենց յիշեցունելով զայն, բարի ազդեցութիւն կրնայ ընել իրենց զգացմանց եւ վարուց վրայ, եւ կ'առաջնորդուին կանուխ եւ անագան իրենք զիրենք անձամբ նուիրել Եհովային ծառայութեանը:

Պ. Աւետարանիչ զաւակները Տէրօջը նուիրել խօսքին դէմ հեղինական ոճով կը հարցընէ « Մ'ըբարեւոյն » տետրակին լուսանցքին մէջ, (եր. 24) « Ի՞նչ ըսել է՝ Տղայքը Աստուծոյ նուիրել՝, որո՞ւնն են անոնք »: — Աստուծոյն են, կը պատասխանենք: Բայց ինչպէս որ մեր ամեն ունեցածը

Աստուծոյ են արդէն, եւ սակայն արտօնութիւն եւ պարտաւորութիւն ունինք զանոնք Աստուծոյ նուիրել եւ մատուցանել, նոյնպէս եւ մեր զաւակունքը, Դաւթի հետ ձայնակցեալ կ'ըսենք, « Ամէն բան քեզմէ է, ու քուկիսներէ՛դ քեզի տուինք »: Ա. Մնաց. Իթ. 14:

2. Կ'առարկեն թէ, քանի որ մկրտուելու պայմանն հաւատալն է, եւ մանկունք հաւատալու կարող չեն, ուրեմն ի՞նչպէս կրնան մկրտուել. եւ այլն: Այս առարկութեան արդէն պատասխան մը տըրուած է գրուածոյս նախընթաց մասերուն մէջ ուրիշ տեսակէտով մը նկատելով խնդիրը: Բայց հոս մի քանի խօսք եւս համառօտիւ կրնանք յաւելուլ: Ի՞նչ, մանկունք հաւատք չունենալուն համար մկրտուելու չեն, կամ եթէ մկրտուած են, անվաւեր համարուելու է մկրտութիւննին: Չկան երբէք կամ չեն կրնար կենալ տգէտներ, որ չգիտնան թէ ի՞նչ է հաւատալն, ծանօթութիւն եւ զաղախոր անգամ չունենան հաւատալեաց վրայ եւ այդ մասին մտնուկներէն աւելի բան մը չըլլան: Եւ չկան կամ չեն կրնար կենալ չար եւ կեղծաւոր մարդիկ եւս որ մկրտուին Սիմոն մագին պէս: Եթէ մանկունք հաւատք չունենալուն համար նոցա մկրտութիւնը անվաւեր պարտի համարուել, եւ հնրկ է դարձեալ մկրտել զանոնք, երբ չափահաս եւ հաւատալու կարող ըլլան, ու հաւատան, այն տգէտ եւ կամ չար, անբարիչտ, կեղծաւոր ու անհաւատ մարդոց մկրտութիւնը վաւերական պարտի համարուել, քանի որ ասոնք ալ մկրտուելու համար իբրեւ պայման պահանջուած հաւատքը չու-

նէին երբ մկրտուեցան: Եւ եթէ այս անձինք դարձի գան, ճշմարտութեան լոյսը ճանչնան եւ հաւատան, դարձեալ պէտք է մկրտել զանոնք: Պ. Աւետարանիչ ինչ կ'ըսէ, այս մարդիկը դարձեալ կը մկրտէ: Եթէ չմկրտեր, ու առջի մկրտութիւնը բաւական կը համարի, ինչո՞ւ ուրեմն միանգամ մկրտեալ մանկուներ կրկին մկրտել կը պահանջէ, երբ չափահաս կ'ըլլան եւ կը հաւատան: Որ այս մանկութեան մէջ մկրտուողները անմեղ հասակնուն մէջ մկրտուեցան գէթ, թէեւ հաւատք չունէին: Պ. Աւետարանիչէն որոջ պատասխան մը կը խընդրենք. կա՞մ այն չափահասներն ալ կրկին մկրտելու է, եւ կամ՝ մանկութեան մէջ կատարուած մկրտութիւնը վաւերական համարուելու է:

Բ. Պատուելի Շիչմանեան կը ճգնի հաստատել թէ փոյն ընկածք կամ թաղածք մկրտութեան է մկրտութեան: Եւ բոլոր միւս կերպերը անվաւեր ու ազարդիւն են: Բայց այսպէս պնդած ժամանակը չտեսնելու հու գայ շատ մը պարագաներ, որ կը հարկադրեն զինք այնչափ վստահ չըլլալ իւր հաստատելու բաղձացած իրեն յաջող ելիցը վրայ: Եթէ անաչառ գործածէ իւր դատողութիւն, մկրտութեան արարողութիւնը կատարելու եղանակն եւս՝ մկրտութեան ժամանակին կամ անոր ենթակայից որ հասակին մէջ մկրտուելու խնդրոյն նման է. այսինքն՝ ո՞չ պատուէր մը կայ այս ձեւով ըրէք ըսելով, եւ ո՞չ ալ որոջ ու բացայայտ օրինակ մը, որ անտարակոյս լինիմք թէ՛ Քրիստոսի առաքեալք այս կամ այն եղանակաւ ընկղմամբ, հեղմամբ եւ կամ սրսկմամբ մկրտեցին: Պ. Աւետարանիչ խնդրոյն

այս մասը աւելի՛ աննպաստ պիտի դտնէ իւր նպատակին ծառայեցունելու եթէ անկողմնակալ եւ աննախապաշարեալ ուղւով քննելու ըլլայ: Զի, ինչպէս որ ըսինք, մկրտութեան ձեւոյն կամ եղանակին վրայ բնաւ հրահանգ տրուած չէ՛ ՚ի Սուրբ Գիրս, մանաւանդ որ պատճառներ շատ ունինք կարծելու թէ՛ եթէ առաքեալք երբեմն ընկղմամբ կամ թաղմամբ կը մկրտէին; շատ անգամ եւ ըստ մեծի մասին այդ կերպն ՚ի գործ չէին դներ:

Պատշաճ կը համարիմ հոս զխոնական դրուածքի մը թարգմանութիւնը դնել, այս նիւթիս վերաբերեալ, որ թերեւս լաւ պիտի լուսաբանէ խընդիրը:

« ԵՂԱՆԱԿ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ »

« Բողոքական աշխարհը շատ ժամանակէ հետէ ունի վէճ մը եւ անհամաձայնութիւն՝ ՚ի մասին Քրիստոնէական մկրտութեան եղանակն կամ կերպն, մէկ կողմը հաստատելով եւ միւս կողմը հերքելով, թէ ջրոյ մէջ ամբողջութեամբ թաղուել կամ ընկղմել եական ըլլայ այդ արարողութեան: Ընդ երկար ուսումնասիրելէ եւ մտածելէ յետոյ մեք որոշակի այս խնդրոյն բացատրական կողմը անցած ենք: Այս գաղափարին ՚ի նպատտ մեր փաստերը համառօտիւ կը դնենք հոս:

Մկրտիչեանց եւ մանկամկրտութեան ջատագովաց այս նիւթոյս վերաբերեալ խնդիրը՝ պէտք է յիշել որ, այն չէ՛ թէ ջրոյ մէջ թաղուելը վաւերական է թէ՛ ո՞չ: Մեք կ'ընդունինք թէ վաւերական է այն, եւ կ'ըզենք որ մեր հասարակութեան մէջ հողոյ այն անձինք որ նախամեծար կ'ընարեն այդ կերպով

մկրտուել՝ մկրտուին այդ եղանակաւ : Խնդիրը այն ալ չէ, թէ թաղմամբ կամ ընկղմամբ մկրտութիւնը յաճախ 'ի գործ կը դրուէ՞ր Քրիստոնէական եկեղեցոյ մէջ, զի կ'ընդունինք թէ նոքա այդ կերպով ալ կը մկրտէին : Նոքա այլ եւ այլ ժամանակներ եւ աւելի՛ յաճախ՝ այդ եղանակաւ կը մկրտէին, քան որչափ կրնայ հաստատուիլ թէ կ'ըլլար յաւուրս առաքելոց : Բայց յառաջիկայ խնդիրը պարզապէս է այս . թաղմամբ կամ ընկղմամբ Եփեսոսն է Պրոտոթեան համար : Մեր Մկրտիչեան եղբարք միաձայն կը պնդեն թէ էական է : Կ'ըսեն մեզի թէ ընկղման գաղափարը կը մտնէ նոյն իսկ մկրտութեան Քրոտոթեան մէջ, թէ մկրտութիւն եւ ընկղմամբ բառերը համազօր են եւ կրնան փոխարարքաբար Երարոս արեղ Գրոտիլ՝ Բոլոր Մկրտիչեանք կ'ընդունին թէ մկրտութիւն չըլլար առանց ընկղման, թէ այս Եփեսոսն է այդ արարողութեան : Արդ՝ մենք կը հերքենք զայս, եւ մեր այս հերքումը արդարացունելու համար հետեւեալ պատճառները յառաջ կը բերենք :

1. Ընկղման արարողութիւնը չհամարուիր թէ ընդհանուր գործածութեան յարմար է : Բազմիցս սլաշտօնէից առողջութեան վիճակը այնպէս կ'ըլլայ, որ նոցա համար ապահով բան չէ՝ ջուրը մտնել . նաեւ մկրտուիլ ուզողներուն առողջութիւնը աւելի՛ յաճախ այնպէս կ'ըլլայ որ ապահով չէ՝ անոնց համար ընկղմամբ մկրտուիլ : Երկրիս տմանց մասանց մէջ, եւ մասնաւորապէս տարւոյն մի քանի եղանակաց մէջ, շատ անյարմար պիտի ըլլայ, եթէ ոչ անգործադրելի, ընկղմամբ մկրտութիւնը : Արդ՝ հաւանական է որ մեր ամենօրհնեալ Տէրը, որոյ

նպատակն է իւր կրօնքն տիեզերական ընել, յարէ անոր հետ եւ էական ընէ այնպիսի արարողութիւն մը որ անյարմար է ընդհանուր կերպով 'ի գործ դնել :

2. Ջրով մկրտութեան նշանակութիւնը կը ցուցնէ թէ ընկղմամբ մկրտութեանն մատակարարելու ուրիշ եղանակ մը աւելի յարմարագոյն է : Ջրով մկրտութիւնը հոգեւորական մկրտութեան նշան կամ դրուագ մ'է : Նա կը ցուցնէ Հոգւոյն Սրբոյ մաքրարար կամ սրբացուցիչ գործողութիւնները՝ բացայայտիչ նշանով մը : Վասն որոյ Ջրով մկրտութեան եղանակը կրնար սպասուիլ որ համապատասխանէ այն եղանակին՝ որով կը ներկայացուի աստուածային Հոգին՝ իբրեւ իջեալ սրտին վրայ : Բայց այս՝ միօրինակարար ըսուած է Բաֆել կամ արկել : « Իմ Հոգիս ձեր վրայ պիտի թափեմ » : « Ձեր վրայ մաքուր ջուր պիտի արկեմ, եւ դուք մաքուր պիտի ըլլաք » : Հոգւոյն Սրբոյ այս հեղումը եւ սրսկումը կը կոչուի 'ի Սուրբ Գիրս մկրտութիւն 'ի Հոգին Սուրբ, որոյ նշան դրուած է Ջրով մկրտութիւնը : Վասն որոյ յայտնի՝ կը տեսնուի թէ ջուրը թափել կամ սրսկել՝ Ջրով մկրտութեան եթէ ոչ ամենէն յարմար՝ գէթ աւելի՛ յարմար եղանակ մը լինելու է :

(Բսուած է թէ Ջրով մկրտութիւնը չնշանակէր Հոգւոյն մկրտութիւնը, այլ յաւելա Քրիստոսի Բողոմանս յարաբեանք նշանակ է : « Անոր հետ թաղուեցանք մկրտութիւնով մահուան համար » : Տես Հռովմ. 2. 4 : Կող. Բ. 12 : Բայց թէ որ Ջրով մկրտութիւնը նշան չէ՝ Հոգւոյն մկրտութեանը, ինչո՞ւ ուրեմն Քրիստոսի խօսած այն երկու մկրտու-

Կ. 25:

թիւնները այնպիսի անմիջական կցորդութեամբ դրուած են: « Թէ որ մարդ մը Չորէն ու Հոբէն չը ծնանի, չկրնար Աստուծոյ թաղաւորութիւնը մտնել »: « Յովհաննէս ջրով մկրտեց, բայց դուք սակէ շատ օրեր չանցած՝ Սուրբ Հոբէն վրտի մկրտութիւք »: Յովհ. Գ. Ծ: Գործ. Ա. Ծ: Եւ ինչու համար Հոգւոյն Սրբոյ վերանորոգումը կը ներկայացուի մկրտութեան ձեւոյն տակ, եթէ նկարագրական մկրտութիւնը այս նորոգութեան ստուերը չէ: Այն տեղերը, յորս հաւատացեալոց համար կ'ըսուի թէ « թաղուած են Քրիստոսի հետ մկրտութեամբ մահուան համար », չթուի թէ ջրով մկրտութեան եղանակին վերաբերութիւն մ'ունի: « Առաքեալը կը խօսի հոս » կ'ըսէ, Մր. Ճիւտսըն, կարի՛ պատշաճապէս, « հոգեւոր խնայողութեան եւ հոգեւոր մարտնչութեան վրայ »: Հոգեւոր մկրտութեամբ կամ վերանորոգութեամբ՝ հաւատացեալը հոգեւորապէս կը կոչուի Քրիստոսի հետ », կը մեռնին անոր հետ, կը թաղուին անոր հետ, եւ յարութիւն կ'առնուն անոր հետ « կենաց նորոգութեան եւ նոր հնազանդութեան » համար: Բայց բոլոր այս բաները ինչ ունին ջրով մկրտութեան եղանակին հետ: Եւ որչափ կը զօրեն հաստատելու թէ ամբողջական ընկղմումն 'ի ջուր, էական է այդ արարողութեան:)

Յ. կ'ընդունուի՛ թէ բնագրին բառերը որ մկրտութեան արարողութիւնը կը նշանակեն, կրնան այնպէս գործածուիլ՝ որ ցուցնեն ընկղմում, բայց այս ալ ճշմարիտ է որ նոքա այդ մասնաւոր նշանակութեան մէջ սահմանափակեալ չեն: Եւ այս յայտնի՛ է

(1) Նոյա սորոգութեան: Նոքա ծագած են Յունական վաճիթ բառէն, բնա մը՝ որ այժմ ընդունուած է թէ միշտ ընկղմում չնշանակիր: Մր. Քէրսըն (Mr. Cerson) վերջի ժամանակին Մկրտութեան մատենագիր մը, կը հաստատէ թէ այս բառը կը նշանակէ, ինչպէս ընկղմել՝ նաեւ Ներքէ, եւ ներկել կամ դունաւորել՝ որ եւ էջէ եղանակաւ:

Սա՛ եօթանասնից թարգմանութեան մէջ գործածուած այն բառն է, ուր Նարուգոգոնոսորի մարմնոյն համար կ'ըսուի թէ երկինքին ցօղովը կը խրջէ: Դան. Ե. 21: Անշուշտ Նարուգոգոնոսորայ մարմնը չընկղմեցաւ ցօղը մէջ:

(2) Նոր կտակարանի թարգմանիչք ուր որ մկրտութիւն նշանակող բառերը թարգմանած են, միօրինակ՝ լուսնալու ընդհանուր նշանակութիւնն ստուած են անոնց: Տէս Երբ. Թ. 10: Դուկ. ԺԱ. 58: Մարկ. Է. 4: Եւ խիստ շատ տեղեր որ նոքա տառադարձեր են (սչ թարգմաներ) կցեր են զանոնք (Անդրիերէնի թարգմանութեան վրայ խօսելով) այն մասնիկներուն հետ, որ կը ցուցնեն թէ նորատակ ունէին գործածել զայնս նոյն ընդհանուր նշանակութեամբ: Այս ճշմարիտ է բոլոր այն պարագայից մէջ, յորս մարդոց համար կ'ըսուի թէ մկրտուեցան ջրով կամ Հոգւով:

(3) Ամենէն համբաւաւոր բառագիրք (բառարան չինողներ), նախնի եւ արդի, միաբան են այս խնդրոց տակ եղած բառերուն աւելի ընդարձակ նշանակութիւն տալու մտտին՝ քան պարզ ընկղմում: Արդարեւ Մր. Քէրսըն որ կ'ըսէ թէ վաճիթը « միշտ կը նշանակէ ընկղմել », կ'ընդունի՛, սակայն, թէ « բոլոր բառագիրք իրեն դէմ են »:

(4) Բառգրոց հեղինակներուն դատողութեանը կրնայ յարիլ ամենէն ուսեալ եւ հոչակաւոր մեկնչաց եւ աստուածարանիցն ալ, Փիտղոյ, Դորայ, Զանքէոսի, ... Ուիլիամի, Կալվինի, եւ այլն, եւ այլն: Ուիլիամի, Համմոնտ, Ուոլ, Փուլ եւ շատ ուրիշներ, կը խօսին մկրտութեան եղանակին վրայ իբրեւ ո՛չ էական բան մը, դատելով թէ կրնայ այն ըլլալ ընկղմամբ կամ ուրիշ կերպով:

(5) Բայց այն բանը որ խիստ վճռական է մկրտութիւն նշանակող բառից իմաստին նկատմամբ՝ անոց բործածութիւնն է: Ստոյգ է որ այդ բառերը գործածուած են թէ՛ սրբազան եւ թէ՛ արտաքին մատենագիրներէն ուրիշ նշանակութեամբ բաց ՚ի ընկղմումէ: Այսպէս գործածուած են Հին Կտակարանին Անկանոն գրեանց մէջ, եւ այնպէս թարգմանուած են Անգղիացի թարգմանիչներէ: Տես Էկլէսիաստիկէս 17. 25: Յուդիթ. Ժ. 7: Այսպէս գործածուած են նախնի Քրիստոնեայ հայրերէն: Որովհետեւ կը ներկայացնէ սեզանին վրայի փայտը որուն վրայ ջուր Եփէջնի Եղիայի հրամանաւ, (Գ. Թագ. ԺԸ. 55,) իբրեւ մկրտեալ: Կիպրիանոս, Հերոնիմոս, եւ մի քանի այլ հարք կը հասկնային սա կանխասացութիւնը, « Չեր վրայ մաքուր ջուր պիտի սրսկեմ, եւ գուք մաքուր պիտի ըլլաք »: (Եզեկ. 12. 25) իբրեւ ջրով կատարուելիք մկրտութեան վերաբերող: Նախնի Քրիստոնեայք նաեւ արտասուօք եւ արեամբ մկրտութիւն բառերը կը գործածէին իբրեւ սիրելի ասացուածք:

Նոր Կտակարանին մէջ մկրտութիւն նշանակող բառերը այն կերպով գործածուած են, որ չեն կր-

նար նշանակել ընկղմում: Իսրայէլի ժողովուրդը «Մովսէսով մկրտուեցան ամպին ու ծովուն մէջը»: (Ա. Կոր. Ժ. 2:) Բայց մենք դիտենք որ անոնք չմկրտուեցան ջրոց մէջ ընկղմելով, զի նոքա « ծովուն մէջէն ցածառջ քալեցին »: Ել. ԺԳ. 22: Հրէայք սովոր էին մկրտել ո՛չ միայն իրենց գաւաթներն ու փարջերը, այլ եւ իրենց սղնձէ ամաններն ու անկողիներն ալ: (Մարկ. Է. 4.) Բայց ամենեւին հաւանական չէ՛ որ անոնք կը լուային իրենց խոշոր ամաններն ու անկողիները, դայնա ջրոց մէջ ընկղմելով:

4. Նոր Կտակարանին մէջ պատմուած մկրտութեանց շատին յարակից պարագանքը ընկղմամբ մկրտութենէն ուրիշ եղանակ ալ լինել կը ցուցնեն: Թող անկողմնակալ ընթերցող մը Պէնտէկոստէի օրուան երեք հազար անձանց մկրտութիւնը նկատողութեան առնու, որ տեղի ունեցաւ օրուան մեծագոյն մասն անցնելէն վերջը, կամ Պետրոսի մկրտութիւնը, այն մասնաւոր դիրքին մէջ յորում կը կենար նա, կամ Կուռնելիոսի եւ իւր ընտանեաց մկրտութիւնը, որ ատեն առաքեալն ըսաւ, « կըրնայ մէկը ջուրը արգիլել », այսինքն՝ որ պիտի բերուէր ջուրը, կամ բանտապետին եւ իւր տանը, իւր բանտարկեալներուն մէկուն ձեռքովը, վրդովեալ եւ ահաբեկ եղած քաղաքի մը մէջ, եւ դիւչերուան խորութեան մէջ: Եւ ի՛նչ եղանակաւ որ համարի թէ այս անձինք մկրտուեցան, ինքզինք դժուարութեան մէջ պիտի դանէ ընկղմամբ մկրտուելին հետեւցունելու մասին:

5. Ընկղմամբ մկրտութիւնը բնաւ եակն չէր հա-

մարուէր մկրտութեան՝ մինչեւ վեչտասաներորդ դարու բարեկարգութենէն յետոյ: Կ'ըսենք Էական, զի պէտք է միտք բերուի որ այս է վիճարանութեան կէտը: Թէ ընկղմամբ մկրտութիւնը յաճախ կը մատակարարուէր նախնի եկեղեցւոյ մէջ, (ժամանակ եղաւ որ մանկամկրտութեան ջատագովաց մէջ աւելի յաճախ կ'ըլլար քան որչափ հիմա, կամ քան որչափ տեղի կ'ունենար առաքելոց օրերը,) մենք պատճառ չենք տեսներ տարակուսելու: Բայց ժամանակ ժամանակ, երբ ընկղմամբ մկրտութիւնը ամենէն աւելի ընդհանուր կերպով 'ի դարձ կը դրուէր, հիւանդները միշտ ուրիշ եղանակաւ կը մկրտուէին, եւ այսպիսի մկրտութիւնք կատարելագոյն վաւերական կը համարուէին միւսներուն պէս:

Խնդիր մ'առաջարկուեցաւ Կիպրիանոսի, իբր երրորդ դարուն մէջերը, թէ արդեօք Քրիստոնեայ համարուելո՞ւ են այնպիսիք որ միայն ջրոյ սըրսկմամբ մկրտեալ են եւ ո՛չ թէ լուանալով կամ թաղելով: Որուն պատասխանեց այս գիտուն հայրապետը, թէ « ջրոյ սրկումը հաստարապէս վաւերական է ջնշեալ Լատինացի: Ի՞նչ կ'ըսէ, թէ նախնի Քրիստոնեայք սրսկումը սպօրինաւոր չէին համարեր, մանաւանդ երբ հարկը կ'ստիպէր, կամ եթէ ընկղմամբ մկրտութիւնը յարմարութիւն չէր առնուր »: Կալվին կ'ըսէ մեզի, թէ « Մկրտութեան նիւթը պահուելով (ջուրը) եկեղեցին 'ի սիզբանէ անտի ազատութիւն կը վայելէր արարողութիւնք քիչ մը տարբեր կատարելու »: Տօքթըր Ուօլ, որ ընկղմամբ մկրտութեան կո՛ղմը յարած էր, կ'ըսէ, « Արտաքրոյ կարգի պարագայից մէջ, երեսին վրայ ջուր

թափելով մկրտութիւնը կը համարէին նախնիք բաւական մկրտութիւն: Ասոր շատ ապացոյցք կան »:

Առ Հոռոյէյ եպիսկոպոս թղթոց հեղինակը, որ է գիտուն եւ ջերմեռանդ Մկրտիչեան մը, կ'ընդունի թէ, յետ առաքելոց հազար երեք հարիւր տարի շարունակ սրսկում ընելով մկրտելու թոյլ կը տրուէր արտաքոյ կարգի դիպաց մէջ »: Նաեւ Մր. Ռօպինսըն, գիտուն Մկրտիչեանը, կ'ընդունի թէ « Նախ քան զբարեկարգութիւն, սրսկմամբ մկրտութիւնը վաւերական կը համարուէր հարկեցուցիչ պարագայից մէջ:

Վասն որոյ այն վարդապետութիւնը թէ չկրնար վաւերական մկրտութիւն ըլլալ առանց ընկղման, նոր բան է: Նախնի Քրիստոնեայք այդպէս չէին ընդուներ: »

Մկրտութիւնը մատակարարուելու եղանակի մասին այս փաստաբանութիւնք եւս ընթերցողին անկողմնակալ դատողութեանը կը յանձնենք թէ ինչ աստիճանի զօրութիւն ունին:

Հոս կը յարենք մեր զգացումն այս մասին, թէ բաւական է որ մկրտութիւնը ջրով ըլլայ ըստ Սահմանադրութեան Քրիստոսի եւ ըստ օրինակի առաքելոց եւ աշակերտաց նորա: Բայց հոգ չէ՛ որ ըլլայ այն՝ ընկղմամբ, հեղմամբ կամ սրսկմամբ: Զի եթէ մկրտութիւնը մատակարարուելու եղանակը Էական մաս մը ըլլար այդ արարողութեան, անտարակոյս որոշ որոշ եւ մանրամասնաբար հրահանգ պիտի տրուէր Սուրբ Գրոց մէջ: Բայց ո՛չ Քրիստոս բան մը ըսած է այդ մասին եւ ո՛չ իւր առաքեալները:

Զկրնար Պ. Աւետարանչի « Ազատամիտ բարեկամը » պատասխանել իրեն թէ, մինչեւ իսկ եթէ Սուրբ Գրոց մէջ յայտնի յայտնի օրինակներ եւ պարզ ոճով հրահանգ տրուած ըլլար որ մկրտութիւնը ընկղմամբ մատակարարուելու է, պարագաները, ժամանակը, եւ այլն փոխուելով պատուէրին կատարումը կ'եղանակաւորի: Այո՛, ազատամիտ քրիստոնէի մը խորհելու կերպն այն է, որ դարուց հոլովմանց մէջ այսպիսի բաներ յարմարցուն մարդոց բնակած երկրին կլիմային, քաղաքական սովորութեանց, ժողովրդոց կրթութեան որպիսութեանն ու աստիճանին, նոցա մասնաւոր ճաշակին, զգացմանց ու այլ եւ այլ վիճակաց եւ պարագայից, զի ծէսերն ու արարողութիւնք ուրիշ բան չեն, բայց արտաքին կեղեւք միայն, որոց մէջ կըրնայ պահուիլ կրօնքին ոգին ու կեանքը:

Ի՛նչ. դատապարտելի՞ կը համարուի ըսել թէ ընկղմամբ մկրտութիւնը անհրաժեշտ կերպ մը չէ՛ արարողութիւնը մատակարարելու, եւ թէ մարդ մը կրնայ իր ճաշակին եւ բնական բերմանց համեմատ ուրիշ կերպ մը ընտրել, քանի որ, մանաւանդ, որոշ եւ յատուկ հրաման մը չկայ եւ ո՛չ ալ յայտնի օրինակ մը մկրտելու կերպին վերաբերեալ: Ամենեւին ոչ. այդ իրաւունք չէ՛ բնաւ: Մարդ մը պէտք է ազատ ըլլայ այդ մասին, երբ անյարմար կը սեպէ այն կերպը այլ եւ այլ նկատողութեամբ, եւ նախամեծար ընտրէ հեղմամբ կամ սրսկմամբ մը կըրտուիլ կամ մկրտել իրենները քան թէ ընկղմամբ: Նմանապէս ազատ է մարդ մը ընտրել իրեն համար ընկղմամբ կամ թաղմամբ մկրտութիւնը:

Բոտ մեզ, այս այնպիսի պարագայ մ'է, որ կըրնանք ըսել Պօղոս առաքելոյն հետ. « Թող ամէն մարդ իր միտքը հաճեցունէ »: Հոովմ. ԺԳ. 5:

Ես հոս քանի մը օրինակ յառաջ կրնամ բերել մինչեւ իսկ տրուած օրինակներու, պատուէրներու, կամ յայտնի թելադրութեանց Սուրբ Գրոց մէջէն, զորս Քրիստոնեայք ՚ի դործ չեն դներ: Եւ ո՛չ միայն այլ եւ այլ դաւանութեանէ եղող քրիստոնեայք, այլ եւ Պ. Աւետարանիչն իսկ ասոնցմէ շատը ՚ի գործ դնելու մասին անխոյժ է:

1. Իբարտ ոտ լուս:

« Հապա թէ որ ես Տէրս ու վարդապետս ձեր ոտքերը լուսցի, պէտք է որ դուք ալ իբարտ ոտքերը լուստ: Վասն զի ձեզի օրինակ մը տուի, որ իբարտ ես յեզ ըրի դուս ալ ընէ »: Յովհ. ԺԳ. 14, 15:

2. Հիւանդները իւրով օծել:

« Թէոր ձեզմէ մէկը հիւանդ ըլլայ, եկեղեցիին երէցները թող կանչէ. ու անոր վրայ աղօթք թող ընեն ու Տէրոջը անունովը իւրով ինդ օծեն զանիս »: Յակ. Ե. 14 »:

3. Արօնց Բաց Գլուխ ողբէի կայնել:

« Ամէն էրիկ մարդ, որ գլուխը գոց աղօթքի կը կայնի, կամ մարդարէութիւն կ'ընէ, անպատիւ կ'ընէ իր գլուխը »: Ա. Կոր. ԺԱ. 4:

4. Կանոնց Բաց Գլուխ ողբէի կայնել:

« Եւ ամէն կնիկ որ գլուխը բաց աղօթքի կը կայնի, կամ մարդարէութիւն կ'ընէ, անպատիւ կ'ընէ իր գլուխը »: Ա. Կոր. ԺԱ. 5: « Դուք ձեզմէ՛ դատեցէք, կը վայլէ՞ կնիկ մարդու գլուխը բաց աղօթքի կայնիլ Աստուծոյ առջեւը »: Համար 15:

5. Ամն բան հասարակաց ընել:

« Եւ բոլոր հաւատացեալները մէկտեղ էին, եւ ամէն բաներնին հասարակաց էր: Ու ստացուածքնին... կը ծախէին, ու անոնց [բէնը] կը բաժնէին ամենուն, որուն որ բան մը պէտք ըլլար »: Գործ. Բ. 44, 45:

6. Սրտոցումէք ծախել եւ ողորոց տալ:

« Ըսաւ անոր (պատանիին) Յիսուս, թէ որ կ'ուզեն կատարեալ ըլլալ, դնա՛ ունեցածդ ծախել եւ տո՛ւր աղքատներուն, ու երկինքը դանձ պիտի ունենաս, եւ եկո՛ւր իմ հետեւէս »: Մատթ. ԺԹ. 21: Եւ այլն:

7. Ձերար համբարել- Բարեւել:

« Բարեւ տուէք իրարու՝ սուրբ համբուրով »: Ա. Կոր. ԺԶ. 20: Բ. Կոր. ԺԳ. 12: Եւ այլն:

8. Աւերարանի Կարողիչ խնոր սպասադէտ լինին:

« Եւ ըսաւ անոնց (Յիսուս իր աւաքեալներուն), ծամբու համար բան չառնէք, ո՛չ դաւազան, եւ ո՛չ պարկ, ո՛չ հաց՝ եւ ոչ ստակ, ո՛չ ալ կրկին հանդերձ ունենաք »: Դուկ. Թ. 3: Մարկ. Զ. 8:

9. Որոնք փոշին Բոխիւն:

« Ու անոնք որ ձեզ չեն ընդունիր, երբոր ան քաղաքէն կ'ելլէք, ձեր ոտքերուն փոշին անգամ թօփվեցէք՝ իրենց դէմ՝ վկայութիւն ըլլալու համար »: Դուկ. Թ. 5: Մարկ. Զ. 11:

10. Բարողութեան Գացած Ժամանակ Ճամբան Ռիտան Բարեւ տալ:

« Հետերնիդ քսակ մի՛ առնէք, ո՛չ ալ սպարկ, եւ ո՛չ կօշիկներ, ու ճամբան Ռիտան մը Բարեւ մի տո՛ւ »: Դուկ. Ժ. 4:

11. Բարողութեան Նստած Կրեւով ընել:

« Եւ տեսնելով ժողովուրդները լեռը ելաւ (Յիսուս), ու երբոր նստաւ, իր աշակերտները քովը դացին, եւ իր բերանը բանալով կը սորվեցունէր անոնց, ու կ'ըսէր, Երանի՛ հոգեւով աղքատներուն... »: Մատթ. Ե. 1—5: « Եւ Գիրքը գոցելով (Յիսուս) տուաւ սպասաւորին ու նստաւ, եւ ժողովրդանոցը եղողներուն ամենը աչքերնին տնկած անոր կը նայէին: Եւ սկսաւ անոնց ըսել. Այսօր այս գրուածը կատարուեցաւ եւ ձեր ականջները լսեցին: Եւ ամենքը անոր վրայ կը վկայէին, ու կը դարմանային անոր բերնէն ելած շնորհալի խօսքերուն վրայ »: Դուկ. Գ. 20—22:

12. Իբր երեսուն տարուան Պրոքուէլ, ինչպէս Յիսուս:

« Եւ ինքը Յիսուս սկսեւ էր գրեթէ երեսուն տարեկան ըլլալ » (մկրտուած ատենները): Դուկ. Գ. 25:

15. Հարողութեանը ցերեզ ընել այլ բէնէրէ Գայն: Ձի արդէն՝ Ընթրիք՝ բառը կը նշանակէ երեկոյեան հաց:

« Եւ ընթրեալ որ կ'ըլլար », Յովհ. ԺԳ. 2: « Նոյնպէս ալ դաւաթը առաւ ընթրեալն ետեւ »: Դուկ. ԻԲ. 20: « Ինչու որ ես Տէրջմէն ընդունեցի ան որ ձեզի ալ աւանդեցի՝ թէ Տէր Յիսուս իր մատնուած բէնէրէ հաց առաւ: Եւ գոհանալով կտրեց ու ըսաւ. Առէք՝ ու կերէք... » Ա. Կոր. ԺԱ. 25—25:

Կրնայինք այս օրինակաց վրայ ուրիշներ ալ յաւելուլ, բայց այսչափս բաւականէն ալ աւելի է մեր նպատակին ծառայելու:

Պարոն Աւետարանիչ, Սուրբ Գրոց մէջ գտնուած այս « օրինակներուն » եւ « պատուէրներուն » ինչ ունիս ըսելիք: Դու ինքնդ քեզի համար ինչ պատճառ յառաջ կը բերես քու զանցառութիւնդ կամ անոնցմէ զարտուղիլը արդարացունելու համար, քանի որ ճիշդ ու զգուշաւոր եւ խղճահար հետեւող մը լինիլ կը դաւանիս դու զքեզ Սուրբ Գրոց մէջ պարունակեալ « օրինակաց » եւ « պատուէրներուն », միանգամայն դատարարտելով զայլս՝ ընդ որս եւ մեզ, որք չենք քեզ զազարտարակից:

Մեկնութիւններս պիտի տաս: Մեկնութիւն եւ Աստուածաբանութիւն, եւայլն, չենք ուզեր ըսել քեռէ եւ չենք ընդունիր, զի այդ կերպ պատասխան՝ քու քարոզած սկզբանդ անհամաձայն է: (Մկրտութիւն էրե՛ս 82:) Պէտք է պատասխանես Սուրբ Գրոց պարզ խօսքերովը եւ անոր մէջի բառերովը: Բայց գիտե՛մ, հոս մեծ դժուարութեան մէջ կ'իյնաս, բայց ինչ ընենք, պատճառը դուն ես, որ մեկնութեանց դէմ այնպիսի ուղի մը ցուցնելով, ինքզինքդ ալ սահմանափակ վիճակի մը մէջ դնելու պարտաւորեալ ես: Իսկ գալով մեզի, մենք մեկնութիւն ալ կ'ընդունինք, Աստուածաբանութիւն ալ, միայն թէ Սուրբ Գրոց սղոյն հակառակ չըլլայ, եւ էական ու հիմնական քաջայայտ վարդապետութեանց Աւետարանին, չդաշնայ: Չենք խորշիւր անուններէ եւ բառերէ, չենք վախնար ծիսից եւ արարողութեանց ձեւոյն փոփոխութիւններէն եւ եղանակաւորութիւններէն, միայն թէ Քրիստոնէական սուրբ եւ հոգեւոր կրօնին Աստուածազիր սկզբանց անհամաձայն չըլլայ: Տեսա՞ր « նախապա-

շարմունքէ ազատ », եւ « ազատամիտ » մարդու մը ունենալիք ընթացքը:

Բայց թող ներուել՝ մեզ հարցունել Պ. Աւետարանիչին, նաեւ թէ փոյթ կը տանի՞ Սուրբ Գրոց մէջ հրահանգ, պատուէր կամ օրինակ չունեցող բաներէ զգուշանալու, քանի՞ որ այնչափ բժախնդիր եւ ճշդիւ հետեւելու նախանձաւոր կը ցուցնէ ինքզինքը: Մենք կ'ընդունինք բաւաւոր մեկնութիւն, վերաբանութիւն, եւ տրամաբանութեան սր եւ իցնէ հետեւական ձեռնարկութիւն: Եւ ազատ կ'ըզգամք մեր անձերը այլ եւ այլ բաներ մակարերելու, որք կարեւոր կը համարինք մեր կրօնը պաշտելու մէջ:

Կը հարցունենք եւ կը խնդրենք որ պատասխանես մեզի թէ, դու որ խրոխտալով կը դատապարտես մանկանց մկրտութեան ջատագոյնները, փաստ բռնելով ձեռքիդ մէջ թէ ի Սուրբ Գիրս բացայայտ օրինակ չկայ կամ պատուէր այդ բանին, կը հաճիք ըսել թէ ո՛ւսկից կ'առնուք կանանց ալ հաղորդութիւն տալը: Ո՛ւսկից կ'առնուք այդ հեղինակութիւն, Սուրբ Գրոց մէջ ս՛ր կայ « օրինակ » կամ « պատուէր »:

Ո՛ւր կայ օրինակ կամ պատուէր, որ աւազան կամ լոգարան շինուելու է, որ մկրտուողը հոն մտնէ ընկզմամբ մկրտուելու համար: Բայց ի Սուրբ Գիրս մկրտութեան ջրոյ վրայ երբ կը խօսուի, կը կարդանք թէ գետոյ մէջ, կամ ճամբան ջուրի մը հանդիպելով՝ անոր մէջ մկրտուեցան:

Ո՛ւր կայ գրուած որ մկրտուող անձը երկու անգամ ջրոյ մէջ թաղելու է: Կոնակի վրայ եւ երե-

սին վրայ ընկղմելու է ջրոյն մէջ: Աջ կամ ձախ ձեռքին վրայ առնելով մկրտելու է, միայն երկու անգամ ընկղմելու է ջրոյն մէջ, եւ ո՛չ երեք, որ թերեւս աւելի՛ յարմարագոյնն ըլլայ, ըստ որում՝ յանուն Ամենասուրբ Երրորդութեան պիտի ըլլայ մկրտութիւնը: Եւ այլն, եւ այլն:

Ո՛ր կայ գրուած, թէ անշուշտ միայն հաւատալու կարող չափահասք պէտք է մկրտուին, բայց մանկունք՝ բնաւ, որ կը համարձակիս մի անգամ յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ մկրտեալները, կրկին մկրտել: Մինչ մանկամկրտութեան համար այսչափ զօրաւոր փաստեր կենալով, ինչպէս տեսանք, վճիռ մը ո՛չ ոք ուղղագոյն կրնայ տալ թէ մանկանց մկրտութիւնը անվաւեր է, կամ անընդունելի:

Ինչ որ ըսինք առաջ, դժբախտ կը կրկնենք, թէ Աւետարանիչ Պատ. Գէորգ Շիշմանեանի գաղափարները ներկայացունող այն մէկ երկու տեսարակները Աւետարանին էական վարդապետութիւնքը հիմն ի վեր կը տապալեն, եւ Քրիստոնէական սուրբ եւ հոգեւոր կրօնին ոգին ի չէք դարձունել կ'ըստպանան, եւ այնպիսի խնայանք կը պարունակեն, որ ողջամիտ եւ ուղղագոյն Քրիստոնէայ մը չլինար առանց սոսկալու, եւ միանգամայն պժգալու նախ Վրանին, զի պիտի գտնէ նոցա մէջ Սուրբ Գրոց խօսքերը բռնազրօսած ու չարաչար գործածուած, եւ նոցա խնասք ծամածուած: Եւ ո՛չ միայն այսքան, այլ անոնց մէջ կը տեսնուին հակասութիւնք, անել ճանապարհ, հակառակ Աւետարանի եւ ուղիղ բանի վարդապետութիւնք, եւ պարզ մո-

լորութիւնք, որոց միամիտ հետեւողք ի կարուստ մասնուելու վտանգին մէջ են:

Մասնաւանդ երկու երեսէն տեսարակին մէջ, ինչպէս առաջ ըսուեցաւ, շատ յայտնի կ'երեւին այս արտաւոյց եւ նորօրինակ վարդապետութիւնք:

Պ. Աւետարանիչ հոն պարզապէս կ'ըսէ թէ առանց ընկղմամբ ի չափահասութեան մկրտուելու՝

Գ. Առջեւ զե՛ կընար ընել: Եւ ահա այս է իւր խօսքերը բառ առ բառ: «Եթէ Աստուծոյ միածին որդւոյն անսխալ օրինակին չես հետեւած, (ըսել կուզէ՛ եթէ ընկղմամբ չես մկրտուած), եւ Անոր պատուէրը չես կատարած՝ առաքելոց քարոզութեանը համաձայն (այսինքն՝ եթէ չափահասութեան մէջ չես մկրտուած), ջնջուե՛ կընաս Աստուծոյ առջեւ ընել»:

Ի՞նչ ըսել կուզէ Պ. Աւետարանիչ, ըսել կ'ուզէ թէ Քրիստոս աղօթք չէ՛ր ընէր մինչեւ որ չմկրտուեցաւ: Ի՞նչպէս կրնայ ապացուցանել թէ նա մինչեւ երեսուն տարի աղօթք չըրաւ: Քրիստոս իրբեւ Հրեայ բարեպաշտ պատանի մը եւ Քրիստոսարդ՝ ապրեցաւ իւր ժողովուրդին մէջ, եւ իւր երկոտասանամեայ հասակին մէջ կը տեսնենք զինք տաճարին մէջ, «որ վարդապետներուն հետ նստեր անոնց մտիկ կ'ընէր ու անոնց բան կը հարցունէր»: Եւ երբ իւր մայրը բաւ իրեն սա՛ խնատով, Որդեակի, ինչո՞ւ մեզի այսչափ քեզ փնտուել տուիր, անոնց պատասխան տուաւ, «Զիս ինչո՞ւ կը փնտուէք, չէի՞ք գիտեր թէ ինձի պէտք է որ իմ Հօրս աստիճանը ըլլամ»: Միթէ հնար է նա աղօթք չէ՛ր ընէր ըսել, առանց լսողին գարմանքը շարժելու: Յիսուս

տաճարը կ'երթար, իւր այլ ազգակցաց եւ կրօնակցաց հետ, զոր իւր Հօրը տունը կը կոչէ, իւր ընկերները աղօթք կ'ընէին եւ ինք չէ՞ր ըներ աղօթք իւր Հօրը, որոյ սիրելի Որդին էր եւ որուն հաւներ էր Երկնաւոր Հայրը:

Գարձեալ. Պ. Աւետարանիչ չը՞գիտեր Աւետարանին մէջ պատմուած այս հանրածանօթ դէպքին, Քրիստոսի մկրտութեանը, Յովհաննու մկրտութիւն ըլլալը, այնպէս որ եթէ իւր ատէէ առիթ առնելով զօրաւոր ձեռնարկութիւններ ալ ընելու կարող ըլլար, չպիտի զօրէր, զի մեր մկրտութիւնը հիմա Յովհաննու մկրտութիւնը չէ՛, այլ Քրիստոնէական մկրտութիւն: Մեր Պարոն Աւետարանիչ իւր փաստերը խախտւած եւ վաղափուլ հիման վրայ կը հաստատէ: Չենք գիտեր ինչ ըսել կ'ուզէ այդպիսի մտացածին վարդապետութիւններ յերկրելով, իրր թէ ատով մկրտութեան՝ փրկութեան էական լինելը՞ պիտի հաստատէ, եւ հասարակութեան ուշադրութիւնը՞ պիտի գրաւէ իւր այդ նորատեսիլ պաշտօնին: Եթէ առանց չափահասութեան մէջ մկրտուելու աղօթք չիրնար ըլլուիլ, մանկունք առանց աղօթքի՞ պիտի մեծնան: Ի՞նչ կ'ըլլայ անոնց վիճակը, ի՞նչ մեծ արտօնութենէ զրկել է այդ բանը զանոնք, եւ ի՞նչ մեծ եւ ամենակարեւոր միջոց մը կը պահսի զանոնք բարեպաշտութեան եւ Աստուածապաշտութեան մէջ վարժեցունելու: Ուրեմն պարանօպ է Սողոմոնի ներշնչեալ պատուէրը, թէ «Եւ քու ստեղծիչը երիտասարդութեան օրերուն մէջ յիշէ»: Նաեւ ի՞նչ կ'եզրակացունէ սա բնաբաններէն, «Ձիս կանուխ փնտուղները զիս կը գտնեն»:

Ժող. ԺԲ. 1: Առակ. Ը. 17: «Կրթէ՛ մանուկը իր ճամբան սկսած ատենը, որ իր ծերութեան ատենն ալ անկէ չխտորի»: Առակ. ԻԲ. 6: «Եւ դուք՝ հայրեր, ձեր սրդիները մի՛ բարկացունէք, հասկա՛ անոնք մեծցուցէք Տէրօջը վարժութիւնովը ու խրատովը»: Եփես. 2. 4. եւ այլն, եւ այլն:

Միթէ հնար է զաւակները, մանուկները «կրթել», «մեծցունել Տէրօջը վարժութիւնովը ու խրատովը», առանց Տէրօջը օգնութեան, ո՛չ միայն ծնողաց, այլ եւ մանկանց ալ: Չպարտին մանկունք եւս աղօթել, եւ հարկը չը՞ պահանջեր որ անոնք աղօթք ընեն առ Աստուած, որ իրենց «կրթութեան» եւ «Տէրօջը վարժութեամբը մեծնալու» այս մեծ գործին մէջ յաջողին: Չպարտին ծնողք աղօթք ընել սորվեցունել իրենց զաւակաց, ինչպէս Քրիստոս կը սորվեցնէր իւր աշակերտաց: Ո՞չ ասպաքէն կոռնիլիոս նախ քան զհաւատալն եւ մկրտիլ՝ աղօթք կ'ընէր, եւ անոր աղօթքները լուեցան, Գործ. Ժ. 1—4: Ո՞չ ասպաքէն խաչին վրայի աւազակին աղօթքը լուեցաւ, թէ եւ մկրտուած չէր: Ղուկ. ԻԳ. 42, 43: Ի՞նչ առաւել մեղաւոր՝ քան զմաքսաւորն, զոր Քրիստոս կը ներկայացունէ իբրեւ յետին աստիճանի մեղաւոր եւ յանցապարս, բայց աղօթք ըրաւ Աստուծոյ իւր կուրծքը ձեծելով, եւ չհամարձակելով ալ իր աչքը երկինք վերցունել, եւ կ'ըսէր միայն սա խօսքը. «Աստուած, ողորմէ՛ ինձի մեղաւորիս»: Ղուկ. ԺԸ. 9—14: Այս մաքսաւորը մկրտեալ պիտի ենթադրենք: Ո՞չ ասպաքէն եթէ այդպէս համարինք, Պ. Աւետարանիչի մէկ ու-

րիչ վարդապետութեան դէմ պիտի ելնէ, զոր «եսա-
քը պիտի տեսնենք»:

Կը հարցունեմ Պ. Աւետարանչին, ինք որ ա-
ղօթք ընելու իրաւունք ունենալու եւ կամ աղօթ-
քը լսելի լինելոյ համար նախապէս մկրտուած լի-
նել պայման կը դնէ, եւ մկրտուելու համար ալ
նախապէս հաւատալու կարող հասակ ունենալ եւ
հաւատացած ըլլալ՝ ինչպէ՞ս հնար է այդ ճշմարիտ
հաւատքն ունենալ առանց յատուկ օգնութեան եւ
օրհնութեան Աստուծոյ, եւ ինչպէ՞ս հնար է Աս-
տուծոյ օրհնութիւնն ու շնորհքը ընդունիլ առանց
Աստուծոյ աղօթք ընելու: Թող լաւ կարգայ Յա-
կոբոս Առաքեալին գրածները եւ Սուրբ Գրոց ու-
րիչ բնաբանները այս խնդրոյն վերաբերեալ: —
«Հապա թէ որ ձեզմէ մէկը իմաստութեանէ պակ-
սած ըլլայ, թող խնդրէ Աստուծմէ՝ որ ամենուն
առատապէս կու տայ՝ ու շնախատեր, եւ անոր պի-
տի տրուի: . . . Ամեն բարի սուրբ՝ ու ամեն կա-
տարեալ պարգեւ վերէն է, եւ Լուսոյ Հօրմէն
կիջնէ»: Յակ. Ա. 5, 17: «Խնդրեցէք՝ եւ պիտի
տրուի ձեզի, փնտուեցէք՝ եւ պիտի գտնէք, [բարեք]
զարկէք՝ եւ պիտի բացուի ձեզի, վասն զի ամեն ո՛վ
որ կը խնդրէ՝ կ'առնէ, եւ ո՛վ որ կը փնտուէ՝ կը
գտնէ, եւ ո՛վ որ [բարեք] կը զարնէ՝ պիտի բացուի
անոր»: Մատթ. Է. 7, 8, եւ. Եւ, «Ո՛վ որ Տէրօջը
անունը կանչէ՝ պիտի փրկուի»: Հռովմ. Ժ. 15:
Եւ այլն եւ այլն:

Աստուած կը հրաւիրէ՝ ամեն մարդ մեծ ու
պղտիկ առանց խտրութեան, անոնք թէ՛ մկրտեալ
ըլլան թէ՛ չըլլան, որ աղօթք ընեն, խնդրեն իրմ,

իւր մեծամեծ շնորհքները, բարի տուրքերն ու կա-
տարեալ պարգեւները. կը հրաւիրէ՛ բոլոր յոգնած-
ներն ու բեռնաւորեալները, բոլոր ծարուածներն,
միով բանիւ, բոլոր մեղաւորները անխտիր, եւ
պատրաստ է անոնց իւրաքանչիւրին պարգեւել
առատապէս եւ լիուրի, իւր անապառական շնոր-
հաց շտեմարաններէն, բայց մեր այս Պ. Աւետա-
րանիչը կ'ուզէ արգելել այն կարօտեալ ու խեղճ
մեղաւորները, որոց օգնութիւնը միայն Աստուծմէ
է»: Ովս. ԺԳ. 9: Բայց միթէ չը՞ պիտի յանդիմանէ
զինք Քրիստոս, այսպէս մեղաւորներն առ ինքն եր-
թալէն արգելելուն համար, ինչպէս յանդիմանեց
իւր աշակերտներն, երբ անոնք ուղեցին արգելել
զայնս, որ մանր տղաքները բերեն սո Յիսուս որ
գտնոնք օրհնէ: Այո՛, անտարակոյս: Ի՞նչպիսի Ա-
ւետարան է այս Աւետարանչի Աւետարանը, որ
այսպիսի հակաւետարանական աւետարան կը քարո-
զէ: Եւ ի՞նչ կրնայ լինիլ իւր շարժառիթ: — Յայտ-
նի է: Որպէս զի մարդիկ սարսափելով իրենց վրայ
հասնող մօտալուտ վտանգէն, երթան աճապարա-
նօք եւ իրմէն կրկն զրոհուին:

Գ. Պատ. Շիշմանեան կը ներկայացունէ շփոթու-
թեան լէքեւ եակն պայման Բողոքական Պաշտ-
թի որ մէկը չափահաս չմկրտուի՝ իւր մեղքերը չեն
ներուիր, ըստ իւր տեսութեան: Զի այսպէս կը
հարցունէ իւր «Աստուծոյ որդեգրութեանը ըն-
դունուելու» եւ այլն խորագրով երկու երես տեա-
րակին մէջ: «Ի՞նչպէս կրնաս յուսալ թէ քու մեղ-
քերդ ներուած են քեզի», ակնարկելով, Գործ-
Բ. 58:

Բայց մենք Սուրբ Գրոց մէջ պարզապէս եւ բազմաթիւ տեղեր կը կարդանք թէ մեղաց թողութիւնն ո՛չ ուրիշ բանով կ'ըլլայ, այլ մի միայն Յիսուս Քրիստոսի մահուամբն ու արեամբը: Հոս քանի մը վկայութիւններ դնենք այս նիւթիս վերաբերեալ եւ այս ճշմարտութիւնը հաստատող:

«Վասն զի թէ որ ցուերուն ու նոխազներուն արիւնը եւ երինջին մոխիրը սրահուելով՝ պղծեալները կը սրբէր մարմինի մաքրութեան կողմանէ, Ալ սրչափ աւելի Քրիստոսի արիւնը, որ յաւիտենական Հոգիին ձեռքովը իր անձը անարատ [պարտաբաշ] մատոյց Աստուծոյ, պիտի սրբէ ձեր խղճմատանքը մեռած գործքերէն՝ կենդանի Աստուածը պաշտելու»: Եբր. Թ. 15, 14:

«Արեան զնոստիւնսն իսրայիլսն շուրբ»: Եբր. Թ. 22:

Ինչու որ մէկ պատարագով մը մշտնջենաւորապէս կատարեց սրբուածները: Եբր. Ժ. 14:

«Քրիստոս մէկ անգամ մը [պարտաբաշ] մատուցուեցաւ շատերուն մեղքերը վերցունելու համար»: Եբր. Թ. 28: Տէս նաեւ Ես. ԾԳ. 4, 5, 6, 8, 11, 12:

«Որ ան կամքովը մենք ալ սրբուեցանք՝ Յիսուս Քրիստոսի մարմինին մէկ անգամ պատարագուելովը»: Եբր. Ժ. 10:

«Ուստի Յիսուս ալ՝ իր արիւնովը ժողովուրդը սրբելու համար, դռնէն դուրս չարչարուեցաւ»: Եբր. ԺԳ. 12:

«Ու անոր Որդւոյն Յիսուս Քրիստոսի արեանը մեզ մեզի կը սրբէ»: Ա. Յովհ. Ա. 7:

Այսպէս բազմաթիւ տեղեր ի Սուրբ Գիրս յայտ-

նի ու բացորոշ կերպով եւ դրապէս գրուած ըլլալէն վերջը՝ թէ մեր մեղաց թողութիւնը Քրիստոսի մահուամբն ու արեամբը եւ անոր քաւչական պատարագանքով կ'ըլլայ, դարմանք, որ մեղաց թողութեան համար ուրիշ պայմաններ եւ միջոցներ կը միտաուելին: Պ. Աւետարանիչը, Աւետարանական ճշմարտութեանց, Սուրբ Գրոց ոգւոյն եւ Քրիստոնէական հիմնական վարդապետութեանց, մանաւանդ մեր փրկութեան յոյսն եւ խորխորեղող Քրիստոսի մահուանն ու քաւչական պատարագին արդեանց վրայ սյուսլէն թերի՝ ծանօթութիւն ունենալով կամ ցուցնելով՝ իրեն հետեւողներն կ'առաջնորդէ իյնալ նիւթապաշտութեան եւ անապաշտութեան մէջ. այսպէս փոխանակ յառաջ տանելու գնոսս՝ յետս ընդ կրօնին կը դարձունէ, եւ ընդունիլ սյնալիս խելքի դէմ եւ ողջամիտ դատողութեան հակառակ սկզբունքներ՝ որ ո՛չ միայն ողջամիտ եւ ուշիմ Աւետարանականն չկրնար ընդունիլ, այլ եւ բազումք, ո՛չ-բողոքական Քրիստոնէայ եկեղեցեաց անդամք, այս լուսաւորեալ դարուս մէջ, տարակոյս չունիմք որ պիտի այսպանեն այդպիսի Սուրբ Գրոց ոգւոյն եւ ուղիղ բանի հակառակ գաղափարներ ու վարդապետութիւններ: Զի ինչ կայ ատկէց դիւրին բան, կրնայ ըսել մէկը, ջրով լուսացուիլ, եւ մեղքերու թողութիւնն ստանալ: Բայց քան լիցի որ կրօնքին Աստուածային Հեղինակը մեղաց թողութիւնն ստանալու համար այդպիսի տղայական պայման դնէ:

Պ. Աւետարանչի միտքը իւր մկրտելու պաշտօնին այնչափ վազած է, որ կը կարծէ վկայութիւններ

գանել Սուրբ Գրոց մէջ՝ թէ մկրտութեան լուսցմամբ՝ մեղքերէ սրբութիւն կ'ըլլայ, վասն որոյ միակողմանի հայեցուածով Սուրբ Գրոց խօսքերը կը խծրծէ, եւ իւր արտառոց գաղափարներուն յարմարցունել կը ճգնի զայնս: Բայց ճշմարտութիւնը ինչ որ է նոյն կը մնայ, թէ եւ մարդիկ իրենց սխալականութեամբ այլ եւ այլ կերպարանքներ տալ ուզեն:

Սուրբ գրոց սա պատուական բնաբանն է, զոր Պատ. Շիշմանեան վիպութիւն կը բերէ իւր գաղափարը հաստատելու:

«Ապաշխարեցէ՛ք, եւ ձեզմէ՛ ամեն մէկը թող մկրտուի՛: Յիսուս Քրիստոսի անունովը մեզաց թողութեան համար, եւ Հոգւոյն Սրբոյ պարզելը պիտի ընդունիք»: Գործ. Բ. 58:

Եւ ասկէ կը հետեւցունէ թէ մեզաց թողութիւն ստանալ ուղղորդ կրկին մկրտուելու է, եւ առանց կրկին մկրտուելու (զի իւր նորահաւանները գոնէ ցարդ ի մանկութեան մկրտեալ են արդէն,) հնար չէ թողութիւն ստանալ մեզաց: Եւ իմանալ կուտայ զարձեալ թէ կրկին մկրտուողը իւր մեղացը ներողութիւն կ'ստանայ:

Բայց իրօք, ի վերին երեսս նայելով այդ բնաբանին խօսքերուն վրայ՝ ճշմարտանուն կը թուի լինել Պատ. Շիշմանեանի հանած վարդապետութիւնը, (եւ չէ՞ որ այս կերպ երեսանց միայն նայելով կը խորուի մարդիկ ու կը մոլորին), եւ տգէտն ու սամիկը ստութիւնը իբրեւ ճշմարտութիւն կ'ընդունի:

Այսու տեսութեամբ նկատելով խնդիրները, եւ

Սուրբ Գրոց խօսքերը սյուսէս թերի եւ անկատար եւ ծանծանղ տեսութեամբ կարդալով, շատ դիւրին է այլ եւ այլ մտորական վարդապետութիւններ հանել անկէ, միայն այս ինչ եւ այն ինչ խօսքերն ու կամ բառերը առնուլ կայնելով առանց չըջահայեցութեան, առանց զայնս ուրիշ անոնց նման ստացուածոց կամ աւելի պարզ, ընդարձակ եւ դրասէս հաստատեալ ու քաջայայտ ճշմարտութեանց հետ բաղդատել կամ համեմատել ձեռնարկելու, որ յայնժամ բոլորովին կերպարանափոխ պիտի ըլլայ բանը:

Ո՞չ ապաքէն այս միակողմանի հայեցուածքով է որ այսչափ Քրիստոնէից պանդներ դոյութիւն ունին աշխարհիս վերայ ներկայ ժամանակիս մէջ իսկ, ինչպէս ասկէց առաջ ալ: Սուրբ Գրոց խօսքերուն ու բառերուն վրայ հիմնեցին իրենց շարափառ պանդները Հաղարամեանք, Արիոսեանք, Եւտիքականք, Նեստորականք, արդի Տիեղերականք, Միադաւանք եւ:

Պ. Աւետարանիչը լինչ իրաւունքով կը մեղադրէ Պապական, Յունական եւ Լուսաւորչական եկեղեցիները, որ անոնք այսինչ եւ այնինչ իւր շքնդունած, չհաւատացած վարդապետութիւններն ունին եւ կը պաշտպանեն:

Գոյափոխութեան վարդապետութիւնը ընդունողները դատապարտելու, միթէ իրաւունք ունի ինք: Կը կարծէ թէ նոքա նուաղ զօրաւոր չիմ ունին զայդ վարդապետութիւն հաստատելու քան որչափ ինք մկրտուելով մեզաց թողութիւն քարոզելու:

Գոյափոխութեան վարդապետութիւնն է՝ Տէ-

րունական ընթրեաց հացն ու գինին համարիլ թէ իրենց գոյութիւնը կը փոխեն եւ կ'ըլլան իսկական մարմին եւ արիւն Քրիստոսի: Եւ տես թէ որչափ ճշմարտանման են զայս պաշտպանողաց փաստերն, երբ ի վերին երեսս նայինք այն բնաբաններուն վրայ, որոց ի հաստատութիւն վկայութիւն կը բերեն: ... «Մովսէս չտուաւ ձեզի երկնաւոր հացը» (ըսաւ Յիսուս Հրէից), «բայց իմ հայրս կու տայ ձեզի ճշմարիտ երկնաւոր հացը: Ինչու որ Աստուծմէ [օրոստօ] հացը սն է որ երկինքէն կ'իջնէ ու աշխարհիս կեանք կու տայ: ... Ե՛ս եմ կենաց հացը: ... Ես եմ երկինքէն իջած հացը: ... Ես եմ կենաց հացը: Ձեր հայրերը անապատին մէջ մանանտն կերան ու մեռան: Ա՛ս է այն հացը որ երկինքէն կ'իջնէ որ եթէ մէկը ասկէ ուտէ պիտի չմեռնի: Ե՛ս եմ կենդանի հացը որ երկինքէն իջայ: Թէ որ մէկը այս հացէն ուտէ, յաւիտեան պիտի ապրի, եւ այն հացը որ ես պիտի տամ ի՞՞մ ճարձն է, որ ես պիտի տամ աշխարհիս կենացը համար: ... Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ որ Որդւոյ մարդոյ մարմինը չուտէք, եւ անոր արիւնը չխմէք, ձեր անձերուն մէջը կեանք չէք ունենար: Ո՛վ որ իմ մարմինս ուտէ եւ իմ արիւնս խմէ, յաւիտեանական կեանք կ'ունենայ, ու ես անոր յարութիւն առնել պիտի տամ վերջին օրը: Ինչու որ իմ մարմինս ճշմարիտ կերակուր է, եւ իմ արիւնս ճշմարիտ ըմպելիք է: Ան որ իմ մարմինս կ'ուտէ, եւ իմ արիւնս կը խմէ՝ անիկա իմ ներսիդիս կը բնակի ու ես անոր ներսիդին, ...» Յովհ. Զ. 50—59:

«Եւ քանի որ անոնք կ'ուտէին, Յիսուս հաց ա-

ռաւ՝ օրհնեց ու կտրեց եւ տուաւ աշակերտներուն, ու ըսաւ, Առէ՛ք՝ կերէք, այս է ի՞՞մ ճարձն: Եւ գաւաթը առաւ՝ գոհացաւ, ու տուաւ անոնց՝ եւ ըսաւ. Ամենքդ ալ խմեցէ՛ք ասկէ, ինչու որ «պէս է ի՞՞մ արեւնս նոր ուխտի, որ շատերու համար կը թափուի Ձեզայ Երզնայի համար»: Մատթ. ԻԶ. 26—28: Մարկ. ԺԳ. Գուկ. ԻԲ:

«Տէր Յիսուս իր մատնուած գիշերը հաց տուաւ, եւ գոհանալով՝ կտրեց ու ըսաւ, Առէ՛ք ու կերէ՛ք, ա՛ս է ի՞՞մ ճարձն» որ ձեզի համար կը կտրուի... Աս գաւաթը նոր ուխտ է ի՞՞մ արեւնոյն: ... Ուտի ով որ աս հացը ուտէ՝ կամ Տէրոջը գաւաթը խմէ անարժանաբար, պարտական պիտի ըլլայ Տէրոջը ճարձնն եւ արեւնը: ... Ան որ անարժանաբար կ'ուտէ ու կը խմէ, իր անձին զատապարտութիւն կ'ուտէ ու կը խմէ, քանզի Տէրոջը ճարձնը չ'որոշէր»: Ա. Կոր. ԺԱ. 28-29:

Միակողմանի հայեցումով, այսինքն առանց Սուրբ գրոց ուրիշ վարդապետութիւններն եւս ի նկատի առնել, եւ առանց խորունկը քննելու, այլ միայն երեսէն խորհելով՝ այս վկայութիւնք բաւական զօրաւոր փաստեր կը մատակարարեն գոյախոխութեան վարդապետութեան ջատագովաց, թէ հաղորդութեան հացը ըսել կ'ուզէ Քրիստոս Յովհաննու Աւետարանին Զ. զլլտուն մէջ «Ես եմ կենաց հացը, իմ մարմինս ճշմարիտ կերակուր է, եւ իմ արիւնս ճշմարիտ ըմպելիք է: Ան հացը՝ որ ես պիտի տամ ի՞՞մ ճարձն է», եւ այլն ըսելով: Որ Տէրունական ընթրեաց ատեն տուաւ աշակերտներուն ըստ իւր խոստման, ըսելով, «Առէ՛ք կերէ՛ք՝ աս է իմ մարմինս», եւ գինին ալ մատուցանելով

բառ, «Ասիկայ է իմ արիւնս նոր ուխտի», եւ այլն: Եւ թէ ով որ ուտէ ու խմէ այն հացէն ու գինիէն, ըստ որում փոխարկեալ ի մարմին եւ յարիւն Տեառն, յաւիտեան կ'ապրի եւ իւր Բնաց Խոյն-Բնու իւրոսնայ, ինչու որ այս ալ խոստացուած է: Եւ Պօղոս առաքեալ առ Ա. կորնթ. ԺԱ. գլխոյն մէջ, ինչպէս որ քաղեցինք, խիստ մեծ զգուշաւորութիւն կը պատուիրէ ընել այն նուիրական տարերքներէն ուտելու եւ խմելու մասին, մեծ վտանգ սպառնալով, զի անզգոյշը Տէր՛ւն Բարձր որոշած չըլլայ:

Ըստ մեզ, այս բնաբանք Աւետարանին՝ նուազ զօրաւոր փաստեր չեն ընծայեր այս վարդապետութեան պաշտպանաց, քան Պ. Աւետարանչի մկրտութեան արարողութենէն հետեւիլ ենթադրած արդեանց ի հաստատութիւն յառաջ բերած բնաբանք, եւ եթէ անաչառապէս քննուի, Պ. Աւետարանչի փաստերէն շատ մ'աւելի ճանարտանրման եւ զօրաւորագոյն են: Թէ եւ ճանարտութեան բովայն ալ այն ալ յօդս կը ցնդին:

2. Եկեղեցականաց (քահանայից) մեղքի թողութիւն տալու իշխանութիւն ունենալուն վարդապետութիւնը եւս բոլորովին խոտելի բան չթուիր երբ այն ալ ի վերին երեսս նկատուի: Տես այդ վարդապետութեան ջատագովք ինչ վկայութեանց վրայ հիմնած են զայն:

Կ'ըսէ՝ Յիսուս Պետրոսին. «Ու երկնից թագաւորութեան բանալիներն քեզի պիտի տամ, եւ ինչ որ երկրի վրայ կապես, երկինքին մէջ կապուած պիտի ըլլայ, ու ինչ որ երկրի վրայ արձակես, երկինքի մէջ արձակուած պիտի ըլլայ»: Մատթ. ԺԶ. 18, 19:

«Ճանարիտ կ'ըսեմ ձեզի, երկրի վրայ ինչ որ կապէք, երկինքի մէջ կապուած պիտի ըլլայ, ու երկրի վրայ ինչ որ արձակէք, երկինքի մէջ արձակուած պիտի ըլլայ»: Մատթ. ԺԶ. 18:

«Որոնց որ մեղքերը թողուք, թողուած ըլլայ անոնց, եւ որոնց որ [Բարձր] ետ բռնէք, բռն նուած ըլլայ»: Յովհ. Ի. 25:

Ինչ պիտի հասկնան մեր միամիտ բարեկամները, եթէ ճիշդ Պատ. Շիլմանեանի քարոզած սկզբանց համեմատ վարուին, այսինքն, մեկնութեանց չգիմեն, խելամուտիւն, մակարերութիւն եւ այլն ընելէ խորշին, այլ ընդունին Սուրբ Գրոց խօսքերը գրուածին պէս, նկարագրապէս, ինչպէս որ յաճախ կը ըսուի իւր աշակերտներուն բերնէն թէ «Տէրը այսպէս կ'ըսէ», միայն «աղանխներու պէս միամիտ» լինելով, ու ո՛չ՝ միանգամայն «օճերու պէս խորագէտ» ըլլալով. պնդելով այսպէս, «Ան որ հաւատայ ու մկրտուի» կ'ըսէ, «թաղուելով անոր հետ մկրտութիւնսով» կ'ըսէ. «Ձեզմէ ամեն մէկը թող մկրտուի՝ Յիսուս Քրիստոսի անունովը մեղաց թողութեան համար», եւ այլն կ'ըսէ, եւ այլն եւ այլն: Որ կը պնդեն եւ կը պնդեն եւ չեն ուզեր ընդարձակօրէն խորհիլ պարագայից վրայ, եւ այդ խօսքերուն հետ յարաբերութիւն ունեցող ուրիշ խօսքերու եւ վարդապետութեանց եւ քաջայայտ ճանարտութեանց վրայ:

Ինչ պիտի հասկնան մեր միամիտ բարեկամները եթէ ճիշդ Պատ. Շիլմանեանի քարոզած սկզբանց համեմատ վարին, երբ այն յառաջ բերուած բնաբանները կարդան: Առջի վկայութիւններէն պիտի

հետեւցունեն բնականապէս թէ Հաղորդութեան մէջ գործածուած Հոգին ու գինին ճիշդ եւ խիստապէս Գրիստոսի մարմինն ու արիւնն են. եւ թէ՛ ո՛վ որ անտեսմէ Հաղորդութի, Որդւոյ մարդոյ արիւնը խմած եւ մարմինը կերած կ'ըլլայ, այնպէս որ ըստ խոստման եւ վկայութեան Փրկչին, իւր անձին մէջ կեանք ունենայ, եւ յաւիտեան ապրի, ինչպէս որ Պապականք եւ այլք կ'ընդունին: Երկրորդ բնաբաններէն ալ անտարակոյս պիտի հետեւցունեն թէ քահանայք իշխանութիւն ունին եւ կրնան մեղաց թողութիւն տալ, որոնց մեղքերը որ թողուն՝ թողուած ըլլայ, եւ որոնց մեղքերը որ բռնեն՝ բռնուած պիտի ըլլայ. միով բանիւ՝ անոնց կապածը կապած, եւ արձակածը արձակած պիտի ըլլայ: Եւ պէտք է այսպէս հաւատալ, ինչու որ Տէրը ինք այսպէս կ'ըսէ բուն իսկ իւր բերնովը:

Նաեւ շատ ուրիշ այսօրինակ եզրակացութեանց պիտի հասնինք եւ զայնս ընդունելու պիտի հարկադրինք, եթէ այդ իրենց սորված սխալ սկզբանց վրայ քաւելու ըլլանք: Բայց ես հարկ չեմ սեպեր հոս ուրիշ օրինակներ ալ յառաջ բերել երկարաբանութենէ եւ ձանձրոյթ տալու վտանգէն խորշերու համար, եւ մանաւանդ որ մէկ օրինակն անգամ բաւական է ցուցնելու համար այդպիսի միամտութեան ինչպիսի աղէտալի եւ կործանիչ վտանգներու հասցունելը:

Եւ մկրտութեամբ մեղքերու թողութիւն լինելու վարդապետութեան մէջ նուա՞ց անտեղութիւն կայ եւ վտանգ:

Կը հարցունենք մեր ընդդիմաբանից, եթէ էական

է մկրտուիլը՝ մեղաց թողութիւն ստանալու համար, ինչու համար Գրիստոս այնչափ մարդոց մեղաց թողութիւն տուաւ որք մկրտուած չէին յանուն Երրորդութեան: Անդամայծին, Մատթ. Թ. 2: Մարկ. Բ. 5: Դուկ. Ե. 20: Մեղաօր Գինքը: Դուկ. Է. 47, 48: Ինչ վկայեց Զատեո՞՛հ համար, «Այսօր այս տանը փրկութիւն եղաւ, ինչու որ ասիկայ ալ Աբրահամու որդի է:» Դուկ. ԺԹ. Գ: Ինչ պատասխանեց խաչին վրայի աւաղակին երբ նա գոչեց առ ինքն Յիսուս. «Տէր, յիչ զիս երբոր քու թագաւորութիւնովք գաս»: «Յիսուս ալ ըսաւ անոր, ճնարկիւ կ'ըսեմ քեզի, Գուն այսօր իմ հետս դբախտին մէջը պիտի ըլլաս»: Եթէ անշուշտ էական պայման է մկրտուիլ՝ մեղաց թողութիւն ստանալու համար, այս անձինք ամենեւին չէին կրնար մեղաց թողութիւն ստանալ, Աբրահամու որդի կոչուիլ Գրիստոսէն, եւ դբախտին մէջն ըլլալու երաշխաւորութիւն ընդունիլ, մինչ մկրտուած չէին: Պիտի ըսեն թէ բացառութիւն են ատոնք: Ինչ հիման վրայ կը հաստատեն ըսածնին, անոր համար բացառութիւն կը համարին ասոնք որ հաստատել ուզած բաներուն հակառակ եւ անհամաձայն կու գայ: Ո՞ւր կրնան ցցունել Սուրբ Գրոց մէջ որ էական պայմաններու՝ բացառութիւնք տեղի ունենան: Հաւատքը մեղաց թողութեան եւ փրկութեան էական պայման է մեղ յայտնեալ ի Սուրբ Գիրս: Բայց ո՞ր կրնաս դտնել միակ ու եւզական օրինակ կամ պատուէր մ'անգամ յորում այս մասին բացառութիւն կենայ, այսինքն՝ առանց հաւատալու մարդ մը մեղաց թողութիւն առած

հասկացուի, կամ մարդիկ երբեմն փրկուին կամ Աբրահամու որդիք կոչուին: Ամենեւին, եւ ոչ ուրեք կրնայ դանուիլ Սուրբ Գրոց մէջ այսպիսի բացատուութիւնք եւ մակարեբել տուսող խի բնաբանք կամ պատմութիւնք:

Բայց ինչ հետին երթանք, գործնականին դանք: Ա՛րդեօք մկրտեալք իրենց մեղացը թողութիւն ստացած են, մեղքերնին ներուած է թէ ոչ: Ներկայ ժամանակիս, մեր օրերը եւ մեր մէջը գանուող կրկին մկրտելոց վրայ անխօսելով խօսքերնիս:

Երկու փորձաքար ունինք զայս խնդիր սրտելու համար. Սուրբ Գրոց սգին, կամ յայտնեալ ճշմարտութիւնք այս մասին, եւ երկրորդ՝ փորձառութիւնք: Առաջնոյն վրայ արդէն բաւական խօսուեցաւ, թէ Սուրբ Գրոց բացայայտ խօսքերուն եւ պատմուած դիպաց իմաստիցը հակառակ ու անհամաձայն է մկրտութեամբ մեղաց թողութիւն կամ փրկութիւն ստանալ, ուստից կը հետեւի որ Սուրբ Գրոց այն փաստ բերուած բնաբանները՝ 'ի նպաստ մկրտութեամբ այն մեծ արդիւնքներն յառաջ դալուն, հարկ է ուրիշ մտօք հասկընալ, եթէ հակասութեան եւ անել լաբիւրինթոսի մէջ լցնալ չենք ուզեր:

Մի քանի խօսք երկրորդին վրայ խօսինք: Թէ փորձառութիւնք ինչ բոյս կու տայ, ինչ կը ստրվեցունէ այս մասին:

1. Մեղաց թողութիւն կ'առնում կամ ընդունած եւմ հաւատացողը պէտք է ներքնասպէս իւր ներսիդին զգայ թէ իւր վրայէն այն մեղաց ծանր բեռը՝ որուն տակ կը ճնշուէր, ինկած է: Իւր՝ խորհրդով,

բանիւ եւ գործքով գործած մեղքերը ներուած կը զգայ թէ ոչ: Իւր խղճմտանքը խաղաղ եւ հանգիստ է. Աստուծոյ հետ հաշտ եւ խաղաղութիւն ունեցած կը զգայ ինքզինք:

2. Ուրիշ բան մը եւ նշան մ'ալ ճշմարտապէս մեղաց թողութիւն ընդունած ըլլալուն՝ այս է, իւր բնութեան իրօք փոխուած եւ մեղք գործելու փափաքն ու ակործակը մեռած լինելուն ներքին գիտակցութիւն: Աստուած երբ մէկուն մեղքը ներէ՝ լման կը ներէ, այլ եւս իրենը կ'ըլլայ մեղաց թողութիւն ընդունողը, ալ սպահով է այնպիսին Տէրօջը շնորհքովը, ինչպէս Սաղմուեբգուն ալ երանութիւն կու տայ այն մարդուն. « Երանի՛ անոր՝ որուն յանցանացը թողութիւն եղաւ ու անոր մեղքերը ծածկուեցան: Երանի՛ ան մարդուն՝ որ Տէրը անօրէնութիւն չսեպեր անոր, ու անոր հոգիին մէջը նենգութիւն չկայ: » Սաղմ. 1, 1, 2: Մեղքին ներուիլն օգուտ չունի՝ եթէ մեղաւորը դարձեալ նոյն մեղքերը գործելու բաղձանքը կը կրէ եւ կը գործէ: Ուրեմն մկրտեալը հոս խորհելու մեծ բան մ'ունի, եւ պարտի ինքն իրեն համար ընել այս փորձը՝ թէ նորոգուած եւ փոխուած է իր սիրտը թէ ոչ, քննելով իւր ներքին զգացմունքն ու բաղձանքներն ու հակամտութիւնքն կրկին մկրտուելէն առջի ունեցածին հետ: Թո՛ղ այս բանը ընէ այդ անձը ինքն իրեն համար:

3. Բայց գուցէ կրկին մկրտեալ մը ինքզինք քրննէ կամ քննած համարի ըստ արժանւոյն, եւ գտնէ որ բաւական գոհացուցիչ վիճակի մէջ է իւր ներքին մտաւորական եւ հոգեւոր կացութիւնը, ինչու

որ առաջ վրդովեալ վիճակ մ'ունէր այն ժամանակէն հետէ որ այս կրկին մկրտուելու յուզմունքը ծագեցաւ աստ եւ անդ . եւ հիմա մկրտուած լինելով ճիշդ (ըստ իւր գաղափարին) Սուրբ Գրոց օրինակին եւ պատուէրին համեմատ , անդորր եւ խաղաղ վիճակի մէջ է , այլ եւս մտաւանջութիւն , երկիւղ եւ կորսուելու վտանգ չկայ , եւ կ'երեւակայէ ալ թերեւս թէ իւր արտաքին վարքը եւ ներքին հոգեւոր զգացմունք չսկիւճած են եւ այլն : Մակայն ասով կը լիննայ բանը : Փրկիչն մեր բացարձակ կանոն մը կու տայ մեզ մարդոց բարոյական որպիսութեան գինչութիւնը որոշելու մասին , ըսելով . « Իրենց պատուէն պիտի ճանչնաք զանոնք : Միթէ փուշերէն խաղող կը քաղեն , կամ տատանիէն՝ թուղ : Առանկ ալ ամեն բարի ծառ՝ բարի պտուղ կու տայ : Բարի ծառը չկրնար չար պտուղ տալ , ո՛չ ալ չար ծառը բարի պտուղ տալ » : Մատթ . Է 16—18 : Զաքէոսին սիրտը ունեցած են : Տէս ինչ կըսէ Զաքէոս Յիսուսի , « Տէր , ահա իմ ունեցածիս կէսը ազքատներուն կու տամ , ու թէ որ զըրպարութեամբ մէկու մը զրկանք ըրած եմ , չորեքպատիկ կը հատուցանեմ [անր] » : Որուն վրայ ըսաւ Փրկիչը , « Այսօր այս տանը փրկութիւն եղաւ » , եւ զայն անուանեց որդի Արրահամու՝ Հօրն հաւատացելոց : (Ղուկ . ԺԹ . 8 , 9 :)

Հետաքրքիր եմք իմանալ թէ մկրտութեան բարոզիչք որ կ'ըսեն թէ մեզայն թողութիւնը մկրտութեամբ կըլլայ , անցեալ մեզայն համար ըսել կ'ուզեն

թէ ապագայ մեզայն համար , ինչու որ մեր մտքին մէջ առարկութիւնք կը ծագին այդ հարցմանց որ եւ իցէ մէկուն պատասխանին դէմ : Զի եթէ պատասխան տրուի մեզ թէ անցեալ մեզայն թողութիւն կ'ըլլայ մկրտութեամբ , կրնայ ըսուիլ ասոր դէմ թէ ի՞նչ օգուտ ունի անցեալ մեզայն համար ներողութիւն ընդունիլ , քանի՛ որ երաշխաւորութիւն մը չկրնար տրուիլ որ դարձեալ մեզք պիտի չգործուի ապագային մէջ : Եւ յայնժամ ի՞նչ պիտի ընենք , միթէ երկրորդ անգամ մկրտուող մը դարձեալ երրորդ անգամ եւս մկրտուելու է , եւ այնուհետեւ չորրորդ անգամ եւս , եւայլն , որպէս զի գործած նորանոր մեզայն համար հետզհետէ թողութիւն ստանայ :

Իսկ եթէ պատասխան տրուի թէ մկրտութիւնը թէ՛ ներկայ , թէ՛ անցեալ՝ թէ՛ ապագայ մեզայն թողութեան համար է , կրնայ պատասխանուիլ ասոր պլ թէ , ուրեմն ապահով է մարդս մկրտուելէն վերջը թէ՛ մեզքէ ազատ ըլլայ թէ ոչ , թէ՛ գործէ մեզք թէ ոչ , քանի որ իւր գործելիք մեզքերն ալ արդէն գործածներուն հետ , ներուած ու լուացուած են մկրտութեամբ :

Թո՛ղ չդատապարտեն ուրեմն զՊապականս , որ այսչափ տարի գործելիք մեզայն համար ներողութիւն ծախու կ'առնուն :

Ի . Պատ . Շիչմանեան կը ներկայացունէ զԿրտութիւն՝ Եբրեւեական պայման զՀոգին Սուրբ ընդունելու : Եւ կը ջանայ հաստատել թէ առանց մկրտուելու անհնար է Հոգին Սուրբն առնուլ , կամ թէ՛ մկրտութեամբ կ'առնուի այն :

Ընթերցողին ուշադրութիւնը կը հրաւիրեմ իւր երկու երեսէ բաղկացեալ տետրակին, գարձեալ անգամ, ուր Սուրբ Գրոց բնութանները, ինչպէս առաջ ալ ըսինք, այնպէս մը կը ներկայացունէ՝ ուստից յայտնի կը տեսնուի թէ ինչպիսի թիւր տետրութիւններ ունի մինչեւ իսկ ակներեւ եւ յայտնի ճշմարտութեանց վրայ: Ինքը ճարտարութիւն մը բանեցուցեր է նոտր գրերով դնել այն բառերը, զորս կ'ուզէ շեշտել, եւ աչաց առջեւ յայտանկատ առնել, միանգամայն թուանշաններով եւս ցուցնելով թէ իւր տետրութիւնք ինչ են, եւ ինչպէս մեկնել կամ ինչ հասկըցունել կ'ուզէ այդ բնութանները դնելովը:

Հոն այսպէս կ'ըսէ (իմաստը առնելով իւր գրածին), եթէ Աստուծոյ միածին Որդւոյն օրինակին պէս չափահաս եւ ընկղմամբ մկրտուած չես, ինչպէս կ'ընաս յուսալ թէ « Սուրբ Հոգւոյն պարգեւն ընդունած ես », ,

Բայց հոս նկատողութեան առնուելու երեք գլխաւոր կէտեր կան, որոց վրայ հակիրճ տեսութիւն մ'ընենք:

1. Իւր նոտր գրերն եւ թուանշաններն այնպէս մը գրեր ու յարմարցուցեր է, որ կը հասկըցուի եւ ակներեւ կը տեսնուի թէ Քրիստոս իսկ զՀոգին Սուրբ ընդունած չէր նախ քան զմկրտութիւն իւր: Եւ ասկից հզօր ձեռնարկութիւն մը ընել կը յուսայ. այսպէս, եթէ Քրիստոս անգամ Հոգին Սուրբը չ'ընդունեց մինչեւ որ չմկրտուեցաւ, ուր կը մնան հասարակ մարդիկ: Մարդիկ բնաւ չեն կրնար առնուլ զայն մինչեւ որ չմկրտուին:

Ինչ տեսակ հերետիկոսութեան անուն տալ կը վայլէ այն գաղափարին կամ վարդապետութեան, որ Քրիստոսէ կը զլանայ առ ժամանակ մի Աստուածային Հոգին, որ Ամենասուրբ Երրորդութեան անբաժան միութեան Երկրորդ Անձը՝ բաժանեալ եւ հեռացեալ կը ներկայացունէ Երրորդ Անձէն այն երեսուն տարուան միջոցին մէջ, իւր մանկութեանէն մինչեւ մկրտութիւնը:

Միթէ Քրիստոս Աստուած չէր իւր մանկութեան ժամանակը: Ինչ կ'ըսեն Սուրբ Գիրք այս մասին: « Վասն զի մեզի մանուկ մը ծնաւ, մեզի որդի մը տրուեցաւ, եւ իշխանութիւնը անոր ուսին վրայ պիտի ըլլայ, ու անոր անունը պիտի կոչուի՝ Աքանչելի, Խորհրդակից, Հոգե Աստուած, Յաւանականութեան Հայր, Խաղաղութեան Իշխան »: Եւ այլն, եւ այլն: Ես. Թ. 6:

« Սկիզբէն էր Բանը, ու Բանը Աստուծոյ քովն էր, եւ Բանը Աստուած էր, Անիկա սկիզբէն Աստուծոյ քովն էր: Ամեն բան անով եղաւ, եւ առանց անոր բան մը չեղաւ՝ ինչ որ եղաւ: Կեանքը անով էր, ու կեանքը մարդոց ըյսն էր: Յովհ. Ա. 1—4: Եւ Բանը մարմին եղաւ, ու մեր մէջը բնակեցաւ, (եւ անոր փառքը տեսանք, Հօրմէն միածնի փառքին պէս,) շնորհքով ու ճշմարտութիւնով լեցուն »: Յովհ. Ա. 14:

« Եւ հրեշտակը ըսաւ անոնց... Չեզի այսօր Փրկիչ մը ծնաւ Դաւթի քաղաքին մէջ, որ ինքը Օծեալ Տէր է »: Դուկ. Բ. 10, 11:

Ո՞վ կ'ընայ ըսել թէ Քրիստոսի էութիւնը փոխուեցաւ ՚ի չափ հասակի հասած ժամանակը, երբ 50 տա-

րու եղաւ ու մկրտուեցաւ, քանի որ այս յառաջ բերուած բնաբանները բացայայտ կը վկայեն թէ ծնեալը՝ Հօր Աստուած, Յաւիտենականութեան Հայր եւ Սկիզբէն եղող Բանն էր, որ մարմին եղաւ, եւ որ Փրկիչ ծնաւ եւ ինքը օծեալ Տէր էր ծնած ժամանակը:

Ըզճալի՛ էր մեզ որ Պ. Աւետարանչի ներկայացուցած գաղափարները ՚ի ձեռն Սուրբ Գրոց բնաբանից, այսպիսի ոչ ուղղափառ եւ վտանգաւոր վախճաններու չյանդէր: Բայց եւ ոչ ոք ուշիմ դիտող եւ քննաբան ասկէց տարբեր եղրակացութիւն պիտի հանէ, կարծեմք:

2. Պատ. Շիշմանեան Բրիտանոսի անսխալ օրինակը առջեւնիս ղնելով, որ նա չափահաս մկրտուեցաւ իբր երեսնամեայ հասակի, եւ այն ալ իբր թէ ընկղմամբ, (զի կրնայ ըլլալ որ հեղմամբ մկրտուած ըլլայ Յովհաննէսէն, ինչպէս որ հին մկրտութեան պատկերները եւ մեր օրերուն մէջ նկարուածներն ալ ջուրը Յիսուսի գլխուն վրայ լեցուցնելու, թափելու դիբըով կը ցցուեն զՅովհաննէս Կարապետ), կ'ուզէ համոզել իւր ընթերցողները նոյն օրինակին հետեւիլ: Բայց Պ. Աւետարանիչ չխորհիր որ անհնար է մեզ մկրտուիլ իբրեւ քրիստոնէայ եւ միանգամայն Բրիտանոսի օրինակին պէս: Կը հարցունեմ իրեն, Բրիտանոսի մկրտութիւնը ինչ մկրտութիւն էր, Բրիտանոնէական թէ Յովհաննէս մկրտչի մկրտութիւնը: — Յայտնի է որ Յովհաննէս մկրտչի մկրտութիւնն էր, զի մկրտողը Յովհաննէս մկրտիչ ինքն էր, իւր միւս մկրտելոց հետ զՅիսուս ալ մկրտելով, որ նաեւ Յիսուսի հարցուց սքանչաց-

մամբ, միանգամայն դժկամակերով մկրտել զնա: « Ինձի՛ պէտք է որ քեզմէ մկրտուիմ, ու դուն ինձի՛ կու գաս »: Որուն այսպէս պատասխան տուաւ Յիսուս. « Թող տուր հիմա, ինչու որ այսպէս կը վայելէ մեզի, որ բոլոր արդարութիւնը կատարենք »: Մատթ. Գ. 13—15:

Վասն որոյ ըստ այսմ տեսութեան, վունճ է Բրիտանոսի մկրտութեան օրինակը ներկայացուցնել իբրեւ նմանելի պարտաւորութիւն Բրիտանոնէից:

Դարձեալ, եթէ պարտիմք ճշդիւ նմանիլ Բրիտանոսի՛ իմասին մկրտութեան, ուրեմն պարտիմք ճիշդ երեսնամեայ հասակի մէջ մկրտիլ՝ անկից ոչ առաջ եւ ոչ ետքը, զի նա երեսնամեայ էր երբ մկրտեցաւ, ինչպէս առաջ ըսինք:

Թէ Յովհաննէս մկրտութիւնը գլխովին տարբեր էր Բրիտանոնէական մկրտութենէն, այնպէս որ Բրիտանոնէական մկրտութեան տեղը չէր կրնար բռնել, պարզ կը տեսնուի Գործոց ԺԹ. 1—7 համարներուն մէջ յիշուած պատմութենէն. « Եւ քանի որ Ապոլոս Կորնթոսի մէջ էր, Պողոս վերի կողմերը պատելով Եփեսոս եկաւ, եւ քանի մը աշակերտներ գտնելով, ըսաւ անոնց. Երբոր հաւատացիք՝ Սուրբ Հոգին առիք արդեօք: Անոնք ալ ըսին իրեն. բայց մենք լսած ալ չենք թէ Սուրբ Հոգի կայ: Եւ ըսաւ անոնց, Հապա ինչով մկրտուեցաք: Անոնք ալ ըսին, Յովհաննէսին մկրտութիւնովք: Պողոս ալ ըսաւ. Յովհաննէս ասալխաբութեան մկրտութիւնով մկրտեց, ժողովուրդին ըսելով թէ ան որ իրմէ ետքը պիտի գայ՝ անոր հաւատան, այսինքն՝ Բրիտանոս Յիսուսին: Ու երբոր

ան լուցին, Տէր Յիսուսի անունովը մկրտուեցան: Եւ Պողոս երբոր անոնց վրայ ձեռք դրաւ, Սուրբ Հոգին անոնց վրայ եկաւ, եւ լեզուներ կը խօսէին ու կը մարդարէանային: Եւ ան բոլոր մարդիկը տասուերկուքի չափ էին »:

Հոս պատշաճ կը համարինք դնել հետեւեալ ծանօթութիւնը Յովհաննու մկրտութեանը վրայ:

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

Մկրտութիւնը կը յիշուի Նոր կտակարանին մէջ առաջին անգամ Յովհաննու մկրտչի՝ կարապետին Քրիստոսի, մկրտութեան առթիւ: «Ան օրերը Յովհաննէս մկրտիչ եկաւ, ու Հրէաստանի անապատին մէջ կը քարոզէր», եւ այլն: Մատթ. 9. 1—6:

Ինչդիր ծագած է թէ արդեօք Յովհաննու մկրտութիւնը նոյն է Քրիստոսի սահմանադրածին հետ, (Մատթ. ԻԸ. 19.) որ կը զործադրուի յայնմհետէ մինչեւ ցայսօր, եկեղեցւոյ մէջ: Մենք որոշապէս, կ'ըսենք թէ նոյն չէր, այլ միայն նախաշաղիղ մի արարողութիւն, որ դրուած էր իրբեւ ճամբայ պատրաստող Աւետարանական Տնտեսութեան: Եւ ասով կը համաձայնինք, ո՛չ միայն նախնի եկեղեցւոյն հետ, այլ նաեւ մեզ ժամանակակից թէ՛ Մկրտիչեան եւ թէ՛ Մանկամկրտութեան ջատագով ամենէն պատուարժան եւ յարգելի մատենագրաց հետ: Որոգինէս կ'ըսէ, « Քրիստոս ինքն մկրտուեցաւ Յովհաննէսէն, ո՛չ Քրիստոսի՝ մկրտութեամբ, այլ օրինաց մկրտութեամբ »: Ոսկերեքան կ'ըսէ. « Ա. յն (Յովհաննու մկրտութիւնը) կամուրջ մ'էր,

իրը թէ, Հրէից մկրտութենէն փրկչին մկրտութեանը ճանրաց կը բանար. որ գերապանց էր քան դառաջինն, բայց ստորին քան զերկրորդը »: Ճառք ԻԲ: Հետեւեալք՝ այն մի քանի պատճառներն են, զորս յառաջ կը բերեն Պատ. Բովկթ. Հոլ (Մկրտիչեան հեղինակ մը) եւ այլք, ցուցունելու համար թէ Յովհաննու մկրտութիւնը նախապարասպան արարողութիւն մ'էր, եւ պէտք չէ՛ նկատուի իրբեւ Քրիստոնէական սահմանադրութիւն:

(1) Այս մկրտութիւն տեղի ունեցաւ Հրէական րնորեութեան տակ: Հրէական տնտեսութիւնը ազդողպէս շարունակեց մինչեւ ցմահ Քրիստոսի: Յայնժամ տաճարին վարագոյրը երկուքի բաժնուեցաւ: Յայնժամ մեղաց այն մեծ պատարագը մատուցուեցաւ, եւ նշանակական կամ ստուերական պատարագները դադրեցան: Յայնժամ Քրիստոս (Չնչեց օրէնքին ձեռագիրը, որ մեզի դէմ էր,) « հրամաններով [եղած] մեզի հակառակ եղող ձեռագիրը՝ որ մեզի դէմ կը կենար, Չնչեց, զանիկայ մշտնօրէն վերցուց՝ « Խաչագոյրն իրոյ քոնց »: Կող. Բ. 14:

Փրկիչն մեր ապրեցաւ հին տնտեսութեան տակ, եւ ճշդիւ կը պահէր Մովսիսական սահմանադրութիւններն ու օրէնքը, եւ ամեն ինչ որ կ'ըլլար եկեղեցւոյ մէջ նախ քան զիւր մահ, յատկապէս այն տնտեսութեան կը վերաբերէր: Ճշմարտիւ այս զօրաւոր ապացոյց մ'է թէ Յովհաննու մկրտութիւնը Քրիստոնէական սահմանադրութիւն մը չէր:

(2) Քրիստոնէական մկրտութիւնը սկիզբ առաւ Քրիստոսի բացորոշ հրամանաւ. « Գնացէ՛ք, աչակերտեցէ՛ք բոլոր ազգերը, մկրտելով զանոնք յա-

նուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»: Յովհաննու մկրտութեան այսպիսի սկզբնաւորութիւն մը չկրնար պահանջուիլ, որ նա կը մկրտէր Վրէժոս Բանակն Իշ Եր Երաւ: Յովհ. Ա. 51: Յովհաննէս իւր պաշտօնը իրրեւ Հրեշտի տրուած կը ներկայացունէ: Յովհ. Ա. 55:

(5) Յովհաննու մկրտութիւնը Երեմիէն է որ նախապատրաստական արարողութիւն մ'էր: Նա եկաւ «Տէրօջը ճամբան պատրաստելու»: Նա կը քարոզէր ժողովուրդին թէ Մեծիկն կոտորէր, եւ կը յորդորէր զնոսա պատրաստ լինել ընդունել զնա, եւ որպէս զի նոքա պատրաստուին, կը հրաւիրէր զանոնք ապաշխարութեան եւ մկրտութեան:

(4) Յովհաննու մկրտութեան մէկ հանգամանքէն ինչպէս ինք ալ կ'ըսէ, որոշ կը տեսնուի թէ բոլորովին տարբեր է Քրիստոնէական մկրտութեանն. «Թէ՛ որպէս զի նա (Քրիստոս) յայտնուի՛ Իսրայելի, ես եկայ ջրով մկրտելու»: Յովհ. Ա. 51: Յովհաննու պաշտօնէութեան եւ մկրտութեան մէկ կարեւոր մասն էր ցուցնել Մեսիան Հրէից ժողովուրդին, հրապարակաւ վկայութիւն տալ անոր համար, եւ քեթեւ լուս, լուսացմամբ ջրոյ՝ իւր պաշտօնին: Հարկ չէ ըսել թէ՛ ոչինչ կայ՝ Քրիստոնէական մկրտութեան մէջ որ անոր նմանի: «Քրիստոնէական պատուէր մը, կ'ըսէ Մր. Հոլ, ո՛չ հիմնեալ Քրիստոսի հեղինակութեան վրայ, եւ ո՛չ թէ արդիւնք բայց միջոց անոր յայտնուելուն, եւ ի սկզբան ի գործ դրուած այնպիսի անձէ մը, որ զինք չէր ճանչնար, անհասանելի խորհուրդ մ'է»:

(5) Յովհաննու մկրտութիւնը անմասն Քրիստո-

նէականին, չէր մատակարարուէր յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Զայս զիտենք զի ոմանք զորս Յովհաննէս մկրտեց, «լսած ալ չէին թէ Սուրբ Հոգի կայ»: Գործ. ԺԹ. 2: Յիրաւի, Յովհաննէս չմկրտեց յանուն Յիսուսի, եւ ոչ ալ ուրիշ ո՛ր եւ է անուամբ բայց միայն առ ինքն եկողները առ ի մկրտել, կ'առաջնորդէր հաւատալ անոր՝ որ իր ետեւէն պիտի գար»: Գործ. ԺԹ. 4:

(6) Յովհաննու մկրտութեամբ մկրտուողներէն տմանք, վերջէն մկրտուեցան առաքեալներէն: Այս եղաւ մի քանի աշակերտաց՝ զորս Պողոս գտաւ Եփեսոս, (Գործ. ԺԹ. 5) եւ ամենայն հաւանականութեամբ շատ ուրիշներ ալ կային:

Այս պատճառներով ապացուցանելի կը կարծենք թէ Յովհաննու մկրտութիւնը Քրիստոնէական մկրտութիւն մը, այլ յաւէտ նախաշաւիղ արարողութիւն մը, այն նպատակաւ որ ճամբայ պատրաստուի Մեսիային եւ անոր թագաւորութեան գալուն»:

5. Երբորդ գլխաւոր կէտը որ պիտի քննէինք բուն խնդիրն է, այսինքն՝ Պատ. Շիչմանեանի հաստատել ճգնած սո՛ վարդապետութիւնը, թէ՛ Մկրտութիւնն է էական պայման զՀոգին Սուրբ ընդունելու»:

Մենք զայս բացէ ի բաց կը հերքենք, եւ պարզապէս կ'ըսենք թէ Սուրբ Հոգին ընդունելու էական պայման՝ հաւատքն է: Հաւատքը էական պայման է կ'ըսենք, քանզի առանց ճշմարիտ ու կենդանի հաւատոյ բնաւ հնար չէ առնուլ զՀոգին Սուրբ: Բայց առանց մկրտեալ լինելու, կամ նախ քան զմկրտութիւն, Հոգին Սուրբն առնելու

«րինակ ունինք: Կոռնելիոս եւ իւր հետ Պետրոսի բերնով Աստուծոյ խօսքը լսողները՝ իրենց միջբանութիւն առաջ Հոգին Սուրբն ընդունեցին Պետրոսի եւ այլ Քրիստոնէից պէս: Գործ. Ժ. 44—48: Եւ յետոյ մկրտուեցան:

Պատ. Շիշմանեան, լաւ գիտնալով թէ այս պատմութիւնն մկրտութեան մասին իւր քարոզած նոր վարդապետութիւնը հիմն ի վեր տապալել կ'սպառնայ, փութացած է հնար մը գտնել ասոր զօրութիւնը խորտակելու, բացառութիւն կոչելով զայն, եւ ինք որ խրատ կու տայ Սուրբ Գրոց խօսքերը իրենց բնական պարզ վիճակին մէջ թողլով ընդունելու, առանց մեկնութիւն եւ առանց «մարդկային խառնուրդներ» ներմուծելու նոցա մէջ, այլ «Սուրբ Գրոց խօսքերով եւ ոճերով բացայայտել Սուրբ Գրոց ճշմարտութիւնները», իւր այդ գրած սկզբան հակառակ ընթացքով մտացածին պարագաներ ներմուծելով եւ «չառ հաւանական է թէ», «մանաւանդ որ շատ տարակոյս կայ թէ», եւ այլն ըսելով՝ աղտորիկ բացատրութիւն մը կ'ընէ, եւ իւր խօսքը կը կնքէ սա՛ կերպով. «Սուկէ ուրիշ տեղ մը չկայ բարձր Ս. Գրոց մէջ թէ երբէք Ս. Հոգին շնորհուրեցաւ հաւատացեալի մը կամ հաւատացելոց իրենց մկրտուելէն առաջ»: Եւ այս խօսքին վրայ իւր պարզամիտ, ռեֆրանսան եւ ազատամիտ բարեկամը կը պատասխանէ իրեն. «Պ. Աւետարանիչ, բաւական պարզ եւ գոհացուցիչ է (տուած պատասխանդ), քանզի կը տեսնեմ որ Սուրբ Գրոց համաձայն է»: (Մկրտութիւն, երես 30—31:)

Մենք, իրաւ այդ «ազատամիտ բարեկամին» չափ

ազատամիտ ե՛նք, բայց անոր չափ դիւրահաւան եւ պարզամիտ չենք, որ անմիջապէս պատասխանենք թէ տուած պատասխանդ գոհացուցիչ է: Շիտակը խօսելով՝ ես այդչափ համոզական փաստ չգտայ այդ պատասխանին մէջ: Իմ մտքիս միշտ կը ներկայանայ սա հարցումը. Մկրտութիւնը էական է Հոգին Սուրբն ընդունելու: — Կամ էական է, կամ չէ: Եթէ էական է՝ բնաւ բացառութիւն չկրնար ըլլալ որ առանց մկրտուելու Սուրբ Հոգին ընդունի մարդ. եթէ էական չէ, ըսես, իմ հաւատացածէս տարբեր չէ քու հաւատքդ ալ, եւ Սուրբ Գրոց պ ոգւոյն համաձայն խօսք ըսած կ'ըլլաս:

Պ. Աւետարանիչ, հարցում մ'ալ ես ընեմ ձեզի: Կրնա՞ք վստահաբար ըսել թէ անշուշտ ուրիշ անգամներ չպատահեցաւ որ առանց մկրտեալ լինելու Սուրբ Հոգին իջած ըլլայ Քրիստոնէից վրայ, թէ եւ Ս. Գրոց մէջ՝ այդպիսի դիպաց միայն մէկը գրուած ըլլայ: Կրնա՞ք վճռաբար ըսել թէ Գործոց Առաքելոց գիրքը բոլոր առաքելոց բոլոր գործքերը կը պարունակէ, եւ թէ աւելի ընդարձակ չէր կրնար գրուել այն: Եւ կամ՝ եթէ աւելի՛ ընդարձակ գրուած ըլլար Գործոց Առաքելոց գիրքը, կրնա՞ք վճռաբար ըսել թէ չլիտի պարունակէր ուրիշ պատմութիւններ եւս՝ յորս տեսնուէր թէ նախ առին զՀոգին Սուրբ, հաւատացեալք ի Քրիստոս, եւ յետ այնորիկ մկրտուեցան:

Հաւատքը էական եւ անհրաժեշտ պայման է Ս. Հոգին ընդունելու, ինչպէս որ ըսինք, զի առանց հաւատոյ հնար չէ երբէք զՀոգին Սուրբ ընդունիլ:

Պ. Աւետարանիչ կ'ընդունի թէ խը էական պայման համարած մկրտութիւնը զեռ չմատակարարուած՝ Ս. Հոգին կրնայ ընդունուիլ իբրեւ քաջասովիան վնեւով, բայց կը թուի թէ Պ. Աւետարանիչի էականին եւ մեր ըսած էականին միջեւ մեծ տարբերութիւն կայ: Հաւատք չեղած՝ քննչկըրնար ընդունուիլ Հոգին Սուրբ, ասոր մէջ երբէք բացառութիւն չկայ: Կամ ուրիշ խօսքով, կրնայ Հոգին Սուրբ ընդունուիլ առանց մկրտութեան, եւ կրնայ մկրտուիլ մարդ մը առանց զՀոգին Սուրբ առնելու: Սուրբ Հոգւոյն չորհուրդ մկրտութեան հետ բնաւ կապակցեալ չէ: Ինչ գիտէ Պ. Աւետարանիչ, թէ Պէնտէկոստէին օրը՝ որ Առաքելոց վրայ Հոգին Սուրբ իջաւ ահեղապէս հրեղէն լեզուաց երեւութով, ինչ գիտէ Պ. Աւետարանիչ թէ Առաքեալք ամենն ալ մկրտուած էին թէ ո՛չ: Գիտենք որ կային անոնց մէջ որ առաջ Յովհաննէս Մկրտչին աշակերտ էին, եւ հաւանական է թէ անկից մկրտուած ըլլան, ապախարութեան (Յովհաննու) մկրտութեամբ. բայց կրնայ մեր դրական փաստ փնտռող Պ. Աւետարանիչ դրապէս հաստատել թէ Առաքեալք ամենն ալ մկրտեալ էին: Անոնց եւ ո՛չ մէկուն համար գրուած է ի Սուրբ գիրս թէ մկրտուեցաւ:

Արդ՝ կը փութամք այստեղ յառաջ բերել ի Սուրբ Գրոց մի քանի վկայութիւններ որք պարզ եւ ակներեւ ցոյց կու տան թէ Հոգին Սուրբ տրուեցաւ հաւատացելոց այլեւայլ ժամանակ, այլեւայլ սովորի եւ միջոցօք եւ միեւնոյն անձանց՝ քանի քանի անգամ:

(1) Փլնածք՝ ի Քրիստոսէ, Առաքելոց խումբին: «Եւ աս ըսելով՝ անոնց վրայ լիջեց (Յիսուս) ու ըսաւ անոնց, Առէք Հոգին Սուրբը. որոնց որ մեղքերը թողուք, թողնաւ ըլլայ անոնց, եւ որոնց որ մեղքերը ետ բռնէք, բռնուած ըլլայ:» Յովհ. Ի. 22, 23:

(2) Առաւելոց մեկտեղ ժողովուած միջոցին, Պէնտէկոստէին օրը:

«Եւ Պէնտէկոստէին օրը հասնելուն՝ ամենքն ալ միարան մէկտեղ էին: . . . Եւ բաժնուած լեզուներ երեւցան իրենց՝ որպէս թէ կրակէ, ու ամեն մէկուն վրայ նստաւ: Եւ ամենքն ալ Հոգւով Սրբով լեցուեցան, ու սկսան ուրիշ լեզուներով խօսիլ, ինտոր որ Հոգին իրենց խօսիլ կու տար:» Գործ. Բ. 4—4:

(3) Պետրոսի տրուեցաւ դարձեալ, մինչ արեանին առջեան էր:

«Ան ատենը Պետրոս Հոգւով Սրբով լեցուած ըսաւ անոնց. ո՛վ ժողովուրդին իշխանները եւ իսրայէլին ծերերը. . . :» Գործ. Դ. 8:

(4) Առաւելոց որոտեցաւ մասնաճամբ՝ երբ աղջիտ ըրին: «Ու երբոր անոնք աղօթք ըրին, չարժեցաւ անտեղը՝ ուր որ ժողովուած էին. եւ ամենքը Հոգւով Սրբով լեցուեցան, ու Աստուծոյ խօսքը համարձակ կը խօսէին:» Գործ. Դ. 31:

(5) Սամարացի նորահասարից որոտեցաւ Պետրոսի եւ Յովհաննու աղօթի ընելովը ու յետոյ յետոյ դնելովը:

«Իսկ Երուսաղեմի մէջ եղող առաքեալները երբոր լսեցին թէ Սամարացիք Աստուծոյ խօսքը ընդունել են, Պետրոսը ու Յովհաննէսը անոնց խըր-

Պէնտէկոստէին օրը
Պէնտէկոստէին օրը
Պէնտէկոստէին օրը
Պէնտէկոստէին օրը

Վերջին Գրքերու Քննարկ

կեցին. որոնք իջնելով՝ ազնիւ ըրին անոնց համար որ Սոսրբ Հոգին առնեն, (ինչու որ դեռ անոնց մէկուն վրայ իջած չէր, հասպա միայն Տէր Յիսուսի անուհովք մկրտուած էին,) Ան ատենը յերեւելին որքին անոնց վրայ ու Սոսրբ Հոգին կ'առնէին:» Գործ. Ը. 14—16:

(6) Կոռնելիոսի և Խոր հետ եղողներուն վրայ իջաւ Հոգին Սոսրբ փնլ Պետրոս իջ տարողէր անոնց, և իջ ւեէին խօսիչ:

«Ու երբոր Պետրոս աս խօսիչը իջ խօսէր, Հոգին Սոսրբ իջաւ ասնոն վրայ, որոնք խօսիչ իջ ւեէին:» եւ այլն. Գործ. Ժ. 44—48:

(7) Պողոսի՝ արուեսցաւ Հոգին Սուրբ Եղիմաս մոգին ընդդիմութեան եւ զայն յանդիմանելու առթիւ:

«Ասիկա Բառնարասը եւ Սողոսը հրաւիրելով՝ ուզէց Աստուծոյ խօսքը լսել: Սակայն անոնց դէմ կեցաւ Եղիմաս մոգ... ու կ'ուզէր փոխանորդ բղէխը հաւատքէն դարձունել: Բայց Սողոս՝ (որ Պողոս ալ կ'ըսուի) Հոգեով Սրբով լեցուած՝ աչքերը անոր վրայ տնկեց ու ըսաւ...:» Գործ. Ժ. 9. 7—9:

(8) Հոգին Սոսրբ որոնեցաւ Եփեսոսի Ֆլը եղող աղաչեցողոց, երբոր Պողոս անոնց վրայ յերեւելի տրուաւ:

«Եւ Պողոս երբոր անոնց վրայ յերեւելի տրուաւ, Սոսրբ Հոգին անոնց վրայ յերեւելաւ, և լեզուներ կը խօսէին եւ կը մարգարէանային:» Գործ. Ժ. 6:

Պ. Աւետարանիչ, տես հոս քանի՞ բացառութիւն եղաւ ձեր առանց մկրտութեան Սուրբ Հոգի չտրուելու նորագիւտ վարդապետութեան դէմ...: Բայց մասնաւոր դիտողութեան արժանին եւ միանգամայն զարմանալին այս է որ՝ մէկ եզակիան «օրինակ»

մ'անգամ չենք կրնար գտնել Սուրբ Հոգին մկրտութեամբ արուելուն, հալածակ Պատ. Երչմանեանի բաղձանաց եւ բանից: Եւ իրօք քաջայայտ է թէ Հոգին Սուրբը առնելու մի միայն պայմանը ճշմարիտ հաւատքն է, զոր ունէին անշուշտ բոլոր այն անձինք՝ որ ընդունեցին զնա: Զոր՝ ճշմարիտ հաւատքը չունենալով եւ սիրտը չիտակ չըլլալով՝ Սիմոն մոգ չկրցաւ ընդունիլ, եւ այնպէս կ'ըսու յանդիմանութիւն լսեց Պետրոսէն: Գործ. Ը. 18—23:

Պատ. Երչմանեան եւ իւր գաղափարակիցք կամ հետեւողք, երբէք չէն խորհիր որ եթէ մկրտութեամբ Սուրբ Հոգին առնուիլը հաստատելու համար իրենց յառաջ բերած այն բնաբանները իրօք նպատաւոր ըլլային իրենց գաղափարին կամ վարդապետածին, պէտք էր օրինակներ, դէպքեր գտնուէին պատմուած թէ այս ինչ անձը կամ անձինք երբ մկրտուեցան, մկրտուած ժամանակին ընդունեցին Հոգւոյն Սրբոյ պարգեւը: Բայց ինչ կ'ըսեմ. իրենց պնդածին նայելով զՀոգին Սուրբ փայն յերբուելով առնելու էին, եւ քացարտութեան ալ պէտք էր ինչալ: Սակայն ահա ընդհակառակն՝ մենք գոհ ենք միայն մէկ եզակիան օրինակ մը տեսնել՝ որ ցուցնէ թէ Հոգին Սուրբ մկրտուելով առին հաստացեալք:

Ե. Պատուելի Երչմանեան կը ներկայացունէ զհրդարանին իբրև Եսայի պայծառ վերադին քննութեան: Այսպիսի հարցում մը ընելով իւր սիրելի ընթերցողին, իւր երկու երեսէ բաղկացեալ նախայիշատակեալ տետրակին մէջ... «Եթէ Աստուծոյ միածին Որդւոյն անխալ օրինակին չէս հետեւած՝ եւ Անոր

Վերջին Գրքերու Քննարկ

պատուէրը չէս կատարած առաքելոց քարոզութեանը համաձայն (այսինքն՝ եթէ չափահասութեանը մէջ կամ կրկին եւ այն ալ ընկզմամբ մկրտուած չես,) ինչպէս կրնաս Աստուծոյ աղօթք ընել եւ յուսալ թէ... Զորէն « Հոգին ծնած էս:» եւ այս իւր վարդապետութեան ի հաստատութիւն իրբեւ զօրաւոր փաստ յառաջ կը բերէ Յովհ. Գ. 5, բնաբանը. «Թէ որ մէկ մարդ մը ջուրէն ու Հոգիէն չծնանի, չկրնար Աստուծոյ թագաւորութիւնը մտնել»:

Եթէ Պատ. Շիլաննեան այս բնաբանով «առանց մկրտուելու՝ մարդ մը չկրնար Աստուծոյ թագաւորութիւնը մտնել» կը հասկնայ, կարճ հարցում մը ունիմ իրեն ընելիք. Ուրեմն ինչո՞ւ համար մանկանց մկրտութիւնը կը մերժէ, եւ այդ կերպով կը զրկէ մանուկները Աստուծոյ թագաւորութիւնը մտնելէն: Արդեօք կրնայ առանց մարդկային խառնուրդի», «Սուրբ Գրոց խօսքերով եւ ոճերով բացատրել Սուրբ Գրոց (ըստ իւր գաղափարին) այս ճշմարտութիւնը», բայց միանգամայն իւր այդ վարդապետութիւնն ալ չեղձանելու պայմանաւ, թէ Մկրտութիւնը վերսին ծնանոր է:

Գառնանք բուն իսկ մեր նկատողութեան առնելիք կէտին, եւ համառօտիւ քննութեան առնու՞ք թէ ինչ է վերստին ծնունդը:

Նախապէս փրկիչն մեր կը խօսի այս մեծ նիւթոյն վրայ՝ վերսին կամ նորէն ծնանիլ բառերը գործածելով ընդ Նիկիոզեմուսի ունեցած խօսակցութեանը մէջ, ըսելով. «Թէ որ մէկ մարդ մը նորէն (կամ վերստին) չծնանի, չկրնար Աստուծոյ թագաւորութիւնը տեսնել»: Յովհ. Գ. 3: Զոր Նիկո-

[Հարցիկ և պատասխան]

զեմուսի չհասկնալուն եւ զարմացմամբ «Ինտո՞ր կըրնայ մարդ մը ծնանիլ, որ ծերացած է, հնարաւոր բան է որ նորէն իր մօրը որովայնը մտնէ ու ծնանի», ըսելուն վրայ՝ յաւելցուց մեր Տէրը. «Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ քեզի, թէ որ մէկ մարդ մը ջուրէն ու Հոգիէն չծնանի, չկրնար Աստուծոյ թագաւորութիւնը մտնել»: «Մարմինէն ծնածը մարմին է, ու Հոգիէն ծնածը՝ հոգի է: Գուն մի՞ զարմանար որ քեզի ըսի թէ Պէտք է ձեզի նորէն ծնանիլ: Հովը ո՞ւր որ ուզէ կը փչէ եւ անոր ձայնը կը լսես, բայց չէս գիտեր ուսկից կու գայ՝ կամ ո՞ւր կ'երթայ, ասանկ ալ է ան ամենը՝ որ Հոգիէն կը ծնանի»: Յովհ. Գ. 5—8: Յայտնի՛ է այս բնաբանից պարունակութենէն, թէ վերստին ծնունդը մե՞ծ փոփոխութիւն մ'է ի մարդուս, եւ ինչպէս ունանք հեղինակը ըսած են՝ այն է բարոյական բնութեան հիմնական փոփոխութիւն մը», եւ ըստ Առաքելոյն բանի, «նոր սրբոյժութիւն» լինել, Գաղ. 2. 15: «Մեղաց Բռնիլ», Հռովմ. 2. 2: «Կենդանանալ». Եփես. Բ. 1: «Հին մարդը խաչը հանել». Հռովմ. 2. 6: Սոյն փոփոխութիւնը եղեկիէլի մարդարեւութեան մէջ կոչուած է «Նոր սրբոյժութիւն». Եղեկ. 1, 2. 26:

Բրիտանոսի վերոյիշեալ խօսքերէն առ Նիկիոզեմուս, պարզապէս կը հասկցուի, թէ մարդ մը ի մարմնոյ ծնանելով՝ մարմնաւոր ու մեղանշական գործքեր կը գործէ, իսկ ի Հոգւոյն ծնանելով՝ իրբեւ նոր կեանք մը ապրիլ սկսած՝ Հոգիին գործքերը կը գործէ, Սուրբ Հոգւոյն գործքերը կամ պատուները, որպիսի են, «Սէր, խնդութիւն, խաղաղութիւն, երկայնամտութիւն, քաղցրութիւն, բա-

րութիւն, հաւատարմութիւն, հեղուցիւն, ժուժկալութիւն»։ Գաղ. Ե. 22, եւ այլն։ Եւ այս մեծ փոփոխութիւն՝ «կէզն է սուրբ փափաքներու եւ գործոց, զոր Պօղոս առաքեալ այսպէս կ'ստորագրէ, «Ան որ ձեր մէջը բարի գործ մը սկսեց, պիտի կատարէ մինչեւ Քրիստոսի օրը»։ Փիլ. Ա. 6։

Յովհաննու Աւետարանին Ա. գլխոյն մէջ դարձեալ կը կարդանք այս մեծ նիւթոյս վրայ՝ այսպէս. «Որոնք որ զինքն ընդունեցին. (այսինքն՝ բանը, ճշմարիտ լոյսը, զՅիսուս Քրիստոս,) անոնց իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու, որոնք կը հաւատան իր անուանը. որ անոնք ո՛չ արիւնէ եւ ո՛չ մարմինի կամքէ, ո՛չ ալ մարդու կամքէ, հապա Աստուծմէ ծնան»։ Յովհ. Ա. 12, 15։ Որդիք մարդկան՝ կ'ըլլան որդիք Աստուծոյ, եւ այս ծննդեամբ կը լինին «Աստուծոյ նմանող՝ սիրելի գաւազներու պէս»։ Եփես. Ե. 1։ Ո՛չ թէ սոսկ արտաքին երեւութով պիտի մտնեն Աստուծոյ գաւազուք կոչուած կամ համարուած խմբին մէջ, այլ իսկապէս, ի ներքուստ հիմնական փոփոխութեամբ կը լինին որդիք Աստուծոյ, նմանելով Անոր՝ սրբութեամբ, սուրբ փափաքներով, խսպառ հրաժարելով մեղքէն ու մեղանշտկան բոլոր ճամբաներէն, որոց սովոր եւ ունակացած էին, եւ նոր կենաց շաւղի մը մէջ մտնելով եւ շարունակելով ու յարատեւելով ալ ի նմին։ Ինչպէս որ Պօղոս առաքեալ գեղեցիկ կը նկարագրէ վերասին ծնեալի մը յատկութիւնքը, խրատական ոճով. «Արդ՝ թէ որ Քրիստոսի հետ յարութիւն առիք, ուրեմն վերի բաները փնտռեցէք, ուր որ Քրիստոս կը նստի Աս-

տուծոյ աջ կողմը... Ուստի ձեր երկրաւոր անդամները սպաննեցէք. պոռնկութիւնը, պղծութիւնը, [անասն] կիրքը, չար ցանկութիւնը, եւ ագահութիւնը՝ որ կռապաշտութիւն է, ... Որ ատեն մը դուք ալ անոնց մէջը կը քայլէիք, երբոր անոնց մէջը կ'ապրէիք։ Բայց հիմա մէկդի՛ ձգեցէք դուք ալ ան ամենը. բարկութիւնը, սրտմտութիւնը, շարութիւնը, հայհոյութիւնը, անհամեստ խօսքերը ձեր բերաններէն։ Իրարու սուտ մի՛ գրուցէք. «Էն ճարտը իր գարծքերովը ձեր վրայէն հանեցէք, եւ հափէ+ [ան] նորը՝ գիտութիւնով նորոգութիւն, իւր Ստեղծողին պատկերին պէս։ ... Ուստի Աստուծոյ ընտրեալ սուրբերու ու սիրելիներու պէս, վրանիդ հագէք դուք, ողորմութիւնը, քաղցրութիւնը, խոնարհութիւնը, հեղութիւնը, երկայնմտութիւնը, իրարու համբերելով, եւ իրարու ներելով թէ որ մէկը մէկու մը դէմ արտուցմը մը ունենայ, ինչպէս որ Քրիստոս ձեզի ներեց՝ անանկ ալ դուք...»։ Կող. Գ. 1—17։

Գարձեալ. «որ ձեր վրայէն մէկդի՛ հանէք ան [ձեր] սառլի վարմունքին պէս [եղած] հին ճարտը՝ խաբեբայ ցանկութիւններով սպականուածը. եւ ձեր մտքին հոգիովը նորոգուիք, եւ նոր ճարտը վրանիդ հագնիք, ան որ Աստուծոյ պատկերին պէս ստեղծուած է, արդարութիւնով ու ճշմարիտ սրբութիւնով»։ Եփես. Գ. 22—24։ Եւ այլն, եւ այլն։

Կը թուի թէ Պ. Աւետարանիչ Նիկողեմոսի պէս անհնար կը սեպէ մարդու մը ներսիդին այսպիսի փոփոխութիւն լինելը. եւ իբր թէ կը հարցընէ Նիկողեմոսի հետ. «Աս ի՞նչպէս կրնայ ըլլալ», եւ

իւր «Ազատամիտ բարեկամին» բերնովը կը հարցունէ դարձեալ. «Չէ՞ որ Առաքելոյն խօսքերը յայտնի կը ցուցնեն թէ՛ իւր յորդորանքը նամակը կարգապահութեան ընկելք գործերը կը ցուցնեն, եւ ոչ թէ՛ ուղղակի Հոգիին դարձերը, որն որ Սուրբ Հոգին չի արտակեցունելու համար այդ խրատները կը խօսի իրենց»։ (Մկրտ. Երես 40—41)։ Մեք համաձայն եմք Պ. Աւետարանչի հետ, թէ՛ այդ խօսքերը խրատ եւ յորդոր ալ են, հաւատացելոց, բայց քաջայայտ չէ՞ նաեւ, որ ատոնք նորոգեալ կամ վերստին ծնեալի մը յատկութիւնքն ալ կը նկարագրեն։ Շատ աղէկ ըսեր է Պ. Աւետարանիչ, այլուր, թէ՛ «Սուրբ Գրոց ճշմարտութիւնները քըն՝ նաժ ժամանակինս, երբ մէկ մասը ուրիշ մասերէն կը բաժնենք, շատ կը սխալինք»։ Բայց թող այդ սկզբունքը ինքը սկսի գործադրել այսօր, եւ տեսնէ որ Սուրբ Գիրք խկապէս վերստին ծնեալի մը յատկութիւնքը կը նկարագրեն, «Մարմինէն ծնածը մարմին է, ու Հոգիէն ծնածը հոգի է», ըսելով. Յովհ. Գ. 6։ Եւ այսպիսի բնաբաններով եւս. «Եւ անոնք որ Քրիստոսիններն են, [էրենց] մարմինը խաչը հանեցին [բնական] կիրքերով ու ցանկութիւններով մէկտեղ»։ Գաղ. Ե. 24։

Երբ Պ. Աւետարանիչ Նիկողեմոսի պէս դարմացմամբ եւ իբրեւ անկարելի բան համարելով ի մարդուան վերստին ծնունդ լինելն, այնպիսի խօսքեր կը խօսի որ իբր թէ կը հարցունէ անոր նման. «Ատ ինչպէս կրնայ ըլլալ»։ յարմարապէս կրնայ պատասխան արուել իրեն այն ոճով ու եղանակաւ՝ ինչպէս Քրիստոս պատասխանեց Նիկողեմոսի հար-

ցրնելով. «Դուն իարայելի [Չէ՞] վարդապետ մըն ես, եւ այս բաները չե՞ս գիտեր»։ Կրնայ մէկը հարցնել այս եղանակաւ Պ. Աւետարանիչին, «Դու Քրիստոնէական կրօնին իբրեւ պուտ եւ մարդկային խառնուրդէ ազատ վարդապետութեանց Աւետարանիչ մըն ես, եւ այս բաները չե՞ս գիտեր, թէ նորոգեալ մը, վերստին ծնեալ մը, Աստուծմէ ծընած մը ինչպէս կ'ըլլայ, ինչպիսի փոփոխութիւնք տեղի կ'ունենան այնպիսոյն բարոյական եւ հոգեւոր վիճակին մէջ, նորա մտաց, զգացմանց, փափաքանաց, կամաց եւ միով բանիւ՝ խորհրդոց, բանից եւ գործոց մէջ. եւ որ՝ ոչ թէ պէտք է ըլլայ՝ այլ կ'ըլլայ՝ էրպէս՝ նոր մարդ, «նոր ստեղծուած», «հիները անցած եւ ամեն բան նոր եղած»։ Բայց, կարծեմ, գիտեմ պատճառը թէ ինչ՞ու համար Պ. Աւետարանիչ այդ կերպով կը ներկայացնէ խնդիրը եւ այդ օրինակ ոճով կը խօսի։ Չի կը թուի թէ ինք եւս վստահութիւն չունի որ իւր մկրտութիւնը այդ վերստին ծնունդը յառաջ կրնայ բերել, թէ եւ իւր այդ մասին գործածած բառերը խոշոր բառեր են։

Եթէ մկրտութիւնը վերստին ծնունդ է, պէտք է վերստին ծնեալի մը բոլոր նշանները երեւին առջն Պրոֆետի վրայ, անոնք ինչ վիճակի մէջ՝ (պատրաստութեամբ կամ անպատրաստ) որ լինին մկրտեալ։ Իսկ եթէ այս նշանները անշուշտ չեն երեւիր քու՞ր Պրոֆետի վրայ անխտիր եւ առանց բացառութեան, մկրտութիւնը ինքնին՝ բնաւ չկրնար վերստին ծնունդ լինել, եւ երբէք պատշաճութիւն չընկայ ի ջրոյ մկրտիլը վերստին ծնունդ կոչել։

Դիտողութեան արժանի մի քանի մասնաւոր կէ-

չէն հաւատար: Մո՛ւտ են Եւրոպիոյ եւ Ամերիկայի եկեղեցեաց վրայ պատմուած արթնութիւններն, որք յաճախ կը հրատարակուին ի լուր համայն աշխարհի ի ձեռն լրագրաց ու այլեւայլ միջոցներով: Մի գուցէ այդ արթնութեանց եւ հոգեւոր շարժմանց ենթակայ լինող անհատք կամ ժողովուրդք «Ֆրանսա» ալ այս նոր յարանուանութենէն եղած ըլլան:

Քանի՛ որ այսչափ ապացուցիւք եւ բազմաթիւ վկայութեամբք կը հաստատուի թէ մանկական մկրտութեամբ եւ սրահմամբ մկրտողներու մէջ եւս այսպիսի հոգեւորութիւն, բարեպաշտութիւն, ջերմեռանդութիւն եւ արթնութիւնք յաճախ կը տեսնուին, միթէ՛ իրաւունք չունինք Սամիտոնի մօրը նման խորհիլ եւ մտկարերել, որ երբ «Մանուէ (Սամիտոնին հայրը) իր կնոջը ըսաւ, Անչուշտ պիտի մեռնինք, քանզի զԱստուած տեսանք... կինը անոր ըսաւ, թէ որ Տէրը մեզ մեռցնել ուզէր. մեր ձեռքէն ողջակէզն ու հացի ընծան չէր ընդուներ, ու աս բոլոր բաները մեզի չէր ցուցներ, եւ այս միջոցիս մէջը ասանկ խօսքեր մեզի լսել չէ՛ր տար»: Դատ. Ժ.Գ. 22, 23: Եթէ՛ առանց «Աշակերտք» անուանելոց օրինակին պէս մկրտուելու, Հոգին Սուրբն ընդունիլ կամ վերստին ծնունդ հնար չէր լինել, Աստուծոյ օրհնութիւնն ու հոգեւոր պարգեւներ չպիտի երեւէին այս բազմաթիւ եկեղեցեաց եւ հազարաւոր անհատ անձանց վրայ: Այս՝ բնական եւ անխուսափելի հետեւութիւն է:

4. Եթէ՛ չափահասաց եւ ընկղմամբ մկրտութիւնը վերստին ծնունդ է, ուրեմն վերստին ծնեալի մը նշանները եղող Հոգիին պտուղները պէտք է տես-

նուն քո՛ւր Պրոբլեց վրայ, եթէ՛ ոչ՝ ետ առնուելու է այդ խօսքը թէ մկրտութիւնը վերստին ծնունդ է: Բայց դժբախդաբար այդպիսի նշան, պտուղ եւ արդիւնք յառաջ բերած չտեսնուիր, եւ ո՛չ ալ զգալի տարբերութիւն վարուց, բարուց, բաղդասեղով կրկին մկրտելոց վերջին հոգեւոր ու բարոյական վիճակը անոնց այս մկրտութենէն առաջ ունեցած վիճակին հետ: Մեր եղբարց եւ քերց վրայ եթէ՛ կային իրենց կրկին մկրտուելէն առաջ Հոգւոյն Սրբոյ պարգեւներէն, կը յուսամք թէ հիմա ալ կան, խի թէ՛ որ արդէ՛ն չկային, կը վախանաք եւ ցաւով կ'ըսեմք թէ հիմա ալ չկան: Արդէ՛ն անոնցմէ ոմանք խոստովանած են թէ՛ իրենց վրայ փոփոխութիւն մ'եղած չէ եւ ո՛չ յառաջդիմութիւն ի լաւ անդր յորմէ՛ հետէ կրկին մկրտուած են, եւ չեն կրցած ըսել թէ՛ Հոգւոյն Սրբոյ պարգեւն ընդունած են ասաւել քան որչափ կրնան ընդունած լինել նախ քան զկրկին մկրտութիւն:

Երբեմն այնպիսի դէպքեր կը պատահին, որ մարդ ծիծաղը չկրնար բռնել: Այս կարգէն են սա հետեւեալ իմաստը պարունակող խօսակցութիւնք որ աստ եւ անդ տեղի կ'ունենան այս օրերս:

Ա. Այսինչ կրկին մկրտեալ անձին վարքը փոխուած է. իւր վրայ նորոգեալ լինելու նշաններ կը տեսնուին յորմէ՛ հետէ կրկին մկրտուեցաւ: — Բ. Ո՛չ: — Ա. Ի՛նչ է վարքը չփոխուելուն պատճառը, քանի որ մկրտութիւնը վերստին ծնունդ է: — Բ. Վարքը չփոխուելը կարելի է անոր համար է որ գուցէ մկրտուած ժամանակը հաւատք չունէր: — Եթէ՛ այսուհետեւ հաւատալու ըլլայ այդ անձը,

կրկին պիտի մկրտե՞ցնա Պատ. Շիրմանեան: — Բ. Ո՛չ: — Ա. Ուրեմն այդ անձին հաւատալէն առաջ մկրտուած լինելը բաւական պիտի սեպուի, այնպէս չէ՞: — Ա.յո՛, նոյն բանն է նախ հաւատալ եւ այնուհետեւ մկրտուիլ, կամ՝ նախ մկրտուիլ՝ եւ այնուհետեւ հաւատալ: — Ա. Հապա ինչու համար մանկանց մկրտութիւնը անվաւեր կը համարիք ըսելով թէ նոքա մկրտուած ժամանակներն հաւատացած չէին, եւ թէ՛ եթէ ի մանկութեան մկրտեալ մը կը հաւատաց չափազատ եղած տոեմ, հարկ է, կ'ըսէ, այնպիսեոյն կրկին մկրտուիլ ի ձեռն կրկին մկրտեալ պաշտօնեայէ մը. եւ այլն:

Ենթադրենք թէ ի մանկութեան մկրտեալ մէկը խոստովանի թէ՛ որչափ որ իւր մանկական մկրտութիւնն անվաւեր համարելով կրկին մկրտուած էր, այսու ամենայնիւ այդ կրկին մկրտուած ժամանակն ալ առանց ճշմարիտ հաւատք ունեցած լինելու մկրտուած ըլլալուն պատճառաւ, խիղճը զինք կը տանջէ, եւ հիմա հաւատացած լինելով կը փափաքի ու կ'առաջարկէ պաշտօնեային որ զինք մկրտէ դարձեալ անգամ, այսինքն երրորդ անգամ, Պատ. Շիրմանեան նորէն պիտի մկրտե՞ցայն: Եթէ փոխանակ 'ոչ՝ պատասխանելու, ինչպէս ի վեր անդ, պատասխան տրուի՛ Ա.յո՛ պիտի մկրտէ: Յայնժամ հետեւանքը նուազ ճախող չըլլար: Զի կրնայ ենթադրուիլ թէ այս երրորդ անգամու մկրտութիւնն ալ հաւատքով չէր եւ կեղծաւորութեամբ խարած էր մկրտեալ անձը զմկրտողն, եւ կամի դարձեալ մկրտուիլ, եւ այլն: Այնուհետեւ ի՛նչ. շարունակ մկրտութիւնն պիտի կատարուի այդ անձին վրայ,

եւ այն սրբազան խորհուրդը խաղաղքի՞ պիտի դարձուի: Ի՞նչ ծաղրական հետեւութեանց կը հասնի բանը: Ի՛նչպիսի ցաւալի առիթ ճշմարտութիւնն եւ Քրիստոսի կրօնքը նախաաանաց նշաւակ բնելու այլադաւանից եւ անկրօնից առջեւ: Եւ չէ՛նք կըրնար մեղադրել զնոսա, զի բանին բնական արդիւնքն է, մտացածին զիւր մարդկային, եւ ըսա հասարակաց առածին «ծուռ քանոնէն ուղիղ գլի՛ չ'եներ»: Եւ այս հեզնութեանց ու նախաաանաց պատասխանատուութիւնը որո՞ւ վրայ կը ծանրանայ: Անշուշտ պատճառ տուողներուն վրայ, «Վայ ան մարդուն՝ որուն ձեռքովը դայթակղութիւնը կու դայ»: Մատթ. Ժ. 7:

Ի Սուրբ Գիրս բնաւ ապացոյց չենք տեսներ թէ մկրտութեամբ Սուրբ Հոգի կ'առնուի կամ մեղաց թողութիւն կ'ըլլայ: Եւ փորձն ալ կը հերքէ զայն, ինտոր որ տեսանք: Արդ յայտ է թէ մեծապէս կը սխալինք, երբ բառական նշանակութեամբ կը մեկնենք Սուրբ Գրոց այն համարները, ուր Հոգին ընդունելու եւ մեղաց լուացման իմաստիւք խօսք կցուած են մկրտութեան ծխին հետ: Ինչպէս որ Սուրբ Գրոց շատ մը ուրիշ բնաբաններն ալ այսպէս կը նկատենք, այսինքն բառական նշանակութեանցը չէ՛նք նայիր (երես 48—55):

Սուրբ Գրոց ոգին եւ իմաստը այս է, մկրտութեամբ ոչ գչողին Սուրբ կ'ընդունիմք, ոչ վերատին կը ծնանիմք, եւ ոչ ալ մեղաց թողութիւն կը լինի, այլ պարտիմք մկրտիլ ի նշան ընդունած լինելուս գչողին Սուրբ, վերատին ծնած լինելուս հանդերձ թողութեամբ մեղաց: Զի այն հաւատքը որ կը

պահանջուի միրտուողէն, իբրև պայման միրտութեան, այն հաւատքը արդէն նոյն ինքն Հոգւոյն Սրբոյ պարգեւն է, եւ մարդ՝ ինքիրմէ չլինար ունենալ այն կենդանի ու ճշմարիտ հաւատքը առանց շնորհաց Հոգւոյն Սրբոյ: Եւ ինչպէս որ թլլիատութիւնը Սրբահամու հաւատքին նշանն էր, այսպէս ալ միրտութիւնը հաւատոյ նշանն է: Ո՛վ որ հաւատացած չէ, յարմար չէ՛ միրտուելու, իսկ ո՛վ որ Հոգւոյն Սրբոյ շնորհքն ու պարգեւն ընդունած չէ՛ չլինար հաւատալ միրտուելու յարմար լինելու հաւատով: Յիշենք Սիմոն մոգին հաւատքը, սուտ հաւատք, միրտուելու անյարմար հաւատք էր այն: Թէ՛ ճշմարիտ հաւատքը Աստուած կը շնորհէ եւ որ ուղղակի Քրիստոսէ եւ Սուրբ Հոգիէն կը պարգեւուի, կարդա՛ եբր. Ժ. 2: Ա. Կոր. Ժ. 8, 9: Հռովմ. Ժ. 9:

Գործոյս սկիզբները ըսինք թէ Պ. Աւետարանիչ մանկանց միրտութիւնը հերքել փորձած ատեն մի քանի օտար վարդապետութիւնք եւս ներմուծած է իւր յառաջ բերած ձեռնարկութեանց մէջ զորս վճռական ոճով հաստատել կը ձգէի: Այս վարդապետութիւնները երբ քննութեան առնուք, պիտի դասենք անոնց մէջ զարմանալի ծայրահեղութիւնք ի մասին Սուրբ Գրոց բնաբանները մեկնելու, եւ արտաուոց արտայայտութիւնք Քրիստոնէական եկեղեցեաց ցարդ ունեցած համոզմանց, դադափարաց եւ վարդապետութեանց անհամաձայն եւ ընդդէմ, որ եթէ մարդ ո՛նկն դնէ եւ կարեւորութիւն տայ անոնց, իւր դադափարք կերպարանափոխ պիտի լինին գլխովին, եւ իւր սկզբունք եւ կրօնական

պաշտամանց եղանակք եւ աղօթելու կերպն իսկ պիտի յեղաշրջի, եւ պիտի հարկադրի Սուրբ Գրոց ոգւոյն հակառակ վարիլ զԱստուած պաշտելու եւ Քրիստոնէական պարտաւորութիւնները կատարելու եղանակին մէջ:

Պիտի ջանամք մի քանի օրինակք յառաջ բերել հոս, հանդերձ համաուօ գլխողութեամբ:

«Չայն՝ անուն փոքրիկ տետրակին մէջ, հեղինակը խօսելով այս «Աշակերտք» կոչուած յարանուանութեան դաւանութեանց վրայ, այսպէս կը գրէ. «Անոնք հաւասար կարեւորութեամբ կ'ընդունին Հասարակ, ապաշխարութեան, Քրիստոս դասուելը, Աբրահամը, Տերջը անսուր կանգնելը, աղբիւր, արանջին և Եղեղիբրական պաշտամանքը, Բարեխորութեանք և Քրիստոնէական անտեսութեան Բարդ պատերազանց կարտրուց, եւ ընան չեն քարոզեր կամ ընդունիր թէ ոմանք էակն են եւ ոմանք չեն» (Չայն երես 5, 6):

Ո՛վ կրնայ ըսել իրաւամբ թէ այս յիշուած պարտաւորութիւնք ամենն ալ հաւասար են էակն լինելու մասին: Նոյն իսկ այդ տետրակը գրողը պիտի կրնայ ըսել, եթէ աղէկ խորհելու ըլլայ թէ «Քրիստոնէական տնտեսութեան բոլոր պատուիրանաց կատարումը» էակն է:

Էական ըսելով կը հասկնանք այնպիսի պատուիրաններ՝ զորս կատարել անհրաժեշտ է, եւ չլինար ըլլալ պարագայ մը՝ զորս չկատարելով կամ զանց ընելով անմեղ ըլլանք: Այս հասկացողութեամբ նոյն ինքն Աւետարանիչ զանց ըրած է եւ անսոյթ է կատարելու պատուէրներ՝ որ կան զբուած Նոր Կտակարանին մէջ: Արդէն յիշեցինք (երես 55-57)

լասանալ զորս մեծանց, զնիտանրս իսցալ զԵԼ, վաճառել զինչս
 և սալ աղտարաց, Աւերարանի Ժարոզաց խնայ սահառայեպ
 լինել, լեֆնափել զբողնն սոխց, ճամբան սոսի Բարեւ զսալ
 եւ այլն, դրական պատուէրները, զորս ինք Պ. Ա.
 ւետարանիչ զանց կ'ընէ կատարել: Եթէ Բրիստոն
 նէական տնտեսութեան բոլոր պատուիրանաց կա-
 տարունը հաւասար կարեւորութեամբ կ'ընդունին
 «Աշակերտք» եւ «Բնաւ չեն քարոզեր թէ ոմանք
 էական են եւ ոմանք չեն», հասկա այս ինչ է: Ըսել է
 որ թէեւ քարոզութեամբ եւ բերանացի դաւանու-
 թեամբ չեն խոստովանիր թէ Աւետարանին մէջի
 պատուէրներուն կատարմանը մասին էականի եւ
 սչ-էականի խտիր եւ զանազանութիւն կայ, բայց
 Գործող կ'ընեն այդ խոստովանութիւն, թէեւ կը պարծին
 թէ «Իրենց ջանքն է խօսիլ» երբ եւ ինչ բանի վրայ
 որ Աստուածաշունչը կը խօսի, եւ լուել՝ երբ եւ
 ինչ բանի վրայ որ Աստուածաշունչը լուռ կեցած
 է» (Չայն, եր. 4):

Չայնի հեղինակին՝ «Բրիստոնէական տնտեսու-
 թեան մէջ ամեն պատուիրանաց համար հաւատար
 կարեւորութեամբ կ'ընդունին անոնք» (այսինքն
 «Բրիստոնի աշակերտք» կոչուածները,) ըսելուն
 նպատակը յայտնի է: Որպէս զի Մկրտութիւնն եւս
 էական եւ փրկուելու անհրաժեշտ պարտաւորու-
 թեանց ցանկին մէջ ընդունել տայ: Բայց դժբաղ-
 դարար պատուիրանաց ամենքը էական են եւ կա-
 տարունը անհրաժեշտ ցուցնելով՝ մկրտութեան
 պարտաւորութեան հետ միասին վերոյիշեալներն
 ալ էական ընդունելու հարկադրեալ է, եւ որով-
 հետեւ զանոնք զանց կ'առնու, կատարել պարտք

չհամարիր, ըսել է՝ այն ըսածը ինքն անգամ եր-
 չընդունիր, չոր խօսք է միայն:

Քաջայայտ է, սակայն, ամեն աչք եւ իմացողու-
 թիւն ունեցողի թէ ի Սուրբ գիրս կան վարդապե-
 տութիւնք, որք հիմնական եւ էական են, որոց
 անտեղեակ եղող անձ մը իւր այսինչ պարագայից
 կամ վիճակաց մէջ՝ չկրնար փրկուիլ բնաւ, եւ կան
 վարդապետութիւնք եւս, որ չեն հիմնական կամ
 էական, եւ փրկուելու համար անոնց տեղեակ լի-
 նել եւ ըստ այնմ վարիլ անհրաժեշտ չէ այսինչ վի-
 ճակի կամ պարագայից մէջ եղող անձանց համար,
 որոց վրայ խօսելու տեղը չէ՝ հոս: Նաեւ արե-
 գական լուսոյ պէս պոյժաւ է եւ որոշ՝ սոս իրո-
 ղութիւն եւս, որ կան պարտաւորութիւնք յայտ-
 նեալ՝ որ փրկուելու համար էական են եւ կարել
 զանոնք անհրաժեշտ, եւ կան ալ՝ որ էական չեն, է Գործ-
 քներն հարկաւորապէս պարտաւորել չեն: Այս վերջինք
 եւս պարտաւորութիւնք են Բրիստոնէի մը՝ ճիշդ
 ինչպէս առաջինք մէկ տեսութեամբ, բայց կան
 պարագայք, յորս եթէ զանոնք ի գործ դնելն հնար
 չլինի, փրկութեան արգելք չըլլար: Ո՞ր դատողու-
 թեան տէր անձ կարող չէ մէկէն որոշել թէ էական
 պարտաւորութիւնք են Հասարակ, Ապաշխարութեանը,
 Սէք աւ Աստուած, Սէք աւ ընկեր եւ ըստ սոցին, որք
 ամենեւին եւ ոչ մէկ պարագայի տակ չեն կրնար
 զանց առնուիլ եւ նոյն ժամանակը փրկութեան
 յոյս ըլլալ: Նմանապէս ո՞ր մարդ, որ ունի դատո-
 ղութիւն, չկրնար իսկոյն որոշել տարբերութիւնն
 ասոնց եւ մկրտութեան ու հրապարակեան պարտանոց
 մէջտեղ, եւ ո՞վ է որ երբէք համարձակ հաստա-

տել վարանի թէ այս վերջինները էական չեն վեր-
կութեան համար, ինչպէս է հաւատաքը, ապաշխա-
րութիւնը, աղօթքը, եւ այլն: Քանզի կրնայ են-
թադրուել պարագայք, որոց մէջ մարդու մը ան-
կարելի լինելով մկրտուել յականմայս պարտաւորի
զանց առնուել այդ պատուէրին կատարումը, կամ
այնպիսի վիճակի մը մէջ կամ տեղ մը կրնայ գրո-
նուել մարդ՝ որ չկրնար հրապարակական կամ ժո-
ղովրդական պաշտամանց ներկայ գտնուել: Օրինակ
կրնանք առնուել աւազակն ի խաչին, նա կարող եղաւ
փրկուել առանց մկրտուելու, եւ առանց ժողովը-
րական պաշտաման ներկայ գտնուելու: Բայց բնաւ
կարելի չէր իրեն փրկուիլ՝ եթէ չունենար հաւատք,
ապաշխարութիւն, եւ եթէ չդաւանէր զՔրիստոս,
եթէ Տէրօջը անունը չկանչէր եւ չաղօթէր:

Պ. Աւետարանիչ իւր պարզամիտ «ազատամիտ
բարեկամ»ին բերանը կը դնէ սա հարցումը. —
«Պ. Աւետարանիչ, թէ եւ մկրտութեան վրայ ըրած
քննութիւններնուս մէջ մէկ քանի անգամ յիշեցինք
Հոգւոյն Սրբոյ պարգեւին վրայ, սակայն կը լսնդ-
րեմ որ հիմա յատկապէս խօսիք եւ ըսէք ինծի թէ
այդ երկնային պարգեւը որո՞ւ խոստացուած է,
եւ ի՞նչ է Անոր պաշտօնը մեր յաւիտեանական վեր-
կութեանը մէջ»: Եւ ինք հետեւեալ պատասխանը
կու տայ. — «Սուրբ Գիրքը մեզի կը սորվեցունէ թէ
Սուրբ Հոգւոյն պարգեւները միայն անոնց խոս-
տացուած է որ հաւատարմով եւ ապաշխարելով կը
մկրտուին յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն
Սրբոյ, եւ անոր պաշտօնը մեր Տէր Յիսուս Քրիս-
տոսը կը սորվեցունէ թէ իրեն հաւատացեալները

«Ամեն ճշմարտութեան պիտի առաջնորդէ», եւ
այլն: (Մկրտ. երես 87):

Ճշմարիտ է Պ. Աւետարանչի ըսածը թէ Հոգին
Սուրբ զհաւատացեալս «Ամեն ճշմարտութեան պի-
տի առաջնորդէ», եւ այլն, բայց կը հաճի՞ Պ. Ա-
ւետարանիչ, ըսել նաեւ, թէ այն հաւատաքը եւ
ապաշխարութիւնը, որ պայման է մկրտուելու եւ
Հոգւոյն Սրբոյ պարգեւն ընդունելու, մարդս ինչ-
պէս կ'ստանայ, ինչպէս կրնայ հաւատալ եւ ապաշ-
խարել մարդ, որո՞յ զօրութեամբ կամ կարողու-
թեամբ, ի՞նչ թէ իրմէ դուրս մի զօրութեամբ: —
Դիտենք որ Պ. Աւետարանիչ այս հարցման սա կերպ
պատասխան մը կու տայ, ըսելով թէ «խօսքին քա-
րողութեամբը նախ անոնց (այսինքն՝ անզեղլ եւ
անհաւատ մեղաւորներուն) մաքերը լուսաւորելու
է, որ տեսնեն իրենց վիճակը եւ հաւատան եւ
հնազանդին «խօսիչ», որ կարենան փնտել ու ճանչալ
զԱնիկա, եւ Անոր առաջնորդութեամբը «ճշարտա-
բեան» մէջ քալեն, ինչու որ «Աստուծոյ խօսքը Հոգիին
ստան է». Եփես. 2. 17: Այդ «սոսքը» Քրիստոս
իրեն հաւատացեալներուն յանձնեց, որ անով աշ-
խարհ Քրիստոսի հնազանդեցունեն» (Մկրտ. երես,
88.):

Շատ ճշմարիտ են Պ. Աւետարանչի խօսքերը
ի մասին Աստուծոյ խօսքին աղդեցութեանն եւ
Քրիստոնէից զայն անզեղլ ու անապաշխար մեղա-
ւորաց քարողելու պարտաւորութեան: Բայց մենք
զօհ չենք կրնար ըլլալ սոսկ լսելով թէ Պ. Աւե-
տարանիչ կ'ըսէ որ խօսքին քարողութեամբ միայն
այդ մեղաւորաց մաքերը կը լուսաւորուին եւ անոնք

կը հաւատան ու կը հնազանդին խօսքին: Իրան, Պօլոս առաքեալ եւս կ'ըսէ «Հաւատքը լսելէն է եւ լսելը Աստուծոյ խօսքէն»: Հռովմ. Ժ. 17: Բայց Առաքեալը Պ. Աւետարանիչին պէս «Ճշմարտութեան խօսքին միայն մէկ մասին մտադիր եղած եւ ուրիշ մասերը բոլորովին զանց առած» չէ, (Մկրտ. երես 85) այլ այդ խօսքը կ'ըսէ՝ հետը ուրիշ պարագաներ ալ կ'իյ ունենալով իւր մտքին մէջ, եւ զորս պարզապէս յայտնած է այլուր, եւ որոնք քիչ մը վարը դարձեալ պիտի տեսնենք:

Պ. Աւետարանչի այդ խօսքերը «ճշմարտութեան միայն մէկ մասն» են, եւ դահացուցիչ ու օգտակար չեն, եւ եթէ ասկից զատ ուրիշ բան ալ չգիտեր, կամ չընդունիր ու չստորկցուներ իւր ունեւորաց, այդ ճշմարտութիւն ասարդիւն կը մնայ իւր եւ այլոց մէջ: Լաւ ըսեր է իւր «Մկրտութիւն» անուն տեսարակին մէջ (երես 85) թէ ճշմարտութեան միայն մէկ մասին մտադիր լինել եւ ուրիշ մասերը բոլորովին զանց ընել չպարտութիւն: Բայց ինք կ'իյնայ յոյսով ուրեք այդ դատապարտութեան տակ, որով զայն կը դատապարտէ: Պ. Աւետարանիչ մտադիր եղեր է ճշմարտութեան խօսքին միայն այն մասին, որ կ'իւնացունէ մեզի թէ խօսքին քարոզութեամբ մարդիկ կը հաւատան, թէ հաւատքը Աստուծոյ խօսքը լսելէն է, բայց աչք կը դոցէ ճշմարտութեան ուրիշ մասերուն դէմ եւ «բոլորովին զանց կ'առնու» զանոնք: Չըկարդար Պ. Աւետարանիչ Պօլոս առաքելոյն այսօրինակ խօսքերն եւս, «Իսկ չնչաւոր մարդը Աստուծոյ Հոգիին բաները չընդունիր, ինչու որ անոնք իրեն յիմարութիւն են, ու չընտրու

քիտմով, ինչու որ հոգեւոր կերպով կը քննուին»: Ա. Կորնթ. Բ. 14: «Ինչու որ մարմնաւոր եղողները մարմինին բաները կը մտածեն, ու հոգեւոր եղողները՝ հոգիին բաները: . . . Բանդի մարմնաւոր խորհուրդը Աստուծոյ դէմ թշնամութիւն է, ինչու որ Աստուծոյ օրէնքին չհնազանդիր, մասամբ չը կրնար ալ»: Հռովմ. Ը. 5-7: «Ու իմ խօսքս եւ քարոզութիւնս չէ թէ մարդկայն խնայութեան համոզիչ խօսքերով էր, հապա Հոգւոյն և զբոսութեան ազատացումներով: Որպէս զի յեր հասարակ մարդոց խնայութեանովը չըլլայ, հոգա Աստուծոյ զբոսութեանովը»: Ա. Կորնթ. Բ. 4, 5) «Որ մեր աւետարանը չէ՝ թէ միակ խօսքով եղաւ ձեզի, հապա զբոսութեանով ալ եւ Հոգւոյն Մէքով, ու շատ ազդուութիւնով»: Ա. Թես. Ա. 5:

Աւետարանի քարոզիչը որչափ կուզեն՝ թող խօսին խօսքը, որչափ պերճախօսութեամբ որ կարող են՝ թող բացատրեն զայն ու փաստաբանութեանց եւ ձեռնարկութեանց դիմեն զայն հասկցունելու համար, բնաւ մուտ պիտի չգտնեն իրենց խօսած այն մեծ ճշմարտութիւնք մեղաւորաց մտաց եւ սրտին մէջ, նոցա համար յիմարութիւն են անոնք, անհամ ու աննշանակ խօսքեր եւ անպէտ բաժաղանք, ոչ կրնան հասկնալ զանոնք եւ ոչ կրնան ընդունել եւ ոչ ալ հաւատալ անոնց: Ինչպէս կը վկայեն այս վերոյիշեալ բնարանք: Ճշմարտութիւնք այնպէս է մարմնաւոր մարդուն՝ ինչպէս մարդարիտը խոզերուն: Եւ ուր է Պ. Աւետարանչի ակնկալած լուսաւորութիւնք, տեսողութիւնք, հաւատքն ու հնազանդութիւնք՝ այսպիսի չնչաւոր եւ միայն մարմ-

նաւոր խորհրդովք տողորեալ մարդկանց վրայ կամ մէջ: Սուրբ Գրոց ճշմարտութիւնք յայնժամ հասկանալի կ'ըլլան մարդոց, եւ ընդունելութիւն կը գտնեն անոնցմէ, երբ Տէրը ինք իւր Հոգիովք անոնց արտերը բանայ, ինչպէս Լիւդիային, «Որուն սիրտը Տէրը բացաւ Պողոսի ըսածներուն ուշադրութիւն ընելու», որով հաւատաց եւ «մկրտուեցաւ ինքը եւ իր տունը»: Գործ. Ժ. 2. 14, 15:

Պ. Աւետարանիչ ինչ կ'ըսէ թող ըսէ, մենք զգուշանալով որ չըլլայ թէ ճշմարտութեան միայն մէկ մասին մտադիր լինելով անոր ուրիշ մասերը զանց առնուիք, այս նիւթոյս վրայ Սուրբ Գրոց սորվեցուցածը, որչափ որ կարելի էր ընդարձակ տեսութեամբ ուսումնասիրելով այս գտած ենք լինել ճշմարտութիւնը. Սատուծոյ խօսքին քարոզութիւնը լսելով կամ կարդալով զայն՝ մեղաւորը հաւատքի կրնայ դալ, ըստ բանին թէ «Հաւատքը լսելն է եւ լսելը Սատուծոյ խօսքէն», պայմանաւ որ այդ լսելուն եւ կարդալուն հետ միասին Սատուծոյ Հոգին ընկերանայ, եւ այն ճշմարտութեան Հոգին, որոյ ներշնչութեամբ գրուած են Սուրբ մատեանք, նոյն Հոգին օգնէ մեղաւորին իւր խօսքերը մեկնելու եւ պարզաբանելու, անոնց մտքերն լուսաւորելու, բանալու, որպէս զի հասկնան զանոնք, եւ ընդունին, ու գործադրեն ալ, եւ միով բանիւ՝ հաւատան կենդանի եւ ճշմարիտ հաւատով: Եւ թէ՛ բուն խի հաւատքը Հոգւոյն Սրբոյ պարգեւն է, ինչպէս վերը արդէն յառաջ բերինք (Ա. կորնթ. Ժ. Բ. Գ.)... «Միւսին հաւատք (տրուած է) նոյն Հոգիովը»: Ո՛ր կը մնայ Պ. Աւետարանչի ը-

սածը, թէ Հոգւոյն Սրբոյ պարգեւը միայն անոնց խոստացուած է, որ հաւատալով եւ աւալխարելով կը մկրտուին», եւ այլն: Ուր ընդհակառակն՝ Սուրբ Գիրք հաւատքը Հոգւոյն տուրքը լինել կը ցուցնէ այս բնարանիս մէջ: Գարձեալ տանք ուշադրութիւննիս սա վճռական ոճով գրուցուած բնարանին ալ, «Ամեն բարի տուրք ու ամեն կատարեալ պարգեւ վերէն է, եւ Լուսոյ Հօրմէն կ'իջնէ» Յակ. Ա. 17:

Բայց որչափ որ մեր հաւատքը Հոգւոյն Սրբոյ պարգեւն է, դարձեալ Հոգւոյն Սրբոյ նորանոր պարգեւներն եւ կամ անոնց զարգացումը ընդունելու համար հաւատքով աղօթել հարկ է: Այնպէս որ Սուրբ Գրոց ուսուցածին նայելով մէկ մտքով մի հաւատքը Սուրբ Հոգիէն կ'ընդունինք եւ Սուրբ Հոգին ալ դարձեալ հաւատքով եւ աղօթիւք: Կերպով մը մէկը միւսին թէ՛ արդիւնքն է թէ՛ պատճառ: Սուրբ Հոգին ընդունելիս՝ հաւատքին արդիւնքն է եւ պատճառ, եւ հաւատքն ալ, փոխադարձաբար, ընդունելիս՝ Սուրբ Հոգւոյն արդիւնքն է ի մեզ, եւ պատճառ միանգամայն զայն ընդունելուս: Սակայն ի սկզբան որը կ'ունենանք, որն է սկիզբը կամ սկսանողը իւր գործողութեան ի մեզ: Սուրբ Գրոց այս մասին ըրած յայտնութեանն կը թուի թէ Սուրբ Հոգին է որ նախապէս կը ներգործէ մեր մէջ, մեզ կ'արթնցունէ, մեր մէջ բարի բաներու սէր կ'ազդէ, մեզի բարի թելադրութիւնք կ'ընէ: Բայց մեր մէջ բարի գործը Սուրբ Հոգին պիտի սկսի ըսելով, անուշտ ասկէ պէտք չէ հետեւցունել թէ՛ բնաւ

հարկ չէ աշխատիլ, եւ պարտիմք անգործ նստիլ եւ սպասել որ Հոգին նախ ինք զայ սկսի իւր գործը մեր մէջ, եւ այնուհետեւ մենք ալ սկսինք: Ո՛չ բնաւ: Ինչպէս որ կը վարուինք մեր երկրաւոր վիճակաց նմանօրինակ առնչութեանց մէջ ընդ Աստուծոյ, բնական եւ վայելուչ է որ անկէ չզարտուղինք երբ հոգեւոր առնչութեան մէջ կ'ըլլանք Անոր հետ: Ինչպէս որ կը հաւատանք թէ մեր երկրաւոր վիճակաց մէջ Աստուած կը յաջողէ մեր բոլոր գործերն ու ձեռնարկները, նա կը պարզեւէ մեր բոլոր վայելքներն ու բարիքները, Աստուած կը պարզեւէ մեզի հունձք՝ հնձոց ժամանակ, բայց ձեռքերնիս իրարու վրայ դրած չենք նստիր, կամ ուրիշ պարտալ եւ այդ վախճանին չհասցունող կամ աննպաստ բաներով զբաղիր եւ սպասեր որ Աստուած տայ մեզի իր բարիքները եւ յաջողէ մեր գործերը, այլ եթէ երկրագործ ենք, երկիրը կը պատրաստենք ժամանակին, կը վարենք, կը հերկենք զայն, կը սերմանենք. կը պահպանենք արթուն հսկողութեամբ, որ վտանգներէ ու վնասուելէ դէրձ լինի, կը հնձենք, կ'ամբարենք, եւ այլն: Եւ ո՞վ յիմարի տեղ չի գներ այնպիսի մէկը՝ որ կը յուսայ եւ կ'սպասէ ունենալ հունձք՝ բայց չաշխատիր եւ այդ վախճանին հասցունող միջոցները չգործածեր: Ծիչդ այսպէս վարուիլ պէտք է հոգեւորին մէջ ալ: Թէեւ «Աստուած է որ մեր մէջ կը ներգործէ կամենան ու ընելը իր հաճութեանը համար», այսու ամենայնիւ Սուրբ Գիրք կը պատուիրեն մեզի ըսելով. «Ահովու գողով անձերնուդ փրկութիւնը գործեցէք»: Փիլ. Բ. 12, 13, Եւ

այնպէս գործել՝ որ իւր թէ այդ գործին սկիզբը մենք պիտի լինի, թէպէտ նոյն ժամանակը համոզուած ալ լինել պարտիմք թէ առանց օգնութեան Հոգւոյն Աստուծոյ բարի գործ մը ո՛չ կրնանք խելք ընել մենք մեզն, ո՛չ կրնանք սկսիլ, եւ ո՛չ ալ շարունակել զայն եւ յարդիւնս ածել:

Հաւատքը, այն բարի գործը չկրնար նախապէս ծնունդ ու ծագում առնուլ մեր մէջ, որ չ՞որ ենք իրեն: Եւ այսպէս համարելով, եւ նկատելով այս խնդիր՝ վառքն Աստուծոյ տուած կ'ըլլանք, որ է աղբիւր ամենայն բարեաց: Պօղոս առաքեալին վկայութիւնն ալ կը քաջալերէ զմեզ այս դաղափարը տածելու մեր մէջ, որ կ'ըսէ, «Քանզի գիտեմ որ իմ ներսիդիս՝ այսինքն իմ մարմնիս մէջ մէկ բարի բան մը չբնակիր»: Հռովմ. Է. 18: Եթէ մեր մէջ բարի բան մը չբնակիր, ի՞նչպէս հնար է մենք մեզն գոհացունել զայն:

Բայց եկու տես որ Պ. Աւետարանիչ կը քարոզէ թէ ապօրինաւոր եւ ապարդիւն է Հոգւոյն Սրբոյ համար աղօթք ընել, ո՛չ մկրտելոց համար՝ եւ ո՛չ չմկրտելոց եւ անզեղ մեղաւորաց համար: Մկրտելոց համար (հասկցիր չափահաս մկրտելոց) անպատեհ է, կը հաստատէ նա, աղօթել Սուրբ Հոգին խնդրելու նպատակաւ, զի կը համարի թէ անոնք արդէն ընդունած են զՀոգին Սուրբ, ըստ որում վերստին ծնեալք: Իսկ չմկրտուածներուն կամ անզեղ մեղաւորաց համար՝ նոյնպէս անպատեհ է կ'ըսէ, զի նոքա անյարմար են ընդունարան լինել Անոր: Բայց մկրտեալք եւ կամ անզեղ մեղաւորք երբ յարմար պիտի լինին Հոգւոյն Սրբոյ

բնակարան լինելու: Ինքնիրեննուն: Լոկ խօսքը կարգալով կամ լսելով: Թէ սոսկ ատոնցմով այդ յարմարութիւնը յառաջ չկրնար գալ՝ յուսամ կարող եղանք ցուցնել Սուրբ Գրոց խօսքերու վկայութեամբ: Հոգին ինք պիտի գայ նախ՝ եւ գանոնք շարժէ, դրդէ, արթնցունէ այլ եւ այլ միջոցներու ձեւամբ, որոյ ձեռքին մէջ անթիւ ու բազմազան են այս միջոցք: Այո՛, Հոգին պիտի գայ ու թախանձէ գմեղաւորն իւր հրաւերն ընդունելու: «Ահա ես դուռը կայներ եմ ու կը դարնեմ, թէ որ մէկը իմ ձայնս լսէ, ու դուռը բանայ, անոր քովը պիտի մտնեմ, եւ անոր հետ ընթրիք պիտի ընեմ, մնալ իմ հետ»»: Յայտ. Գ. 20: Մեղաւորին դուռը միշտ այսպէս կը դարնէ Աստուծոյ Հոգին, միշտ կ'այցելէ անոր, ո՛վ որ կ'ըլլայ՝ ըլլայ, բայց ինչ կերպով. — Իւր նախախնամական անօրինութեամբ անոր վիճակը այս ինչ կամ այն ինչ հաճոյական կամ անհաճոյ այլ եւ այլ դրից սակ դնելով, հարստացունելով զայն կամ աղքատացունելով, հիւանդացունելով կամ ապաքինութիւն պարգեւելով, յաջողութիւն կամ ձախողութիւն տալով, սարսափ ազդելով նորա մէջ կամ արիւթիւն ներշնչելով ի նմա, վշտացունելով եւ սգոյ ենթարկելով զայն եւ կամ ուրախութիւն աւետեօք նորա մտաց զուարթութիւն եւ սրաին բերկրութիւն եւ ցնծում առթելով, եւ այլն, եւ այլն:

Յուսամք, արդէն բաւական կարող եղանք ցուցնել թէ Սուրբ Հոգին ընդունելու միջոցը ո՛չ թէ նախ հաւատքն ու մկրտութիւնն են, այլ նախապէս՝ Սուրբ Հոգւոյն պարգեւն է հաւատքը: Սուրբ

Հոգին իւր անդունւ շարժմամբ կը դպչի մարդոյս հոգւոյն եւ անոր մէջ համոզում եւ հաւատք կը ծնուցանէ, եւ գմարդ կը պատրաստէ որ համարձակութեամբ դաւանի զԲրիստոս, եւ եթէ մկրտուելու պէտք ունի, մկրտուի՝ ալ հրապարակաւ, ի նշան դաւանութեան իւրոյ, եւ հետզհետէ առ Աստուած աղօթելով վասն Հոգւոյն Սրբոյ, ընդունի՝ Անոր այլազան պարգեւները, եւ արդէն ունեցածներն ալ զօրանան, զարգանան, մինչեւ որ կատարելութեան հասնին, ըստ խոստմանն, «Այս մասին վստահ ըլլալով թէ ան որ ձեր մէջը բարի գործ մը սկսեց, մինչեւ Յիսուս Բրիստոսի օրը պիտի կատարէ»: Փիլ. Ա. 6:

Այսպիսորութիւնը նախընթաց է ի մարդ թէ Հոգւոյն Սրբոյ պարգեւը, կամ Հոգւոյն Սրբոյ ներգործութիւնը: Հոգւոյն Սրբոյ ներգործութեամբ կ'ապաշխարէ մարդս թէ ապաշխարութեամբ: Հոգին կ'ընդունի նա: Այսպիսի հարցմանց ալ պատասխանը վերինին նման կրնայ տրուիլ անտարակոյս: Սուրբ Գրոց ուսուցածին նայելով յայտ եւս Հոգին Սուրբ կը կանխէ, այսինքն առաջ նա կը գործէ ի մարդ: Ճշմարիտ ապաշխարութիւն չկրնար մարդէն՝ իրմէն սպասուիլ: Իսկապէս իւր մեղքը ճանչնալ, անկէ զզուիլ, անկէ հրաժարիլ՝ յայնմի է թէ մարդոյս իւր գործը չէ՛: Այս մեղանշական, մեղաստէր, եւ բնութեամբ ապականեալ եւ վերին իմաստութենէ զուրկ մարդը հնար չէ՛ որ իր գործութեամբ սկսի կամ մինչեւ իսկ խելք ընէ սկսիլ ապաշխարութեան այն մեծ գործը: Իրաւ, խօսքին քարոզութիւնը մեծ միջոց մ'է գմարդ ա-

պաշխարութեան առաջնորդելու, բայց խօսքը հասկընալը եւ անով համոզուելը, եւ ապաշխարելու ձեռնարկելը Աստուծոյ Հոգւոյն զօրութեամբն է միայն, ինչպէս բաւական ջանացինք բացատրել ի վեր անդր Սուրբ Գրոց այլեւայլ բնաբանից վխալութեամբք: Եսեւ Աստուծոյ քաղցրութիւնը զմարդ ապաշխարութեան կ'առաջնորդէ, զոր կը ցուցնէ Աստուած՝ մարդոյս բարիքներ շնորհելով, կեանք, առողջութիւն, կերակուր եւ բնակիլ, բնակարան, զգեստ, բարեկամք, պաշտպանք, ծրնողք, գաւակունք եւ մերձաւորք սրբաբեւելով, հիւանդութիւններէ բժշկելով կամ ազատ կացուցանելով, այլեւայլ չարիքներէ եւ վաանգներէ զերծ պահելով զնա, նաեւ համբերելով կամ ազատ կացուցանու երկայնամիտ լինելով մարդկային սխալանացն եւ չարատուհասելով անոր ասպտամբութեանցն համար եւ մեղքը երեսը չտալով: Բայց Աստուծոյ այս «անչափ քաղցրութիւնը» շնորհործեր եւ այս բոլոր ողորմութիւնք խաղառ ապարդիւն պիտի մնան, եթէ Աստուծոյ Հոգին ինքն եւս չընկերանայ անոնց հետ: Միայն Հոգին է որ կ'արդիւնաւորէ միջոցները մարդոյս վրայ եւ մէջ: Այս ճշմարտութիւն մ'է ի Սուրբ Գիրս յայտնեալ: Լաւ կարգանք նոյն ինքն Յիսուս Քրիստոսի խօսքը, որ կ'ըսէ միւլթարիչ Հոգւոյն Սրբոյ համար. «Երբոր գայ՝ աշխարհը պիտի յանդիմանէ՝ մեղքի համար, եւ արդարութեան համար ու դատաստանի համար: Մեղքի՝ համար՝ որ ինքի զէն հատարար, Արդարութեան համար՝ որ ես իմ Հօրս քով կ'երթամ, եւ սլ զիս չէք տեսներ, եւ դատաստանի համար՝ որ աս աշխարհիս իշխանը

դատապարտուած է»: Յովհ. ԺԶ. 8—11: Ասոր հետ կարգանք նաեւ ինչ որ քիչ մը առաջ յիշեցինք. «Անա՛ ես դուրս կոչուի եմ, ու կը դուրս եմ, (կ'ըսէ Աստուծոյ Հոգին,) թէ որ մէկը իմ ձայնս լսէ, ու դուրս բանայ, անոր քովը պիտի մտնեմ, եւ անոր հետ ընթրիք պիտի ընեմ, ան ալ իմ հետս»: Յայս. Գ. 20: Եւ Սուրբ Գրոց ամենայն ուրեք այս նըկատմամբ քրած յայտնութիւնքը միեւնոյն խմանն ունին իրենց մէջ, թէ այսպիսի մեծ գործերը Աստուծոյ Հոգւոյն են անկ: «Չօրութեամբ չէ՛, եւ ուժով չէ՛, հապա իմ Հոգիով» կ'ըսէ զօրաց Տէրը»: Զաք. Գ. 6, եւ այլն: Այս, մարդս ինքնիրեն եւ սոսկ իւր զօրութեամբ բնաւ կարող չէ՛ հաւատալ եւ ո՛ր եւ իցէ ապաշխարութեան արժանաւոր պրտուղներ բերել, Աստուծոյ հաճոյական գործքեր կատարել: Զայս պարզապէս կը սորվեցունեն Սուրբ Գիրք: «Իժերո՛ւ ծնունդներ», ըսաւ Քրիստոս իւր խօսքը ուղղելով իւր շուրջն եղող դպրաց եւ միաբնակաց, «Ի՞նչպէս կ'ըստ Բարե խօսել որ դու եմ... չար մարդը իր սրբին չար գանկէն չար բռներ կը հանէ»: Մատթ. ԺԲ. 54, 55: Բայց Պ. Աւետարանիչ կը ճգնի հաստատել թէ մարդս ինքնին կարող է սուրբ գործեր կատարել առանց օգնականութեանն Աստուծոյ, այնպէս որ ինք բուն իւր գոյացուցած կամ ինքիրմէ ստացած հաւատքովն ու ապաշխարութեամբն՝ յարմար լինի մկրտուելու եւ Հոգւոյն Սրբոյ պարգեւներն ընդունի: Բայց յայտնի է որ այդպիսուն հաւատքը (եթէ հաւատք կոչել արժանի է) տարբեր կամ լաւագոյն չիրնար լինել Միմոն մեզին հաւատքէն (Գործ. Բ. 15—24:) եւ ա-

պաշխարութիւնն ալ ո՛չ նուազ յոտեգոյն քան Սա-
 ուղիներ կամ մատնիչ Յուդային, եւ նոյն ինքն Սի-
 մոն մոգինը: (Ս. Թագ. ԺԵ. 24—30: Մատթ. ԻԷ.
 5—5: Գործ. Ը. 24:) Սուրբ Գրոց յայտնեալ վար-
 դապետութեանց յենով կրնանք համարձակիլ ըսել
 թէ Պ. Աւետարանչի այդօրինակ գաղափարք կամ
 վարդապետութիւնք որ հաւատոյ եւ ապաշխարու-
 թեան պէս մեծ փոփոխութեանց ծագումն ու ծը-
 նունդն ի մարդ նոյն իսկ մարդկային զօրութեան
 եւ կարողութեան կ'ընծայէ, Սուրբ Գրոց ոգւոյն
 եւ ուղիղ բանի հակառակ ամենէն արտառոց ար-
 տայայտութիւններէն մին է: «Սակայն Աստուած
 ճշմարիտ թող ըլլայ, եւ բոլոր մարդիկ՝ սուտ»:
 Հռովմ. Գ. 4: Եթէ մարդ ինքնին կարողութիւն
 ունի հաւատալու եւ ապաշխարելու, ինչո՞ւ հա-
 մար կարող չըլլայ ինքնին բարի գործեր եւ Հոգ-
 ւոյն Սրբոյ պարգեւներն ու պտուղներն եւս ցուց-
 նելու եւ կատարելու:

Յիշեցինք քիչ մը առաջ Պ. Աւետարանչի մէկ քա-
 ռոզածն ու գաղափարն եւս, որ ո՛չ միայն ապօրի-
 նաւոր կը համարի չմիրտուած կամ անզեղ մեղա-
 ւորաց համար Սուրբ Հոգին խնդրելն Աստուծմէ
 աղօթքով, կամ Հոգւոյն Սրբոյ համար աղօթել վասն
 աշխարհի, այլ նաեւ անպէտ եւ ապօրինաւոր լինել
 կը վճռէ բուն իսկ մկրտեալներուն համար ալ Սուրբ
 Հոգին խնդրելն: Ինչու որ ըստ իւր գաղափարին
 վերստին ծնեալ են նոքա, եւ հետեւապէս՝ Հոգին
 Սուրբն ալ ընդունած են արդէն, իբրեւ թէ ինչ
 պէտք կամ վայելչութիւն կայ, որ խնդրեն զայն՝
 զոր ունին արդէն:

Ասոր դէմ եւս մի քանի խօսք ունինք ընելիք,
 զի յայտնապէս անհամաձայն է Սուրբ Գրոց յայտ-
 նութեան եւ ուղիղ բանի:

1. Մարդիկ, որ միանգամ ընդունած լինին զՀո-
 գին Սուրբ, այլ եւս պէտք չունին Անոր պարգե-
 ւացն: Եթէ պէտք չկենար անոր՝ յետ միանգամ ըն-
 դունելոյ զայն, ինչպէս կ'ըսէ Պ. Աւետարանիչ,
 ինչո՞ւ համար ուրեմն, առաքեալք, որ Պէնտէկոս-
 տէին օրը եւ անկէջ ալ առաջ զՀոգին Սուրբ ըն-
 դունած էին, կրկին եւ կրկին ընդունեցին զայն
 դարձեալ այնուհետեւ, եւ աղօթք ալ ըրին զայն
 ընդունելու համար: Կարդա՛ սա ընաբանները, եւ
 տես որ միանգամ զՀոգին Սուրբ առնողները երբ
 եւ ինչ պարագայից մէջ առին դարձեալ:

Յովհ. Ի. 22: Բոլոր առաքեալք առին փշմաբ է Գրե-
 ոսէ:

Գործ. Բ. 4: Պէնտէկոստէին օրը դարձեալ քո-
 լոց առաքեալք:

Գործ. Դ. 8: Պետրոս եւ Յովնանէս դարձեալ, մինչ
 ատեանին առջեւը հարցաքննութեան համար կայ-
 նած էին կաղ մարդուն բժշկուելուն առթիւ:

Գործ. Դ. 31: Դարձեալ քոլոց առաքեալք, երբ
 Պետրոս եւ Յովնանէս ատեանէն արձակուեցան
 ու իրենցներուն դալով աղօթք կ'ընէին առաքեալք
 միասին:

Գործ. Թ. 17: Սուրբ իւր միրտուելու ժամանակ-
 ները:

Գործ. ԺԳ. 9: Սուրբ դարձեալ Եղիմաս մոզը
 յանդիմանել չսկսած:

Այս օրինակներուն մէջ ահա յայտնապէս կ'երեւի,

որ Սուրբ Գիրք կը պատմէ թէ բոլոր առաքեալք զՀոգին Սուրբ երեք անգամ ընդունեցին, թէ Պետրոս ընդունեց չորս անգամ, Յովհաննէս՝ երեք անգամ, Սօղոս՝ երկու անգամ: Եւ ասոնք Սուրբ Գրոց մէջ յանուանէ յիշուածներն են, եւ ո՞վ զիտէ առաքեալք եւ այլք քանի՛ քանի՛ անգամ ընդունեցին զՀոգին Սուրբ, բայց գրուած չէ: (Յովհ. Ի. 50, 51): Ինչու որ Սուրբ Գրոց նպատակն այն չէ որ լսի դէպքեր պատմէ, եւ ինչ որ անոր մէջ պատմուած է, բայտ պատահման է կրնանք ըսել:

Թող լաւ քննէ Պ. Աւետարանիչ այս պատմութիւնքն եւ Սուրբ Գրոց տուած վկայութիւնն եւ տեսնէ թէ իրաւունք ունի՞ ըսել թէ Այն որ միանգամ մկրտուած ու Հոգին առած է, ո՞վ պէտք չունի՞ վերստին զայն առնուլ, եւ կամ զայն խնդրել օրինաւոր չէ, եւ այլ այսպիսի խօսքեր:

2. Իւր վերստին մկրտածները ամենն ալ Հոգին առած են: Գիտենք որ եթէ համարձակի՛ ոմանց համար վկայել թէ առած են, ամենուն համար չենք կարծեր որ այդ վկայութիւնը տայ: «Ինչու որ ծառը իր պտուղէն կը ճանչցուի»: Եւ այն անձինք որ նորոգուած չեն դեռ, միթէ պէտք չունին իրենց համար աղօթք մատուցուելու, որոց արուի Հոգւոյն Սրբոյ պարգեւը, որ ապաշխարութեան յորդորէ զանոնք յանդիմանելով իրենց մեղացն համար (Յովհ. ԺԶ. 8: եւ):

3. Առաքեալք աղօթք ըրին Հոգւոյն համար, որ համարձակութիւն ստանան Աստուծոյ խօսքը խօսելու. եւ այլն: «Ու երբոր անոնք աղօթք ըրին, չարժեցաւ ան տեղը՝ ուր որ ժողովուած էին,

եւ ամենքը Հոգւով Սրբով լեցուեցան, ու Աստուծոյ խօսքը համարձակ կը խօսէին»: Գործ. Գ. 51: Եւ ինչպէս որ իրենց համար խնդրեցին Հոգին Սուրբը, խնդրեցին կամ մաղթեցին այլոց Քրիստոնէից համար ալ: Պօղոս այսպէս կը մաղթէ Հոգւոյն Սրբոյ հաւատացելոց վրայ զալուն համար, առ Կոր. Բ. թղթոյն վախճանը. «Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը, եւ Աստուծոյ սէրը, ու Հոգւոյն Սրբոյ հաղորդութիւնը ձեր ամենուն հետը [ըլլայ]. ամէն: » Բ. Կոր. ԺԳ. 13:

Պօղոս դարձեալ Եփեսացւոց եկեղեցւոյն համար կը խնդրէ Հոգին իւր աղօթից մէջ, թէ եւ անոնք արդէն Հոգւոյն պտուղները կը ցուցնէին իրենց ունեցած հաւատքովը, սիրովը, եւ այլն, ըսելով.

«Ուստի ես ալ երբոր լսեցի Տէր Յիսուսին վրայ ունեցած հաւատքնիդ, ու բոլոր սուրբերուն վրայ [ձեր սնեցած] սէրը, չեմ՝ դադարի ձեզի համար գոհութիւն ընելէն՝ ձեզ իմ աղօթքներուս մէջ յիշելով, որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Աստուածը՝ փառաց Հայրը, տայ ձեզի իմաստութեան ու յայտնութեան հոգին իր գիտութիւնովը, որպէս զի արտերնուդ աչքերը լուսաւորուելով՝ զիմանաք թէ ինչ է անոր [ձեզ] կանչելուն յոյսը, ու ինչ է անոր ժառանգութեանը փառքին ճոխութիւնը սուրբերուն մէջ, եւ ինչ է իր զօրութեանը գերազանց մեծութիւնը հաւատացեալներուս մէջ՝ իր կարող զօրութեանը գործադրութեամբ: . . . » Եփես. Ա. 15-19:

Տես Պօղոս առաքեալ ինչպէս կը վարուի այսպիսի պարագայից մէջ: Կը վկայէ Եփեսացւոց եկեղեցւոյն համար թէ անոնք հաւատք եւ սէր ու-

նին. վասն որոյ անոնց համար գոհութիւն մատուցանելէն չէր դադարեր, եւ բաց աստի՛ զանոնք կը յիշէր իւր աղօթից մէջ եւ կը խնդրէր Աստուծմէ որ խնատութեան եւ յայտնութեան Հոգին տայ անոնց, թէ եւ նորա արդէն Սուրբ Հոգւոյն պարգեւներն ու պտուղներն, հաւատք եւ սէր կը ցուցնէին իրենց վրայ:

4. Յատուկ պատուէր եւ խրախոյժ կոյ ամեն մարդու, թէ՛ մկրտելոց, թէ՛ դեռ չմկրտուածներուն եւ անպիղջ մեղաւորաց ալ անխտիր, որ խնդրեն Աստուծոյ շնորհքները եւ Անոր Սուրբ Հոգին: Կարգանք Դուկ. ԺԱ. 9—15: Տեսնենք, ինչ կըսէ Յիսուս: «Ես ալ կ'ըսեմ ձեզի. խնդրեցէք եւ պիտի տրուի ձեզի, փնտռեցէք եւ պիտի գտնէք, [բռնուք] զարկէք՝ եւ պիտի բացուի ձեզի, վասն զի ո՛վ որ կը խնդրէ՝ կ'առնէ, եւ ո՛վ որ կը փնտռէ՝ կը գտնէ, եւ ո՛վ որ [բռնուք] կը զարնէ՝ պիտի բացուի անոր: Չեզմէ ո՛վ է ան հայրը՝ որմէն իր որդին հաց որ ուզէ, միթէ քան պիտի տայ անոր, կամ թէ որ ձուկ [բռնուք], միթէ ձուկին տեղը ո՞՞՞՞՞ պիտի տայ անոր: Ուստի եթէ դուք որ չար էք, ձեր զաւակներուն աղէկ ընծաներ տալ զիտէք, որչափ աւելի ձեր Հայրը երկինքէն Սուրբ Հոգին պիտի տայ անոնց որ իրմէ կը խնդրեն»:

5. Աղօթք ընելն ու Աստուծմէ շնորհք խնդրելն մեծաւ մասամբ Սուրբ Հոգին խնդրել է: Հոգին Սուրբ եւ անոր պատուէրներն ըսելով Անոր հրաշագործութեան կամ լեզուախօսութեան, եւ այլն, պարգեւներն ըսել չուզուիր անշուշտ, զի այս պար-

գեւք մեր օրերը չեն ստացուիր, այլ Առաքելական դարուն կամ նախնական եկեղեցւոյն յատուկ էր այն, բայց Հոգւոյն ուրիշ խիստ բազմաթիւ եւ ցանկալի պարգեւները կան, զորս կրնան ստանալ մարդիկ հիմա:

Հոս յարմար կը համարիմ գնել Հոգւոյն Սրբոյ պարգեւներուն մէկ ցանկը ճիշտ ընդօրինակեալ Սուրբ Գրքէն:

«Ուստի ձեզի կ'իմացունեմ, թէ մէկը չըլլար որ Աստուծոյ Հոգիովը խօսի ու Յիսուսը նշովեալ կանչէ, եւ մէկն ալ չկրնար Յիսուսը Տէր կանչել, եթէ ոչ՝ Հոգւով Սրբով: Եւ, պարգեւները զանազան են, բայց նոյն Հոգին է: Նաեւ պաշտօնները զանազան են, բայց նոյն Տէրն է: Նոյնպէս ներգործութիւնները զանազան են, բայց նոյն Աստուածն է՝ որ կը ներգործէ ամենը ամեն բանի մէջ: Բայց ամեն մէկուն Հոգւոյն յայտնութիւնը տրուած է՝ օգուտի համար: Մէկու մը՝ Հոգիով իմաստութեան խօսք տրուած է, ուրիշին՝ զիտութեան խօսք, նոյն Հոգիին [բռնուք] շահովը, միւսին հաւատք՝ նոյն Հոգիովը, ուրիշին՝ բժշկութեան պարգեւներ՝ նոյն Հոգիովը. ուրիշին՝ հրաշագործութիւններ, ուրիշին՝ մարգարէութիւն, ուրիշին՝ հոգւոց ընտրութիւն, ուրիշին զանազան լեզուներ, ուրիշին լեզուներու թարգմանութիւն: Բայց ամենը միեւնոյն Հոգին կը ներգործէ, եւ ամեն մէկուն զատ զատ կը բաժնէ՝ ինչպէս որ կ'ուզէ»: Ա. Կոր. ԺԲ. 3—11: «Բայց Հոգիին պտուղը աս է. սէր, խնդութիւն, խաղաղութիւն, երկայնմտութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատարմութիւն,

հեղութիւն, ժուժկալուժիւն»:

Այս երկու բնաբանից մէջ եղած պարզեւք Սուրբ Հոգւոյնն են, մարդս չիրնար ինքնիրմէն ունենալ զանոնք, անոնք Սուրբ Հոգւոյն յատուկ են: Եթէ մարդոյս կարելի ըլլար ինք իրմէն ստանալ զանոնք, կամ անկական ըլլար իրեն, յատուկ իրրեւ Հոգւոյն Սրբոյ պարզեւք կամ պտուղք պիտի չներկայացուէին:

Առջի յիշուած կարգը գրեթէ բոլորովին հրաշալեաց ցանկ մը կը ներկայէ մեզ. որ այժմ չենք կրնար սպասել որ ստանանք զանոնք: Բայց երրորդ կարգը՝ թէեւ նա ալ գերբնական յասկութիւնք կը պարունակէ, հնար է ստանալ ի ձեռն Հոգւոյն՝ որոյ պտուղքն են: Եթէ առջի յիշուածներուն համար աղօթելու ըլլանք իրրեւ պարզեւք Հոգւոյն Սրբոյ, որ Աստուած շնորհէ մեզի, յայտնի է թէ անհնար է որ պատասխան ընդունինք մեր աղօթից. բայց վերջը յիշուածներուն համար կըրնանք աղօթել, քաջայայտ լինելով որ Աստուած պիտի լսէ ու կատարէ մեր բաղձանքը եթէ ըստ արժանւոյն կը մատուցանենք մեր աղօթքը: Զի նա «աղօթքի լսող» Աստուած է, եւ կը յորդորէ զամենայն մարդիկ անխօր, բոլոր յոգնած ու բեռնաւորուածները, բոլոր ծարուածները, բոլոր ստակ չունեցողները ու բոլոր մեղաւորները առ հասարակ, որ խնդրեն իրմէն, եւ ինք պատրաստ է անոնց պարզեւքներ շնորհել լիովի եւ ճրի, եւ զիրենք հանգչեցունել, կշտացունել, եւ ամեն պէտքերին լցունելով հոգեւորապէս՝ խաղաղութիւն եւ անդորրութիւն պարգեւել նոցա: Աղօթ-

քի պատասխան ընդունելու մասին վերը յիշուած քաջալերիչ բնաբանէն զատ (Դուկ. ԺԱ. 9—13) բազմաթիւ ուրիշներ ալ կան զմեզ խրախուսող, որոյ մի քանին հոս ցուցնենք: Մատթ. ԺԱ. 28: Ես. ԳԵ. 1: Եբբ. Գ. 16: Ա. Յովհ. Ե. 14: ևս:

Եւ ի՞նչ հիման վրայ կը հաստատեն Պ. Աւետարանիչ եւ իւր գաղափարակիցք Սուրբ Հոգւոյն համար աղօթք չընելու այդ նորալուր կանոնը, որ, աւանդ, իրենցմէ ոմանք այնչափ յառաջ դացած են իրենց այդ մոլեգնութեան մէջ, որ կը ժպրհին հայհոյութիւն կոչել Սուրբ Հոգւոյն համար եղած բոլոր աղօթքները:

Թող պատասխանեն սա հարցման, Աստուծոյ Հոգւոյն համար աղօթք ընելը մերժող, ծաղրող եւ դատապարտող այդ անձինք: Եբբ իրենք աղօթք կ'ընեն, ի՞նչ կը խնդրեն Աստուծմէ: Զէ՞ որ ամեն բարի պարգեւներ, վարուց մաքրութիւն, շնորհք, եւ ազգի ազգի առաքինութիւնք՝ որ խնդրեն, ուրիշ բան խնդրել չէ՞ բայց եթէ զՀոգին Սուրբ: Եթէ կը խնդրեն սէր՝ եղբայրսիրութիւն, խաղաղութիւն, հեղութիւն, իշխել կրից, յաղթել սատանայի, լինել ներող, դժած, երկայնամիտ, աղօթասէր, Չերմեռանդ, եւայլն, ասոնք բոլոր միթէ Հոգւոյն Սրբոյ պարգեւները չե՞ն: Եւ չէ՞ որ թէ՛ մեր եւ թէ՛ իրենց ըրած աղօթքները նման եղած կ'ըլլան իրարու, եւ տարբերութիւննին մենէ՛ այն է միայն որ իրենք Հոգւոյն Սրբոյ անուներ չեն տար եղեր:

Թող լսէ խորհին այդ մեր բարեկամք, որ մենք աղօթք ալ չենք կրնար ընել՝ առանց Հոգւոյն օգ-

նութեանն ապաւինելու եւ անոր օժանդակութիւնն հայցելու: Տես ի՞նչ կ'ըսէ Պօղոս առաքեալ. «Անանկ ալ Հոգին օգնութեան կը հասնի մեր տկարութիւններուն, քանզի ինչ քանի համար ազնեւը եւ ըստ արժանայն, չենք գիտեր, բայց ինքը Հոգին բարեխօս կ'ըլլայ մեզի համար անբարբառ հառաչանքներով: Եւ սիրտերը քննողը գիտէ Հոգիին ինչ խորհիլը, քանզի Աստուծոյ [համայնը] համեմատ բարեխօսութիւն կ'ընէ սուրբերուն համար»: Հռովմ. Ը. 26, 27:

Մարդոյս բարոյական եւ հոգեւոր վիճակին համար Հոգին Սուրբ այնպէս է, ինչպէս արեւն ու անձրեւը երկրիս ու անոր մէջ ցանուած սերմանց, բուսոց եւ բերքերուն համար: Զջմարտութեան, Աստուծոյ խօսքին սերմունք կը սերմանուն մարդոյս մտաց անդաստանին մէջ՝ ընթերցմամբ, մարդոց կամ քարոզչաց եւ Աւետարանչաց ձեռօք, բայց այդ ցանուածն ու սուղուածն ալ աճեցունողը Աստուած է ի ձեռն Հոգւոյն Սրբոյ, ըստ բանից Պօղոսի առաքելոյ, «Ես տնկեցի, Ապօղոսը ջուր տուաւ, բայց Աստուած աճեցուց»: Ուստի ո՛չ տնկողը բան մըն է, եւ ոչ ջուր տուողը, հապա Աստուած՝ որ աճեցուց»: Ա. Կոր. Գ. 6. 7: «Յայտնի ըլլալով որ դուք Քրիստոսի թնւղթն էք մեր սպասաւորութիւնովը, չէ՛ թէ մեւանով գրուած՝ հապա Կնքանի Աստուծոյ Հոգեւորը, չէ՛ թէ քարեղէն տախտակներու վրայ՝ հապա սրտին մարմնեղէն տախտակներուն վրայ»: Բ. Կոր. Գ. 3: Նաեւ այն անձը որ ընդունած է Հոգւոյն Սրբոյ պարգեւը, ատով ինք կատարեալ եղած չ'ըլլար, եւ

անկարօտ նմա, այլ տակաւին պէտք ունի անոր, եւ շարունակ պէտք ունի, ինչպէս որ բնական սերմանեաց համար է բանը: Սերմանիք որ արեւով եւ անձրեւով կը ծլին հողին մէջ, եւ անկից դուրս ելնելով կը սկսին բողբոջիլ եւ ընձիւղ արձակել, արեւուն եւ անձրեւուն ունեցած պէտքերնին դադրած վերջացած չ'ըլլար, այլ տակաւին կարօտ են անձրեւոց հեղման եւ արեգական լուսաւորիչ, Չերմացուցիչ եւ քիմիական ներգործութիւն ունեցող ճառագայթիցը, որպէս զի հետզհետէ աճին, ծաղկին, պտղաբերին, եւ որ պտուղք եւս հասունանան եւ իրենց կատարելութեանը ժամանեն: Ի Հոգւոյն Սրբոյ ծնունդը մարդոյս բնական ծննդեանն ալ կը նմանի: Բաւական չէ՛ մարդոյս ծնանիլ եւ աշխարհ գալ եւ սարիլ սկսիլ Աստուածային զօրութեամբ, պահպանութեամբ եւ խնամօք, այլ անոր ապրելուն եւ աճելուն համար ալ մարմնով, հասակաւ, մտաւոր կարողութեամբք եւ սյլեւայլ հանգամանօք, նոյն այն Աստուածային զօրութեան, պահպանութեան եւ խնամոց պէտք ունի, եւ մեծ եւ անհրաժեշտ կարօտութիւն՝ շարունակ եւ անդուլ, եթէ ոչ՝ չկրնար կատարելութեան հասնիլ: Արդ՝ ի Հոգւոյն Սրբոյ ծննեալք եւս այսպէս են, անոնք դեռ անկատար են իրենց ծնած ժամանակը եւ պէտք ունին զօրանալու եւ հետզհետէ ի կատարելութիւն դիմելու Աստուածային այն նոյն վերածնիչ Հոգւոյն ներգործութեամբք: Եթէ՛ նոյն ինքն Պօղոս երանելի առաքեալն իրեն համար սապէս լինել կը խոստովանի, այլք կրնան անկէ տարբեր բան ըսել. լսենք ի՞նչ կը վկայէ նա: «Որ ո՛չ թէ ես... արդէն կատարեալ եղեր

եմ, հապա ետեւէ ինկած եմ որ բռնեմ [Տրցանալը], որուն համար ալ բռնուեցայ Քրիստոս Յիսուսէն: Եղբայրներ ես չեմ սեպեր որ բռներ եմ.» եւ այլն: Փիլ. Գ. 12, 15: Այո՛ մարդոյս հոգեւոր կեանքը բուսական եւ կենդանական արարածոց կեանքին նմանէ, եւ պէտք ունի Հոգւոյն Սրբոյ անդուլ եւ յարատեւ օգնութեան եւ խնամոցն, վասն որոյ հարկը կը պահանջէ որ շարունակ աղօթք ընէ մարդ, եւ խնդրէ Աստուածային ամենազօր Հոգին՝ որ իջնէ իր սրտին վրայ, եւ կենաց բանին սերմունք որ սերմանուած են իւր մէջ՝ բուսնին ու աճին, եւ որպէս զի զինք աճեցունէ ու զարգացունէ Տէր Յիսուսի շնորհքովն ու զխտութիւնովը: Ինչպէս որ Առաքեալը հրամայական ձեւով կ'ըսէ. «Աճեցէք մեր Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսի շնորհքովը ու զխտութիւնովը...»: Բ. Պետ. Գ. 18:

Պիտի առիթ առնու արդեօք Պ. Աւետարանիչ այս բնաբանէս, պատասխանելու իրեն արդէն յայտնած եւ քարոզած դաղախարին համեմատ, ըսելով. Ահա առաքեալը՝ «աճեցէք» կ'ըսէ, ուրեմն մարդս կարողութիւն ունի՝ եղեր ինքնիրեն աճելու, առանց իրմէ դուրս օգնութեան մը: Բայց որպէս զի առաքեալին ըսած այս խօսքերը սխալ չհասկըցուին, յառաջ կը բերենք հոս նաեւ Պողոսի խօսքերը, սոյն իմաստով, բայց հետը կցեալ մի քանի խօսքերովն հանդերձ, ինչպէս վերին ալ յիշած ենք. «Ահով ու դողով անձերնուդ փրկութիւնը գործեցէք, ինչու որ Աստուած է՝ որ ձեր մէջը կը ներգործէ կամենալն ու ընելը [եւ] հաճութեանը համար»: Փիլ. Բ. 12, 15:

Պ. Աւետարանիչ եթէ լաւ ուշադրութիւն տայ Առաքեալին այս խօսից իմաստին, յուսամ այս ձեւ խօսքերն ի Սուրբ Գիրս, սխալ հասկընալէ ազատ կրնայ լինել, եւ յետս կը կոչէ իւր սա կերպ խօսքերը. «Մտին խորութեամբը նախ անոց (անլեղջ մեղաւորաց) հրեքը լուսաստուելու է, որ տեսնու իրենց վիճակը, եւ հասարակ ու հաշտութիւն խօսքին, որ կարենան տեսնել եւ ճանչուլ զանիկա»... (Մկրտ. Երեւ. 89):

Եթէ իւր սովորութեան պէս ի վերին երեսս նայելու ըլլայ Պ. Աւետարանիչ Սուրբ Գրոց բնաբաններուն եւ ի նոսին գործածուած բառերուն, ինչպէս պիտի մեկնէ սա խօսքը, զոր Աստուած հրամայաբար կը խօսի Եղեկիէլ մարգարէին բերնով. «Ձեր ըրած բոլոր յանցանքները ձեր վրայէն նետեցէք, եւ ձեզի նոր սիրտ ու նոր հոգի ստացէք, քանզի ինչո՞ւ մեռնիք ո՞վ իսրայէլի տունը»: Եղեկ. ԺԼ. 31: Անտարակոյս իւր ծանօթ սկզբամբ բնական է որ պիտի հասկնայ ու հետեցունէ թէ մարդ մը կրնայ իւր գորութեամբը իւր բոլոր յանցանքները իւր վրայէն նետել, եւ իրեն նոր սիրտ ու նոր հոգի ստանալ: Բայց նոքա որ «ճշմարտութեան խօսքին միայն մէկ մասին մտադիր» եղած չեն, «ուրիշ մասերը բոլորովին զանց առած» լինելով, այդպիսի հակառակ Սուրբ Գրոց ոգւոյն եւ յայտնեալ ճշմարտութեանց եզրակացութիւնք եւ հետեւանքներ հանելու վտանգէն զերծ կ'ըլլան, զի բազմաթիւ ուրիշ տեղերէ այդ իմաստին ճիշդ հակառակը կը սորվինք, ու շատ պարզ եւ բացայայտ բառերով ու խօսքերով: Ահա՛ սոյն այս Եղե-

կիէլի մարգարէութեան մէջ Տէր Եհովան միայն իրեն կը սեպհականէ զմարդ մաքրելն ու անոր նոր սիրտ ու նոր հոգի տալը, ըսելով. «Ձեր վրայ մաքուր ջուր պիտի սրակեմ, ու պիտի մաքրուիք, ձեր բոլոր պղծութիւններէն ու ձեր բոլոր կուռքերէն ձեզ պիտի մաքրեմ. եւ ձեզի նոր սիրտ պիտի տամ, ու ձեր ներսիդին նոր հոգի պիտի դնեմ, ու ձեր մարմիններէն քարեղէն սիրտը պիտի հանեմ, ու ձեզի մարմինեղէն սիրտ պիտի տամ. եւ իմ Հոգիս ձեր ներսիդին պիտի դնեմ, ու ձեզի իմ օրէնքներուս մէջ քալել պիտի տամ, ու իմ իրաւունքներս պիտի պահէք եւ ի գործ դնէք» . եւ այլն, Եզեկ. 1,9. 25—27: Եւ թէ մարդ անկարող է իւր սիրտը մաքրելու եւ ազատ ըլլալու մեղաց՝ աղտէն, իւր գորութեամբը սոսկ, լաւ եւ պարզ կ'ուսուցանէ մեզի Սողոմոն իւր Առակաց մէջ Աստուծոյ կողմանէ այսպիսի հարցման մէկ եղանակաւ մը, այդպիսի բան մը անհնարին առ ի մարդկանէ ցուցնելով. «Ո՞վ կրնայ ըսել թէ՛ իմ սիրտս սրբեցի, եւ մեղքէս մաքրուեցայ»: Առակ. 1: 9:

Պ. Աւետարանիչ եւ իւր համախոհք մինչեւ որ շթողուն իրենց այնպիսի միակողմանի հայեցուածով դիտողութիւն ընելը, բնաւ ազատ պիտի չլինին սխալանաց մէջ իյնալէ եւ ողջամիտ վարդապետութեան հակառակ ուսմունքներ յերեւան հանելէ, եւ թիւր ու մոլար սկզբունքներ պաշտպանելէ, որ կրնան փաստակար ու կորուսիչ լինել: Զի «ձուռնանք շեղուի զիս զիս զիս զիս», ծուռ սկզբանց վրայ հիմնեալ գործքեր ծուռ պիտի լինին հարկաւ:

Յայտնեալ ճշմարտութիւնք որ մեւնոյն խնդրոյն հետ վերաբերութիւն ունին, պէտք է զուգընթաց երթան, սրպէս զի հակասութեանց եւ մոլորութեանց մէջ չլինանք: Հոս օրինակ մը յառաջ բերենք: Չարաշար կը սխալինք եթէ մեր մտքն եւ ուշադրութիւնը տանք Աստուծոյ ի տիեզերս ինքնիշխան կառավարութիւնն հաստատող բնաբանից միայն, զանց առնելով դիտովին այն բնաբանները՝ որք կը հաստատեն մարդոյս ազատակամ եւ պատասխանատու էակ մը ըլլալը: Կը սխալինք նաեւ նոյն կերպով, եթէ միայն մարդոյս ազատ կամք եւ ընտրութիւն ունեցող արարած մը լինելն հաստատող բնաբանները մեր ուշադրութեան առարկայ ընենք, բոլորովին անտես առնելով Աստուծոյ միահեծան վարչութիւնն եւ ինքնիշխան տնօրէնութիւնն հաստատող բնաբանքը՝ իւր անշունչ, անբան եւ բանական արարածոց իւրաքանչիւրին այլ եւ այլ վիճակաց նկատմամբ:

Պ. Աւետարանիչ իւր «աղատամիտ» բարեկամին բերանը սա հարցումն եւս կը դնէ. «Պ. Աւետարանիչ, միթէ Սուրբ Գրոց համաձայն չէ՞ այն եկեղեցիներուն աղօթքները որ կ'ըլլան Աստուծոյ Հոգին անդեղ մեղաւորներուն վրայ թափուելուն համար, որ զանոնք ապաշխարութեան առաջնորդէ, եւ անոնց քարացեալ սրտերը փոխելով մարմնեղէն սրտեր շնորհէ անոնց որ փրկուին»:

Որուն այսպէս կը պատասխանէ ինք՝ Պ. Աւետարանիչ:

«Ազատամիտ բարեկամս, երբէք այդպիսի օրինակ կամ պատուէր մը չկայ Սուրբ Գրոց մէջ, ոչ

ալ Աստուած խոստացած է այդպիսի աղօթքներու պատասխան տալու, մանաւանդ որ ուղղակի հակառակ է այն վարդապետութեանը, որ Յիսուս Քրիստոս մեր Տէրը կը սորվեցընէ, քանզի ինքը կ'ըսէ թէ, «Աշխարհս անիկա չիրնար ընդունել, ինչու որ չտեսներ անիկա»: Յովհ. Ժ. 7. 17: (Մկրտ. երէ՛ 58) նաեւ 89 երեսին վրայ Քրիստոսի խօսքը, յառաջ կը բերէ, որ ըսաւ իւր աղօթից մէջ, «Ես անոնց համար կ'աղաչեմ, չէ՛ թէ աշխարհի համար կ'աղաչեմ», Յովհ. Ժ. 9: Եւ ասկից ձեռնարկութիւն մը հանել կը փորձէ ըսելով. «Եթէ Քրիստոս 'աշխարհի համար' չէր աղաչէր Հօրը, ինչո՞ւ համար Քրիստոնեայք աղաչեն, չէ՞ որ իր օրինակին հետեւելով միշտ 'խօսքը' քարոզելու են Քրիստոնեայք, եւ երբ աշխարհ անոնց քարոզութեամբը 'խօսքին' (կամ Քրիստոսի կամ Աստուծոյ, որ նոյն բանը ըսել է, եւ չենք կրնար բաժնել, տես Յովհ. Ա. 1—14), հաւատայ, չէ՞ որ նոյն խոստմունքին եւ օրհնութեանը մասնակից կ'ըլլայ, քանզի նոյն նշանաւոր աղօթքին մէջ Յիսուս կ'ըսէ, «չէ՛ թէ [Քիստոնեայք] անոնց համար կ'աղաչեմ, հապա անոնց խօսքով (ոչ թէ աղօթքովը) բոլոր ինձի հաւատացողներուն համար ալ»:

Յանձն առինք այսչափ բան դարձեալ ընդօրինակել հոս Պ. Աւետարանչի տետրակէն, որպէս զի աւելի պարզ տեսնուի թէ իւր տեսութիւնը Սուրբ Գրոց ճշմարտութեանց վրայ ինչ աստիճանի բան են: Արդէն մեր այս գրութեան մէջ (եր. 76—83,) բաւական խօսուած է թէ Աստուծոյ խօսքին սոսկ քարոզութիւնը մարդոյս մէջ անհատական, հա-

տար է անհատական յառաջ կը բերէ՞ եւ տեսնու ճանկալ կու տայ զԱստուած, թէ քարոզութեան հետ միասին Աստուծոյ Հոգոյն հղբ Գործակցութեան ալ անհրաժեշտ է, որ մարդոյս սրտին «գուռը զարնէ», «միաբը բանայ», «զաշխարհ յանդիմանէ մեղքի համար, արդարութեան համար ու դատատանի համար», պատճառն որ շնչաւոր մարդը Աստուծոյ Հոգիին բաները չընդունիր, ինչու որ անոնք իրեն յիմարութիւն են, ու չիրնար ալ զխնալ, ինչու որ հոգեւոր կերպով կը քննուին», բայց եթէ՛ նոյն ինքն Աստուծոյ Հոգւոյն համոզելովը: Չոր ընթերցողին խորին ուշադրութեանը կը յանձնենք:

Բայց հոս քիչ մը քննենք սա խնդիրը, թէ Քրիստոնեայք աշխարհի համար աղօթք ընելու են թէ ոչ, եւ թէ ուղի՞ է Պ. Աւետարանչի հանած հետեւութիւնը Քրիստոսի աղօթից մէջ ըսած սա խօսքէն. «Ես անոնց (այսինքն հաւատացելոց) համար կ'աղաչեմ, չէ՛ թէ աշխարհի համար կ'աղաչեմ» եւ այն, թէ Քրիստոնեայք պէտք չէ՛ աղաչեն, ըսելով, «Եթէ Քրիստոս 'աշխարհի' համար չէր աղաչէր Հօրը, ինչո՞ւ համար Քրիստոնեայք աղաչեն», եւ այլն:

Գուցէ շատ զօրաւոր ձեռնարկութիւն մը թուի այս այնպիսեաց՝ որը խնդրոյն երեսին միայն կը նային, առանց պարագաները ի հաշիւ առնելու եւ բուն իմաստին խորամուխ լինելու, եւ յուսամ ընթերցողը պարզ պիտի տեսնեն Պ. Աւետարանչի այդ իմաստարանութեան ինչպիսի խարխուլ հիման վրայ հաստատել ճգնիլը:

Նախ՝ Քրիստոսի այդ խօսքին մէջ, «Ես անոնց

համար կ'աղաչեմ, չէ՛ թէ աշխարհի համար կ'աղաչեմ», յայտնի է թէ կը հասկցուի հիմա՝ բառը, ինչպէս որ գիտնական ֆրիստոնեայ հեղինակը կը հասկնան, եւ բաց աստի Պ. Աւետարանի ինքն ալ այսպէս կը ձեռն իւր քիչ մը վարը գրածին մէջ: Իբր թէ կ'ըսէ ֆրիստոն. «Ես՝ հիմա անոնց համար կ'աղաչեմ, չէ՛ թէ աշխարհի համար»: Չի այն միջոցին իւր ուշադրութիւնն միայն իւր աշակերտաց եւ հաւատացելոց վրայ ամբողջած էր, պատճառն որ նոքա բաղում եւ պէս պէս փորձութեանց ենթակայ լինելու վրայ էին, որովք նոցա հաւատքը թուլնալու, վհատելու, գինքն ուրանալու եւ ձգել վատխելու մտաւրուտ վտանգը կար իւր մատնուելովն ու մահուան դատապարտուելովը: Եւ ո՛չ ապաքէն անկողմնակալ ընթերցողն ալ կրնայ դատել թէ այսպէս հասկնալ բանաւոր եւ ուղիւ է, ինչու որ քիչ մը վերջն կը յարէ սա խօսքն եւս, «Բայց չէ՛ թէ միայն անոնց՝ համար կ'աղաչեմ, հապա անոնց խօսքովը բոլոր ինծի հաւատացողներուն համար ալ», եւ այլն: Յովհ. Ժ. 20:

«Անոնց իստիք» բառերուն վրայ շատ կը շեշտէ Պ. Աւետարանիչ, եւ ուղեւորվ չհաւատացողաց կամ անգեղ մեղաւորաց համար աղօթք չընելու իւր սկզբունքը հաստատել, փակագծի մէջ կ'աւելցունէ մեկնարանօրէն «(ո՛չ թէ աղօթքովը)» խօսքը: Բայց որով իրաւամբ եւ վայելչութեամբ կը ներմուծէ Պ. Աւետարանիչ այս խօսքը, հասկցունել ուղեւորվ թէ ֆրիստոն չէ՛ր կամեր որ առաքեալք աղօթք ընէին չհաւատացողաց համար: Ի՞նչ գիտէ Պ. Աւետարանիչ թէ առաքեալք խօսքին քարոզու-

թեանը հետ աղօթք ալ չէին ըներ առ Աստուած, եւ առ Հոգին Սուրբ՝ հեղինակն այն խօսքին, որ իրենց սերմանած կենաց բանին սերմունքը բուսնին եւ պտղարբերն: Միթէ բնական եւ իրաւացի չէ՛ մակարերել յաւէտ թէ առաքեալք իրենց աղօթքները մեծաւ մասամբ այն իւրեանց շուրջը գտնուող խտասիրտ Հրէից եւ յիսար ու կուսալաշտ հեթանոսաց համար կը մատուցանէին առ Հոգին Սուրբ Աստուած. զի իրենց բանը, գործը խօսքը քարոզել էր, որպէս զի իրենց աշխատութիւնքն ի դերեւ չեղնէ եւ արդիւնաւորի, եւ Աստուած անոնց դարձ եւ ապաշխարութիւն շնորհէ իւր Հոգւոյն անոնց մտքերը բանալովն ու անոնց սրտերը շարժելովն: Միթէ Պօղոս առաքեալ որ Աթէնքի մէջ եղած ժամանակը «իւր հոգին անհանգիստ էր ներսիդին, վասն զի քաղաքը բոլորովին կուսալաշտութեան մէջ... կը տեսնէր» (Գործ. Ժ. 16), միթէ հնար էր իրեն՝ խօսքը խօսելուն հետ միասին այն կուսալաշտ հասարակութեան համար աղօթք չընել, որ Աստուծոյ Հոգին այցելութիւն ընէ անոնց եւ յաջողէ իւր աշխատութիւնքն նոցա մէջ:

2. Պ. Աւետարանիչ ըստ իւր սովորութեան, վճռաբար կ'ըսէ թէ «երբէք այդպիսի օրինակ մը կամ պատուէր մը չկայ Սուրբ Գրոց մէջ, ո՛չ ալ Աստուած խոստացած է այդպիսի աղօթքներու պատասխան տալու, մանաւանդ որ ուղղակի հակառակ է այն վարդապետութեանը որ Յիսուս ֆրիստոն մեր Տէրը կը սորվեցընէ, քանզի ինքը կ'ըսէ թէ «Աշխարհ անիկա չկրնար ընդունիլ ինչու որ չը տեսներ անիկա, ու չճանչնար անիկա» (այսինքն

Սուրբ Հոգին)։ Քրիստոսի այս խօսքերը մենք ալ Պ. Աւետարանչի հասկցածին պէս կը հասկնանք, որ աշխարհ իւր ապականեալ եւ տղէտ վիճակին մէջ «չկրնար ընդունիլ դանիկա, ինչու որ չտեսներ դանիկա, ու չճանչնար դանիկա»։ Բայց կը հարցունե՞մ Պ. Աւետարանչի, թէ Աշխարհ կրնայ ընդունիլ «խօսքը»։ Պօղոս առաքեալին վկայութիւնը արդէն յառաջ բերինք թէ «չնչաւոր մարդը Աստուծոյ Հոգիին բաները չընդունիր, ինչու որ անոնք իրեն յիմարութիւն են, ու չկրնար ալ Քրիստոս, ինչու որ հոգեւոր կերպով կը քննուին»։ Ա. Կոր. Բ. 14 : Պարոն Աւետարանիչ, ինչ է Առաքեալին այս Աստուծոյ Հոգիին բաները կոչածը, զորս չնչաւոր մարդը չընդունիր եղբր եւ իրեն յիմարութիւն են, ու չկրնար ալ գիտնալ եղբր, ինչու որ հոգեւոր կերպով կը քննուին, ո՞չ ապաքէն Աստուծոյ խօսքն է այն : «Քանզի խաչին քարոզութիւնը կորսուածներուն յիմարութիւն է»։ Ա. Կոր. Ա. 18 : «Աստուած հաճեցաւ քարոզութեան յիմարութիւնովը հաւատացեալները ապրեցունելու»։ Համար 21 : Մենք այդ հիման վրայ խօսեցանք ի վեր անդ, թէ ըստ որում բանը այդպէս է, Հոգին ինքը գալու է այդ Աստուծոյ խօսքը քարոզողներուն հետ ընկերանալու եւ գործակցելու, որ քարոզուած խօսքը մուտ գտնէ լսողաց մտքին եւ սրտին մէջ, ու հասկրնան զայն եւ ի գործ դնեն :

Պ. Աւետարանիչ կը պնդէ թէ «երբէք այդպիսի օրինակ կամ պատուէր մը չկայ Սուրբ Գրոց մէջ» աղօթք ընելու՝ չհաւատացողաց եւ անգեղջ մեղաւորաց համար : Բայց Սուրբ Գրոց վրայ պարզ

ճանօթութիւն մ'իսկ ունեցող անձ մը կրնայ վճռաբար ըսել թէ Պ. Աւետարանչի այդ խօսքը հասուն խորհուրդի արդիւնք չէ : Զի ո՞չ թէ օրինակ մը կամ սրատուէր մը՝ այլ բազում օրինակք եւ պատուէրք կրնան յառաջ բերուիլ ի Սուրբ Գրոց Պ. Աւետարանչի այդ ըսածը ժխտելու համար : Պ. Աւետարանիչ նախ պէտք էր կարդար սա հետեւեալ բնաբանները Սուրբ Գրոց, եւ այնուհետեւ գրելու ձեռնարկէր ինչ որ սխալ գրէր, բայց ա՞ճապարեր է :

Նոյն ինքն Յիսուս Քրիստոս կը պատուիրէ ըսելով. «Սիրեցէք ձեր թշնամիները, օրհնեցէք ձեզ անիծողները, բարի ըրէք անոնց՝ որ ձեզ կ'ատեն, եւ աղբիւրք բերնուի համար՝ որ յեւ կը շարքին ու կը հաւլածեն» : Մատթ. Ե. 44 : Կը հարցընեմ Պ. Աւետարանիչին, Քրիստոսի հաւատացեալները այս չարչարողներ ու հաւածողները, որոց համար աղօթք ընել կը պատուիրէ Յիսուս Քրիստոս ա՞նչ ալ հաւատացեալ էին, ո՞չ ապաքէն առաւելապէս ուղիղ է ըսել թէ անոնք ա՞նչ ալ հաւատացող էին յաւէտ, զի իրենց այդ ըրածները ճշմարիտ հաւատացելոյ գործ չկրնար լինել :

Թող կարդայ Պ. Աւետարանիչ դարձեալ Պօղոս առաքեալին գրածը առ Տիմոթէոս, յորում աղաչանօք կը պատուիրէ «աղօթք ընել ամեն մարդոց համար. «Ա՛րդ կ'աղաչեմ՝ ամեն բանէն առաջ՝ աղօթք ընել, խնդրուած աղաչանք, գոհութիւն, ամեն մարդոց համար, [ճանաչանք] թաղաւորներուն եւ բոլոր իշխանաւորներուն համար . . . ինչու որ ան է աղէկը ու ընդունելին մեր Փրկիչ Աստուծոյն

առջևը. որ կ'ուզէ թէ ամեն մարդիկ փրկուին՝ ու ճշմարտութիւնը ճանչնալու դան»։ Ա. Տիմ. Բ. 1-4։

Կը հարցնեմ Պ. Աւետարանչին դարձեալ, Պօղոս առաքեալ որ կը պատուիրէ՝ Բրիստոնէից աղօթք, խնդրուածք ու աղաչանք ընել աֆէն ճարտոց համար, Բաբառններուն և Բուրը Էջիմամարներուն համար, բոլոր ասոնք հաւատացեալ էին։ — Ինքնայնոյտ է պատասխանը։

Այս երկու վկայութիւնք իբրեւ օրինակ չհաւատացողներու կամ անդեղը ու քարացեալ սիրտ ունեցող մեղաւորաց համար աղօթք ընելու համար տրուած պատուէրի, բաւական համարելով, մի քանի բնաբանք ալ յառաջ բերենք իբրեւ օրինակք աղօթից վասն անդեղը եւ անհաւատ մեղաւորաց։

Յիսուսի օրինակը խաչին վրայ. «Հայր, թողութիւն տուր ատոնց, (զինք ի խաչ հանողներուն համար կ'ըսէ,) ինչու որ չեն գիտեր ինչ կ'ընեն»։ Դուկ. ԻԳ. 54։

Եւ Ստեփաննոսի օրինակը՝ որ աղօթեց զինք քարկոծողներուն համար, «Տէր, աս մեղքը մի սեպեր ատոնց»։ Գործ. Է. 59։

Միթէ հնար է թողութիւն ընդունիլ, առանց ճշմարիտ զղջման եւ ապաշխարութեան, եւ հնար է ճշմարիտ զղջում եւ ապաշխարութիւն լինել՝ առանց ի մարդ ներգործութեան Հոգւոյն Սրբոյ։ Ուրեմն իրաւունք չունինք ըսել թէ մեղաւորաց մեղքին թողութեանն համար Բրիստոսի եւ Ստեփաննոսի ըրած այս աղօթքները՝ նոյն բանն են մեղաւորաց վրայ Հոգւոյն Սուրբոյ թափուելուն համար մատուցուած աղօթքի հետ։

Դ, ասեւ Պօղոս առաքելոյն օրինակը. «Աստուծմէ կը խնդրէի՝ որ թէ՛ քիչով եւ թէ՛ շատով՝ չէ թէ մեռակ քոսն (Ագրիպաս արքայ,) հապա աֆէնն ու՛ որ այսօր ինծի կը լսեն, անոն ըլլան խորոք որ ես եմ, աս կապերէս ի զատ»։ Գործ. ԻԶ. 29։ Ա. Կոր. Է. 7։

«Եղբայրներ՝ իմ սրտիս փափաքը ու աղջկը տուարտա՞՛՛ն անոնց (Իսրայէլի) ճշմարտեան համար է»։ Հռովմ. Ժ. 1։

«Երբոր մեզ կը նախատեն՝ կ'օրհնենք»։ Ա. Կոր. Գ. 12։ Կարդան նաեւ Ա. Պետ. Գ. 9։ Ա. Թագ. ԺԲ. 25, եւ այլն։

Կը յուսանք թէ Պ. Աւետարանիչ հիմա կը տեսնէ իւր ըսածին սխալ ըլլալը, ու խօսքը ետ կ'առնու, իւր ակնկալութեան հակառակ հաստատել ջանացածին ընդգէմ այսչափ պատուէրներ եւ «օրինակ»ներ կենալուն համար Սուրբ Գրոց մէջ՝ ի նպատակ անդեղը եւ անապաշխար ու անհաւատ մեղաւորաց համար աղօթք ընելու։

Պարոն Աւետարանիչ, ներեցէ՛ք ձեզի հարցում մը եւս ընեմ. Միթէ հակասութիւն գործած չէ՞ր լինեք Բրիստոս իւր անձին դէմ, եւ իւր առաքեալք ալ իրեն անհնազանդ գտնուած չէ՞ն ըլլար, եթէ ձեր հասցածին կամ մեկնա՞նք պէս՝ Բրիստոս ըսել ուզեր որ անդեղը ու չհաւատացող մեղաւորաց համար աղօթք ընելու չէ, քանի որ ինք եւ իւր առաքեալք ըրին աղօթք անդեղը ու անհաւատ մեղաւորաց համար։

Բայց մենք ունենալով մեր առջևը «օրինակ» եւ «պատուէր» աղօթելու վասն աշխարհի, եւ բաց

աստի՝ մեր դիրքին ալ յոյժ վայելուչ լինելով իբրեւ Քրիստոնեայք՝ որ Աստուծոյ խօսքը խօսինք ամենուն՝ որոց որ կրնանք, մանաւանդ որ պարտական ենք, եւ որ, խօսքը միայն մեր՝ անոնց խօսելովը բանը չկրնալ լմնալուն քաջ վերահասու լինելով, եւ զգալով Աստուծոյ Հոգւոյն պէտքը իբրեւ անձրեւ յերկնից՝ որ իջնէ կենաց բանին սերմանեացը վրայ, մեծ կարեւորութիւն կը տեսնենք եւ նա՛ մանաւանդ պարտաւորութիւնն զմեզ կը ստիպէ որ ազօթք ընենք առ Աստուած, խնդրելով եւ թախանձագին պաղատելով որ իւր Հոգւոյն չնորհքը զրկէ ո՛չ միայն մեր անձանց եւ մերայնոց վրայ՝ այլ եւ բոլոր մարդոց վրայ առ հասարակ, թէ՛ անոնց վրայ՝ որոց հետ խօսելու կամ առնչութիւն ընելու պատեհութիւնն ունինք, եւ թէ՛ մենէ՛ հեռի եւ մեզ դժուարամտչելի այն բիւրաւոր եւ միլիոնաւոր անմահ հոգւոց վրայ, որք, գիտենք թէ՛ առանց նորա երկնատեղաց հոգեւոր անձրեւոյն եւ խմանալի արեգակնային լոյսին ջերմացուցիչ եւ կենդանարար ճառագայթիցը կարող չեն տեսնել ճշմարտութիւնը, ո՛չ զգալ անոր զօրութիւնը, ո՛չ տեսնել իրենց անկեալ ու թշուառ վիճակը, ո՛չ զղջալ ու ապաշխարել ճշմարտիւ՝ իրենց մեղաց վրայ, ո՛չ դառնալ իրենց չար ճամբաներէն եւ ոչ հաւատալ ի Յիսուս Քրիստոս Փրկիչն ամենից:

Մտքերնիս այն չէ՛ր որ գրութիւնս այսչափ երկար ընէինք, եւ ո՛չ ալ նպատակնիս էր գրել զայս իբրեւ պատասխանի կամ քննադատութիւն ամենայն անտեղութեանց եւ սխալ վարդապետութեանց որ կը գտնուին Պ. Աւետարանիչի տետրա-

կաց մէջ: Եւ ուստի այսչափս բաւական համարելով վախճան կու տանք մեր խօսից, աղաչանօք յորդոր կարդալով աղնիւ ընթերցողացս, որ լաւ միտ դնեն Սուրբ Գրոց յայտնեալ ճշմարտութեանց եւ ի վերին երեսս ու հարեւանցի չնային անոնց վրայ: Եւ կը յորդորենք խոնարհարար մեր Քրիստոնեայ հասարակութիւնն համօրէն, որ մշակեն իրենց միտքը օգտակար հրահանգօք եւ զայն Սուրբ Գրոց ուսմանը տան, ճշմարտութեան ապացուցից մեծ կարեւորութիւն ընծայեն, ու բնաւ զոհ չլինին իրենց նախնեաց, ծնողաց կամ եկեղեցականաց աւանդած կրօնքն եւ անոր վարդապետութիւնքն սոսկ՝ միամտաբար ընդունելով կամ դաւանելով զայնս, այլ աղնիւ Բերիացւոց նման «ամեն օր գրքերը քննեն թէ այս բաները ասանկ է»: (Գործ. Ժ. 11) եւ այս կերպով հմտանան Աստուածային Պատգամաց «ողջամիտ վարդապետութեանցն», («ամեն բան փորձեն ու բարին ամուր բռնեն»), (Ա. Թես. Ե. 21), եւ «մէջբերնին ճշմարտութեամբ ամուրցունելով» (Եփես. 2. 14) «պատրաստ ըլլան հեզութեամբ պատասխան տալու ամենուն, որ իրենց ունեցած յոյսին պատճառը կը հարցունեն»: (Ա. Պետ. Գ. 15) Եթէ՛ ո՛չ պատրաստ որս պիտի լինին ամեն նոր ու եւանդուն քարոզչի մեքենայութեանց, ո՛վ որ լինի նա, ինչ յարանուանութենէ՛ կամ աղանդէ՛ որ ըլլայ, եւ վտանգ կայ որ կրօնք կրօնքի ետեւէ՛ փոխելու այսպանելի ընթացքին մէջ պիտի լինան, յամենայնի անհաստատ եւ անվստահ լինելով, եւ իբրեւ տղայք երերած ու վարդապետութեանց ամեն հովերէն ասդին անդին

տարուբերուած մարդոց խաբէութիւնովը, որ խորամանկութեամբ կը խաբեն մտորցունելու: Եփես. Գ. 14:

Կը յառաջակայէնք զայս մեր փանաքի գրուած համազգի ազնիւ հասարակութեան, իբրեւ թեւադիր եւ յորդոր՝ ճշմարտութիւնը որոնելու եւ խուզարկելու աչալուրջ զգուշութեամբ, մազթելով միանգամայն երկնից անհրաժեշտ եւ հզոր ձեռնառութիւնն, որ յաջողութիւն շնորհէ նոցա՝ դանել զճշմարտութիւն, հասկընալ եւ ընդունիլ զայն եւ յարատեւելի նմին՝ եւ հասնիլ անոր վախճանին, Յաւիտենական կենաց, ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, որ է «Ճանապարհ եւ ճշմարտութիւն եւ կեանք»: Յովհ. ԺԳ. 6:

Վ Ե Ր Զ

Վ Ե Ր Պ Ա Կ Ք

Երես	Տող	Վերիպակ	Ուղղեալ
49	30	բանին	բանիւ
40	47-48	կը - սէր	կը - սէ.
44	21	իրեն	իրին
48	17	կը կոչուին	կը խաչուին
52	21	լուսումը	լուացումը
105	4	նախախտանաց	նախատանաց
120	12	կալ	կամ
136	28	(76—83)	(111—122)

APPENDIX

Year	Month	Day	Time
1870	Jan	1	10:00
1870	Jan	2	10:00
1870	Jan	3	10:00
1870	Jan	4	10:00
1870	Jan	5	10:00
1870	Jan	6	10:00
1870	Jan	7	10:00
1870	Jan	8	10:00
1870	Jan	9	10:00
1870	Jan	10	10:00
1870	Jan	11	10:00
1870	Jan	12	10:00
1870	Jan	13	10:00
1870	Jan	14	10:00
1870	Jan	15	10:00
1870	Jan	16	10:00
1870	Jan	17	10:00
1870	Jan	18	10:00
1870	Jan	19	10:00
1870	Jan	20	10:00
1870	Jan	21	10:00
1870	Jan	22	10:00
1870	Jan	23	10:00
1870	Jan	24	10:00
1870	Jan	25	10:00
1870	Jan	26	10:00
1870	Jan	27	10:00
1870	Jan	28	10:00
1870	Jan	29	10:00
1870	Jan	30	10:00
1870	Jan	31	10:00





~~Wm. M. M.~~

~~Wm. M. M.~~

Wm. M. M.